ՊՕՖՀ (PEFA)

Պետական ծախսեր և ֆինանսական հաշվետվողականություն

Dπpenses publiques et responsabilitπ financiΠre

Պետական ֆինանսների կառավարում

Կատարողականի չափման ծրագիր

2005թ. հունիս

Վերահրատարակվել է 2006թ. մայիսին

ՊՕՖՀ-ի Քարտուղարություն
Համաշխարհային բանկ
Վաշինգտոն
ԱՄՆ

ՊՕՖՀ-ը բազմակողմ գերատեսչական գործընկերության ծրագիր է, որը հովանավորում են.

Համաշխարհային բանկը
Արժույթի միջազգային հիմնադրամը
Եվրոպական հանձնաժողովը
Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման դեպարտամենտը
Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունը
Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարությունը
Շվեյցարիայի Տնտեսական հարցերի պետական քարտուղարությունը
Աֆրիկայի ռազմավարական գործընկերությունը

ՊՕՖՀ-ի Քարտուղարության կոնտակտային տվյալները.

Ֆրանս Ռոնշոլտ՝ fronsholt@worldbank.org

Ֆաքս՝ (+1) 202 522 7132
www.pefa.org

Նախաբան

Լայնորեն ընդունված է այն, որ պետական ֆինանսների կառավարման (ՊՖԿ) արդյունավետ հաստատություններն ու համակարգերը հանգուցային նշանակություն ունեն ազգային զարգացման և աղքատության կրճատման քաղաքականությունների իրականացմանն աջակցելու խնդրում: ՊՕՖՀ-ի Պետական ֆինանսների կառավարման կատարողականի չափման սույն ծրագրի մշակումը նույնպես ավանդ է ՊՖԿ-ի հիմնական համակարգերի գնահատման ու մշակման ուղղությամբ շահագրգիռ շատ մասնակիցների կողմից ձեռնարկվող հավաքական ջանքերում: Այն ապահովում է ՊՖԿ-ի կատարողականի ընթացքի չափման ու մոնիտորինգի համար նախատեսվող ընդհանուր տեղեկատվություն, ինչպես նաև ընդհանուր հարթակ երկխոսության համար: Ծրագրի մշակումը նախաձեռնվել է Պետական ծախսերի աշխատանքային խմբի կողմից, որի կազմում ընդգրկված են Համաշխարհային բանկի, ԱՄՀ-ի և ՊՕՖՀ-ի ներկայացուցիչներ, իսկ նրա աշխատանքների ուղղորդումն իրականացնում է ՊՕՖՀ-ի Ղեկավար հանձնաժողովը:

ՊՕՖՀ-ի Պետական ֆինանսների կառավարման կատարողականի չափման ծրագիրն իր մեջ ներառում է ՊՖԿ-ի կատարողականի հաշվետվություն և մի խումբ բարձր մակարդակի ցուցանիշներ, որոնք մշակվել են՝ հաշվի առնելով HIPC ծախսերի գրանցման հենանիշները, ԱՄՀ-ի Ֆիսկալ թափանցիկության ձեռնարկը և այլ միջազգային ստանդարտներ: Այն հանդիսանում է ՊՖԿ-ի բարեփոխման աջակցմանն ուղղված «Ամրապնդված մոտեցման» մի մասը, որտեղ շեշտադրում է կատարվում երկրի կողմից վարվող բարեփոխման, դոնոր կազմակերպությունների աշխատանքների ներդաշնակեցման և երկրի ռազմավարության հետ նրա համապատասխանեցման, ինչպես նաև մոնիտորինգի ու արդյունքների վրա: Նշված մոտեցման նպատակն է համախմբել որոշ երկրների կողմից արդեն ձեռք բերված օրինակելի փորձը:

Ծրագիրը մշակվել է միջազգային համաձայնեցված ջանքերի արդյունքում, այլ ոչ՝ մեկ առանձին գործակալության կողմից և լայնորեն քննարկվել է և փորձարկվել երկրի մակարդակում: Ծրագրի 2004թ. փետրվարի 12-ի նախագիծը կիրառվել է 24 երկրների օրինակների վրա՝ գլխավորապես կամերալ վարժությունների միջոցով: Տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, ներառյալ ՊՖԿ-ի վերաբերյալ ՁԱԿ-ի համատեղ ձեռնարկումը, որի կազմում էին աֆրիկյան ՊՖԿ-ի փորձագետներ, Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրների կառավարությունների ներկայացուցիչներ: Կարծիքներ են ստացվել նաև Համաշխարհային բանկի, ԱՄՀ-ի մասնագետների և ՊՕՖՀ-ի այլ գործընկերների, պետական մարմինների ու մասնագիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Նշված կարծիքների շնորհիվ կատարվել են բարելավումներ ու հստակեցումներ, որից հետո Ծրագիրը վերջնական տեսքի է բերվել: Բարելավումները ներառում են եկամուտների հավաքագրման համակարգերի և միջ-կառավարական ֆիսկալ հարաբերությունների բնագավառում ծածկույթի ընդլայնումը: Այդ իսկ պատճառով համապատասխան ցուցանիշները չեն փորձարկվել այն նույն խորությամբ, որ բնորոշ է եղել խմբի մնացած ցուցանիշների փորձարկմանը: Ծրագրի կիրառումից քաղված առաջին դասերը պարզ կդառնան 2006թ. իրականացվելիք ուսումնասիրման արդյունքում:

ՊՕՖՀ-ի ծրագիրը գոհունակությամբ է հրապարակում ՊՕՖՀ-ի ՊՖԿ-ի կատարողականի չափման ծրագիրը: Ծրագրի և «Ամրապնդված մոտեցման» մասին լրացուցիչ տեղեկությունները զետեղված են ՊՕՖՀ-ի ինտերնետային կայքում՝ www.pefa.org :

Բովանդակության ցանկ

	էջ
1. Ներածություն և նախապատմություն	6
2. Ծրագրի շրջանակներն ու ծածկույթը	6
3. Կատարողականի բարձր մակարդակի ցուցանիշների խումբը	10
4. ՊՖԿ-ի կատարողականի հաշվետվությունը	11
5. Կատարողականի չափման ծրագրի ընդհանուր կառուցվածքը	13
Հավելված 1. ՊՖԿ-ի կատարողականի բարձր մակարդակի ցուցանիշների խումբը	14
Հավելված 2. ՊՖԿ-ի կատարողականի հաշվետվությունը	80

Հապավումների ցանկ

ԿԻԳ - Կառավարության ինքնուրույն գործակալություններ
«CGAF» - Compte GՈՈral de l'Administration des Finances
ԿԳԴ - Կառավարության գործառույթների դասակարգում
ԶԱԿ – ՏՀԶԿ-ի Զարգացման աջակցության կոմիտե
ԿՖՎ – Կառավարության ֆինանսական վիճակագրություն
ԱՀՄՍԽ - Աուդիտի և հավաստման միջազգային ստանդարտների խորհուրդ
ՀՄԴ - Հաշվապահների միջազգային դաշնություն
«IGF» - Inspection GՈՈrale des Finance
ԻՆՏՈՍԱՅ - Գերագույն ատյանի աուդիտի հաստատությունների միջազգային կազմակերպություն
ԻՊՍԱՍ – Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՄԴ)
ՆԱՄԳՍ - Ներքին աուդիտորների մասնագիտական գործունեության ստանդարտներ
ՆԳԳ - Նախարարություններ, գերատեսչություններ և գործակալություններ
ՖՆ - Ֆինանսների նախարարություն
ՏՀԶԿ – Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՊՖԿ - Պետական ֆինանսների կառավարում
ՊՖԿ- ԿՀ – ՊՖԿ-ի կատարողականի հաշվետվություն
ԿՑ – Կատարողականի ցուցանիշ
ՊՁ – Պետական ձեռնարկություն
ԵՎ - Եկամուտների վարչարարություն
ԳԱԱՀ - Գերագույն ատյանի աուդիտի հաստատություն
ՏԿՄ - Տեղական կառավարման մարմիններ (կառավարություն)
ԱՄՆԴ - ԱՄՆ դոլար

ՊՖԿ-ի կատարողականի չափման ծրագիրը

1. Ներածություն և նախապատմություն

ՊՖԿ-ի Կատարողականի չափման ծրագիրը մոնիտորինգի միասնական ծրագիր է, որը թույլ է տալիս չափել երկրի ՊՖԿ-ի կատարողականը ժամանակի ընթացքում: Այն մշակվել է ՊՕՖՀ-ի գործընկերների կողմից, ՏՀԶԿ/ԶԱԿ-ի ՊՖԿ-ին նվիրված համատեղ ձեռնարկման հետ միասին, որպես մի գործիք, որը կապահովի հուսալի տեղեկատվություն ժամանակի ընթացքում ՊՖԿ-ի համակարգերի, գործընթացների և հաստատությունների կատարողականի մասին: Ծրագրի շնորհիվ ստացվող տեղեկատվությունը նաև կարող է օգտակար լինել կառավարության բարեփոխումների գործընթացում՝ թույլ տալով որոշել, թե որքանով են բարեփոխումներն ապահովում բարելավված կատարողական և զարգացնելով բարեփոխումների հաջողությունները բացահայտելու և դասեր քաղելու ունակությունը: Այն նաև կխթանի ՊՖԿ-ի կատարողականի չափման ընդհանուր ծրագրի շուրջ կառավարության և դոնոր կազմակերությունների միջև երկխոսության ներդաշնակեցումը և, հետևաբար, կնպաստի գործընկեր կառավարությունների համար գործառնությունների հետ կապված ծախսերի կրճատմանը:

ՊՖԿ-ի Կատարողականի չափման ծրագիրը ՊՖԿ-ի բարեփոխումների աջակցմանն ուղղված «Ամրապնդված մոտեցման» տարրերից մեկն է[1]: Այն նախատեսված է զարգացման տարբեր փուլերում գտնվող երկրների ՊՖԿ-ի կատարողականը ժամանակի ընթացքում գնահատելու համար: Կատարողականի չափման ծրագիրը ներառում է **բարձր մակարդակի ցուցանիշների խումբ**, որի միջոցով չափվում և մոնիտորինգի են ենթարկվում ՊՖԿ-ի համակարգերը, գործընթացները և հաստատությունները: Այն ընդգրկում է նաև **ՊՖԿ-ի Կատարողականի հաշվետվությունը (ՊՖԿ-ԿՀ)**, որն ապահովում է ցուցանիշների միջոցով գնահատված ՊՖԿ-ի կատարողականի մասին զեկուցելու շրջանակներ:

2. Ծրագրի շրջանակները և ծածկույթը

ՊՖԿ-ի գործուն համակարգը հանգուցային նշանակություն ունի քաղաքականությունների իրականացման և զարգացման նպատակների

---

[1] Ամրապնդված մոտեցումն ունի երեք բաղադրիչ. (i) երկրի նախաձեռնությամբ իրականացվող ՊՖԿ-ի բարեփոխման ռազմավարություն և գործողությունների ծրագիր, (ii) IFI-ի և դոնոր կազմակերպությունների համակարգված, միասնական, բազմամյա ՊՖԿ-ի աշխատանք, որն աջակցում է կառավարության ՊՖԿ-ի բարեփոխման ռազմավարությանը և համապատասխանեցված է վերջինիս և (iii) տեղեկատվության համատեղ կենտրոն: Կատարողականի չափման ծրագիրը երրորդ նպատակի իրագործման միջոցներից մեկն է:

իրագործման համար՝ աջակցելով ընդհանուր ֆիսկալ կարգապահությանը, ռեսուրսների ռազմավարական տեղաբաշխմանը և ծառայությունների արդյունավետ մատուցմանը: Բաց և կարգավորված ՊՖԿ-ի համակարգը բյուջետային արդյունքների երեք մակարդակներն ապահովող տարրերից մեկն է.

- Բյուջեի հանրագումարային ցուցանիշների նկատմամբ արդյունավետ հսկողությունները և ֆիսկալ ռիսկերի կառավարումը նպաստում են ընդհանուր ֆիսկալ կարգապահության պահպանմանը:
- Կառավարության սահմանած առաջնահերթությունների համաձայն բյուջեի ծրագրումն ու կատարումը նպաստում են կառավարության նպատակների իրականացմանը:
- Բյուջեով նախատեսվող միջոցների օգտագործման կառավարումը նպաստում է ծառայությունների արդյունավետ մատուցմանը և դրամի դիմաց արժեքի ապահովմանը:

Կատարողականի չափման ծրագիրը սահմանում է **բաց և կարգավորված ՊՖԿ-ի համակարգի կատարողականի էական չափումները** հետևյալ կերպ[2].

1. **Բյուջեի հավաստիություն.** բյուջեն իրատեսական է և կատարվում է նախատեսվածի համաձայն:
2. **Համապարփակություն և թափանցիկություն.** բյուջետային և ֆիսկալ ռիսկի նկատմամբ հսկողությունը համապարփակ է, իսկ հարկաբյուջետային և բյուջետային տեղեկատվությունը հասանելի է հանրությանը:
3. **Քաղաքականություն և բյուջետավորում.** բյուջեն կազմվում է՝ պատշաճ կերպով հաշվի առնելով կառավարության վարած քաղաքանությունը:
4. **Կանխատեսելիություն և հսկողություն բյուջեի կատարման մեջ.** բյուջեն կատարվում է կարգավորված և կանխատեսելի ձևով, գործում են մեխանիզմներ հանրային միջոցների օգտագործումը կառավարելու և վերահսկելու համար:
5. **Հաշվապահական հաշվառում, գրանցում և հաշվետվություններ.** Որոշումների կայացման նկատմամբ հսկողության, կառավարման և հաշվետվական նպատակների համար կազմվում, վարվում և բացահայտվում են համարժեք գրանցումներ և տեղեկատվություն:
6. **Արտաքին ուսումնասիրում և աուդիտ.** գործում են գործադիր մարմնի կողմից պետական ֆինանսների ուսումնասիրման և վերահսկողության մեխանիզմներ:

[2] Այս հիմնական չափումները որոշվում են այն սկզբունքով, թե ինչն է ցանկալի և հնարավոր չափել՝ սահմանելով ՊՖԿ-ի համակարգի այն հիմնական տարրերի բնույթն ու որակը, որոնք արտացոլվում են բարձր մակարդակի ցուցանիշների խմբի միջոցով:

ՊՖԿ-ի կատարողականի վեց հիմնական չափումների հիման վրա բարձր մակարդակի ցուցանիշների խմբի միջոցով չափվում է երկրի կենտրոնական կառավարության, օրենսդիրի և արտաքին աուդիտի **ՊՖԿ-ի համակարգերի, գործընթացների և հաստատությունների առանցքային տարրերի գործառնական կատարողականը**: Ի լրումն, ՊՖԿ-ի կատարողականի վեց հիմնական չափումների հիման վրա ՊՖԿ-ի համակարգի միասնական գնահատականը որոշելու և բյուջետային արդյունքների երեք մակարդակների վրա ՊՖԿ-ի թույլ կողմերի հնարավոր ազդեցությունը գնահատելու նպատակով, ՊՖԿ-ի ԿՀ-ում կատարվում է ցուցանիշների վրա հիմնվող վերլուծություն:

Բարձր մակարդակի ցուցանիշների խումբն արտացոլում է ՊՖԿ-ի առանցքային տարրերը, որոնք կենսական նշանակություն ունեն հանրային ֆինանսների հուսալի կառավարման հասնելու խնդրում բոլոր երկրների համար: Որոշ երկրներում ՊՖԿ-ի ԿՀ-ը կարող է ներառել նաև տվյալ երկրներին բնորոշ առանձնահատկությունների գնահատակները: Սրա նպատակն է ապահովել ՊՖԿ-ի կատարողականի համապարփակ պատկերը:

Ակնկալվում է, որ ցուցանիշների գործիքի պարբերական կիրառման շնորհիվ կստացվի տեղեկատվություն այն մասին, **թե որքանով է բարելավվել երկրի ՊՖԿ-ի կատարողականը**: Բացի այդ, ՊՖԿ-ի ԿՀ-ը արտացոլում է ՊՖԿ-ի համակարգի բարեփոխմանն ուղղված կառավարության ջանքերը՝ նկարագրելով բարեփոխումների վերջին ու ընթացիկ միջոցառումները, որոնց ազդեցությունը ՊՖԿ-ի կատարողականի վրա կարող է դեռևս նկատելի չլինել: Հաշվետվությունը, ինչևէ, չի ներառում բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններ կամ ՊՖԿ-ի կատարողականի վրա ընթացիկ բարեփոխումների հնարավոր ազդեցության վերաբերյալ ենթադրություններ:

ՊՖԿ-ի կատարողականի ցուցանիշների խումբն արտացոլում է կենտրոնական կառավարության, այդ թվում վերահսկողության համապատասխան հաստատությունների մակարդակում պետական ֆինանսների կառավարումը: Կենտրոնական կառավարությունը բաղկացած է նախարարությունների ու գերատեսչությունների կենտրոնական խմբից (իսկ որոշ դեպքերում՝ ապակենտրոնացված միավորներից, օրինակ՝ գավառային կառավարման մարմիններից), որոնք մտնում են ինստիտուցիոնալ մեկ միավորի կազմում: Շատ երկրներում այլ միավորներ գործում են կենտրոնական կառավարության ենթակայության տակ առանձին իրավաբանական անձի կարգավիճակով և գործունեության զգալի ինքնուրույնությամբ (որոնք սույն փաստաթղթում կոչվում են Կառավարության ինքնուրույն գործակալություններ)՝ միաժամանակ պատկանելով կենտրոնական կառավարության հատվածին: Նշված միավորները կարող են ներառել շահույթի նպատակ չհետապնդող կազմակերպությունները, որոնք վերահսկվում և գլխավորապես ֆինանսավորվում են կենտրոնական կառավարության կողմից, իսկ նրանց գործունեությունը ուղղված է կենտրոնական կառավարության քաղաքականության իրականացմանը:

Ընդհանուր կառավարության այլ մակարդակների և պետական ձեռնարկությունների գործունեությունը քննության է առնվում ՊՖԿ-ի կառարողականի ցուցանիշների խմբում միայն այնքանով, որքանով այն ազդում է ՊՖԿ-ի ազգային համակարգի կատարողականի, ինչպես նաև կենտրոնական կառավարության կողմից ձևավորվող և վերահսկվող ազգային ֆիսկալ քաղաքականության հետ կապերի վրա (տես կետեր «PI-8», «PI-9» և «PI-23»): Ընդհանուր կառավարության այլ մասերը ներառում են հաշվետվողականության առանձին մեխանիզմներ և ՊՖԿ-ի սեփական համակարգեր (օր.՝ բյուջեներ ու հաշվապահական հաշվառման համակարգեր) ունեցող ավելի ցածր մակարդակներ: Նշված տեղական կառավարման մարմինները կարող են ներառել ավելի բարձր մակարդակում նահանգային, գավառային և շրջանային կառավարությունը, իսկ ավելի ցածր մակարդակում՝ տեղական կառավարությունը (ներառյալ համայնքները): Ի լրումն ընդհանուր կառավարության, հանրային հատվածում են ընդգրկվում նաև պետական կորպորացիաները կամ ձեռնարկությունները, որոնք ստեղծվում են շուկային ապրանքներ ու ծառայություններ տրամադրելու նպատակով և գործում են կառավարության միավորների ենթակայության տակ: Պետական կորպորացիաները կարող են լինել ոչ ֆինանսական կամ ֆինանսական: Ֆինանսական պետական կորպորացիաները ներառում են դրամավարկային կորպորացիաները, օրինակ՝ կենտրոնական բանկը[3]: Կառավարության այլ մակարդակների և պետական ձեռնարկությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը կարող է ներառվել ՊՖԿ-ի ԿՀ-ի առումով երկրներին բնորոշ առանձնահատկություններին նվիրված բաժնում:

Ցուցանիշների խումբը հիմնականում վերաբերում է կենտրոնական կառավարության բյուջեով իրականացվող եկամուտներին ու ծախսերին: Այնուամենայնիվ, բյուջեից դուրս իրականացվող կենտրոնական կառավարության գործունեությունը որոշ չափով արտացոլվում է ցուցանիշներ «PI-7»-ում, «PI-9»-ում, «PI-26»-ում և «D-2»-ում: Սովորաբար այն ներառում է այն ծախսերը, որոնք իրականացվում են կենտրոնական կառավարության միավորների կողմից և ֆինանսավորվում են նպատակային եկամտային աղբյուրներից (ներքին կամ արտաքին, որտեղ արտաքին աղբուրներից ստացվող եկամուտները հաճախ միայն անվանականորեն են ներառվում բյուջեում), ինչպես նաև կառավարության ինքնուրույն գործակալությունների կողմից իրականացվող ծախսերը:

Կատարողականի չափման ծրագրի միջոցով չեն գնահատվում **կատարողականի վրա ազդող գործոնները**, ինչպիսիք են իրավական դաշտը կամ կառավարությունում առկա կարողությունները: Մասնավորապես, բարձր մակարդակի ցուցանիշների խումբն ավելի շատ վերաբերում է ՊՖԿ-ի համակարգի առանցքային տարրերի գործառնական կատարողականին, քան այն ծախսերին, որոնց շնորհիվ ՊՖԿ-ի համակարգը կարողանում է հասնել

[3] Հանրային հատվածի և նրա ենթամասերի սահմանման մանրամասները տես ԿՖՎ-ի ձեռնարկի պարբերություններ 2.9-2.62-ում (Կառավարության ֆինասների վիճակագրության ձեռնարկ, ԱՄՀ 2001)

կատարողականի որոշակի մակարդակի:

Կատարողականի չափման ծրագիրը չի ենթադրում **ֆիսկալ կամ ծախսային քաղաքականության վերլուծություն**, որի նպատակն է պարզել, թե արդյո՞ք ֆիսկալ քաղաքականությունը կայուն է, բյուջեի հաշվին կատարված ծախսերն ապահովե՞լ են ցանկալի արդյունքը կամ ծառայությունների մատուցման մեջ ապահովվե՞լ է դրամի դիմաց արժեքը: Սրա համար պահանջվում է տվյալների մանրամասն վերլուծություն կամ երկրին բնորոշ ցուցանիշների կիրառում: Ծրագիրն ավելի շատ կոչված է գնահատելու, թե որքանով է **ՊՖԿ-ը նպաստում նշված արդյունքների իրագործմանը**:

3. Կատարողականի բարձր մակարդակի ցուցանիշների խումբը

Երկրի ՊՖԿ-ի համակարգի ընտրված 28 ցուցանիշները բաժանվում են երեք կատեգորիայի.

Ա. **ՊՖԿ-ի համակարգի արդյունքները**. սրանք արտացոլում են ՊՖԿ-ի համակարգի անմիջական արդյունքները, այն է՝ փաստացի ծախսերն ու եկամուտները, համեմատելով դրանք սկզբնական հաստատված բյուջեի հետ, ինչպես նաև ծախսային ապառքների մակարդակն ու փոփոխությունները:

Բ. **ՊՖԿ-ի համակարգի համակողմանի հատկանիշները.** սրանք արտացոլում են ՊՖԿ-ի համակարգի համապարփակությունը և թափանցիկությունը բյուջետային բոլորաշրջանի ողջ ընթացքում:

Գ. **Բյուջետային բոլորաշրջան.** սա արտացոլում է բյուջետային բոլորաշրջանում կենտրոնական կառավարության հիմնական համակարգերի, գործընթացների և հաստատությունների կատարողականը:

Ի լրումն երկրի ՊՖԿ-ի կատարողականի ցուցանիշների, ծրագիրը ներառում է նաև հետևյալը.

Դ. **Դոնորների փորձը.** սա արտացոլում է դոնոր կազմակերպությունների փորձի այն տարրերը, որոնք ազդում են երկրի ՊՖԿ-ի համակարգի կատարողականի վրա:

Առանձին ցուցանիշների ամբողջական ցանկը ներկայացվում է Հավելված 1-ի սկզբում:

Ստորև գծապատկերում ցույց են տրվում ՊՖԿ-ի համակարգի կառուցվածքն ու

ծածկույթը՝ գնահատված բարձր մակարդակի ցուցանիշների խմբի միջոցով, ինչպես նաև ՊՖԿ-ի համակարգի վեց չափումները.



Յուրաքանչյուր ցուցանիշի միջոցով չափվում է ՊՖԿ-ի հիմնական տարրերից որևէ մեկի կատարողականը՝ չորս միավորի բաժանված Ա-ից մինչև Դ-ը հաջորդական սանդղակի հիման վրա: Ուղեցույցներ են մշակվել այն մասին, թե ամեն ցուցանիշի համար ինչ կատարողական է համապատասխանում յուրաքանչյուր միավորին: Ամենաբարձր միավորը նշանակվում է առանձին ցուցանիշին, եթե ՊՖԿ-ի հիմնական տարրն ամբողջապես, կարգավորված, ստույգ, համակարգված ձևով ու ժամանակին ապահովում է համապատասխան նպատակը: Այդ իսկ պատճառով բարձր մակարդակի ցուցանիշների խմբի նպատակն է միջազգային առկա լավագույն փորձի հիման վրա արտացոլել ՊՖԿ-ի համակարգի հիմնական հատկանիշները, այլ ոչ՝ սահմանել ՊՖԿ-ում արված ամենավերջին նորարարությունից բխող ստանդարտներ:

Հավելված 1-ում ներկայացվում է լրացուցիչ տեղեկատվություն դասակարգման և միավորների որոշման մեթոդաբանության մասին, ինչպես նաև նկարագրվում են մանրամասն ուղեցույցներ ցուցանիշներից յուրաքանչյուրի վերաբերյալ:

4. ՊՖԿ-ի կատարողականի հաշվետվությունը

ՊՖԿ-ի Կատարողականի հաշվետվության (ՊՖԿ-ԿՀ) նպատակն է

ցուցանիշների հստակ կառուցված վերլուծության հիման վրա ներկայացնել ՊՖԿ-ի կատարողականի գնահատականը: ՊՖԿ-ի ԿՀ-ում ներկայացվող տեղեկատվությունը հաշվի է առնվում կառավարության ու դոնոր կազմակերպությունների միջև երկխոսության մեջ:

ՊՖԿ-ԿՀ-ը հակիրճ փաստաթուղթ է (30-35 էջանոց), որն ունի հետևյալ կառուցվածքն ու բովանդակությունը.

- **Ամփոփ գնահատականում** (տրվում է հաշվետվության սկզբում) ՊՖԿ-ի կատարողականի վեց հիմնական չափումների հիման վրա երկրի ՊՖԿ-ի միասնական գնահատման համար կիրառվում են ցուցանիշների վերլուծության արդյունքները, ինչպես նաև նկարագրվում է թույլ կողմերի հնարավոր ազդեցությունը բյուջեի արդյունքների երեք մակարդակների, ընդհանուր ֆիսկալ կարգապահության, ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման և ծառայությունների արդյունավետ մատուցման վրա:
- **Ներածական մասում** ներկայացվում է հաշվետվության բովանդակությունը, նրա կազմման գործընթացը և այնտեղ արտացոլված պետական ծախսերի մասնաբաժինը:
- **Բաժիններից մեկում տրվում է երկրին վերաբերող տեղեկատվությունը,** որն անհրաժեշտ է ցուցանիշների հիման վրա ՊՖԿ-ի կատարողականի ընդհանուր գնահատականը ըմբռնելու համար: Այն ներառում է երկրում տիրող տնտեսական վիճակի համառոտ ուսումնասիրումը, ընդհանուր ֆիսկալ կարգապահության ապահովման միջոցով գնահատվող բյուջետային արդյունքների նկարագրությունը և ռեսուրսների ռազմավարական բաշխումը[4], ինչպես նաև տեղեկանք ՊՖԿ-ի իրավական և ինստիտուցիոնալ դաշտի մասին:
- **Հաշվետվության հիմնական տեքստում ցուցանիշների հիման վրա գնահատվում է ՊՖԿ-ի համակարգերի, գործընթացների և հաստատությունների առկա կատարողականը,** և նկարագրվում են կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների վերջին և ընթացիկ միջոցառումները:
- **Կառավարության բարեփոխումների գործընթացին նվիրված բաժնում** ամփոփ նկարագրվում են կառավարության կողմից իրականացված և դեռևս ընթացքում գտնվող բարեփոխումների միջոցառումները, ինչպես նաև գնահատվում են այն ինստիտուցիոնալ գործոնները, որոնք կարող են ապագայում ազդել բարեփոխումների ծրագրման ու իրականացման վրա:

Ինչպես նշվում է վերը, հաշվետվությունը տեղեկանք է ՊՖԿ-ի ընթացիկ կատարողականի մասին և չի ներառում առաջարկություններ բարեփոխումների կամ գործողությունների ծրագրերի մասին: Հաշվետվության եզրակացությունների վերաբերյալ դոնոր կազմակերպությունների ու կառավարության դիրքորոշումների միջև տարբերությունների դեպքում կառավարության կարծիքը կարող է արտացոլվել հաշվետվության հավելվածների բաժնում:

Հավելված 2-ում ներկայացվում են լրացուցիչ տեղեկատվություն և

[4] Տվյալները վերցվում են այլ վերլուծական աշխատանքից:

ուղեցույցներ ՊՖԿ-ի ԿՀ-ի վերաբերյալ:

5. Կատարողականի չափման ծրագրի ընդհանուր կառուցվածքը

Կատարողականի չափման ծրագրի կառուցվածքն ամփոփ ներկայացվում է ստորև.

Կատարողականի չափման ծրագիրը հենվում է Վերլուծական ծրագրի վրա

Կատարողականի չափման ծրագրի միջոցով ստացվող գնահատականը



Հավելված 1

ՊՖԿ-ի բարձր մակարդակի կատարողականի ցուցանիշների խումբը

Հավելված 1
ՊՖԿ-ի բարձր մակարդակի կատարողականի ցուցանիշների խումբը

Ցուցանիշների խմբի ընդհանուր նկարագիրը

	Ա. ՊՖԿ-ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. բյուջեի հավաստիություն
PI-1	Ծախսային ընդհանուր արդյունքներ՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ
PI-2	Ծախսային արդյունքների կառուցվածք՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ
PI-3	Եկամտային ընդհանուր արդյունքներ՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ
PI-4	Պաշարներ և ծախսային ապառքների մոնիտորինգ
	Բ. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՐՑԵՐ. համապարփակություն և թափանցիկություն
PI-5	Բյուջեի դասակարգում
PI-6	Բյուջեի փաստաթղթերում ներառված տեղեկատվության համապարփակություն
PI-7	Կառավարության գործառնություններ՝ չբացահայտված հանրությանը
PI-8	Միջ-կառավարական հարաբերությունների թափանցիկություն
PI-9	Հանրային հատվածի այլ միավորներից բխող ընդհանուր ֆիսկալ ռիսկի նկատմամբ հսկողություն
PI-10	Հարկաբյուջետային հիմնական տեղեկատվության հասանելիություն հանրության համար
	Գ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆ
	Գ(i) Քաղաքականության վրա հիմնվող բյուջետավորում
PI-11	Կարգավորված մոտեցում և մասնակցություն տարեկան բյուջեի գործընթացում
PI-12	Մեկից ավելի տարիների կտրվածքով հարկաբյուջետային ծրագրման, ծախսային քաղաքականության և բյուջետավորման իրականացում
	Գ(ii) Կանխատեսելիություն և վերահսկողություն բյուջեի կատարման մեջ
PI-13	Հարկ վճարողների պարտականությունների ու պարտավորությունների թափանցիկություն
PI-14	Հարկ վճարողների գրանցման և հարկերի գնահատման միջոցառումների արդյունավետություն
PI-15	Հարկային վճարումների հավաքագրման արդյունավետություն
PI-16	Ծախսային պարտավորությունների ստանձնման համար միջոցների առկայության կանխատեսելիություն

PI-17	Դրամական մնացորդների, պարտքի և երաշխիքների գրանցում և կառավարում
PI-18	Աշխատավարձի ֆոնդի հսկողությունների արդյունավետություն
PI-19	Մրցակցություն, արժեք դրամի դիմաց և հսկողություններ գնումների նկատմամբ
PI-20	Ոչ աշխատավարձային ծախսերի նկատմամբ ներքին հսկողությունների արդյունավետություն
PI-21	Ներքին աուդիտի արդյունավետություն
	Գ(iii) Հաշվապահական հաշվառում, գրանցումների վարում, հաշվետվություններ
PI-22	Հաշիվների համադրման ժամկետայնություն և պարբերականություն
PI-23	Ծառայություններ մատուցող միավորների կողմից ստացված միջոցների վերաբարյալ տեղեկատվության առկայություն
PI-24	Տարվա ընթացքում բյուջեի կատարման մասին հաշվետվությունների որակ և ժամկետայնություն
PI-25	Տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակ և ժամկետայնություն
	Գ(iv) Արտաքին ուսումնասիրում և աուդիտ
PI-26	Արտաքին աուդիտի շրջանակներ, բնույթ և հետ-աուդիտային ստուգում
PI-27	Տարեկան բյուջեի մասին օրենքի ուսումնասիրում օրենսդիրի կողմից
PI-28	Արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրում օրենսդիրի կողմից

	Դ. ԴՈՆՈՐՆԵՐԻ ՓՈՐՁ
D-1	Ուղղակի բյուջետային ֆինանսավորման կանխատեսելիություն
D-2	Նախագծերի ու ծրագրերի շրջանակներում տրամադրվող օգնության բյուջետավորման և հաշվետվություններում արտացոլման համար դոնորների կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվություն
D-3	Ազգային ընթացակարգերի կիրառմամբ կառավարվող օգնության մասնաբաժին

Գնահատման մեթոդաբանությունը

Ցուցանիշների մեծ մասն ունի մի շարք չափումներ՝ կապված ցուցանիշի առարկայի հետ: Չափումներից յուրաքանչյուրը պետք է առանձին գնահատվի, որից հետո ցուցանիշին տրվում են ընդհանուր միավորները՝ հիմնվելով նրա առանձին չափումների գնահատականների վրա: Չափումներին նշանակված միավորների համախմբումը մեկ ընդհանուր միավորի տեսքով որոշ ցուցանիշների դեպքում կատարվում է Գնահատման մեթոդ 1-ի (Մ1), իսկ այլ ցուցանիշների դեպքում՝ Գնահատման մեթոդ 2-ի (Մ2) միջոցով: Ցուցանիշների ուղեցույցներում նշվում է, թե ամեն ցուցանիշի համար ո՛ր մեթոդը պետք է կիրառվի:

Մեթոդ 1-ը (Մ1) կիրառվում է եզակի չափում ունեցող ցուցանիշների, ինչպես նաև բազմակի չափումներ ունեցող այն ցուցանիշների դեպքում, որոնց չափումներից որևէ մեկի վատ կատարողականը կարող է բացասաբար անդրադառնալ նույն ցուցանիշի այլ չափումների գծով լավ կատարողականի ազդեցության վրա (այլ կերպ ասած, ցուցանիշի՝ իրար փոխկապված չափումներին միացնող ամենաթույլ օղակի միջոցով): Երկու կամ ավելի չափում ունեցող ցուցանիշների դեպքում ընդհանուր կամ հանրագումարային ցուցանիշը որոշվում է հետևյալ կերպ.

- Յուրաքանչյուր չափում նախնառաջ գնահատվում է առանձին՝ ստանալով միավոր:
- Առանձին չափումների միավորները համախմբվում են՝ ամեն չափմանը նշանակված միավորներից ընտրելով ամենացածրը:
- «+» է ավելացվում այն դեպքում, երբ այլ չափումներից որևէ մեկն ավելի բարձր միավորներ ունի (նշում. ՉԻ կարելի ընտրել բարձր միավոր ունեցող չափումներից որևէ մեկը և ավելացնել «-» ավելի ցածր միավոր ունեցողներ չափումներին: Եվ ՉԻ կարելի ավելացնել «+» այն ցուցանիշի միավորին, որն ունի միայն մեկ չափում):

Մեթոդ 2-ը (Մ2) հիմնվում է ցուցանիշի առանձին չափումներին նշանակված միավորների միջինի որոշման վրա: Այն նախատեսված է մեկից ավելի չափում ունեցող ընտրված ցուցանիշների համար, երբ ցուցանիշի չափումներից մեկին նշանակված ցածր միավորն անպայմանորեն բացասաբար չի անդրադառնում միևնույն ցուցանիշի մեկ այլ չափման բարձր միավորի ազդեցության վրա: Թեև բոլոր չափումները ՊՖԿ-ի համակարգում պատկանում են միևնույն բնագավառին, սակայն առանձին չափումների գծով առաջընթացը կարող է տեղի ունենալ մյուսներից անկախ և առանց որոշակի հաջորդականության տրամաբանորեն հետևելու անհրաժեշտության: Ցուցանիշի ընդհանուր կամ հանրագումարային միավորի որոշումը կատարվում է հետևյալ քայլերի միջոցով.

- Ամեն չափման համար գնահատել, թե ինչ ստանդարտ է սահմանվել չորս-միավորից կազմված դասակարգման սանդղակում (ինչպես Մ1-ի դեպքում):
- Գնահատման մեթոդ 2-ը կիրառելու համար (տես ստորև) բացել

«Փոխարկման աղյուսակը» և գտնել աղյուսակի համապատասխան բաժինները (2, 3 կամ 4 չափումային ցուցանիշներ),

- Աղյուսակում որոշել այն տողը, որը համապատասխանում է միավորների գումարին, որ նշանակվել են ցուցանիշների չափումներին (չափումների միավորների հերթականությունը էական չէ),
- Ընտրել ցուցանիշի համապատասխան ընդհանուր միավորը:

Փոխարկման աղյուսակը վերաբերում է բոլոր այն ցուցանիշներին, որոնց համար նախատեսվում է միայն Մ2-ի գնահատման մեթոդը, քանի որ նրանց նկատմամբ Մ1-ի կիրառումը կհանգեցնի սխալ միավորի նշանակմանը: Փոխարկման աղյուսակը ՉՊԵՏՔ է կիրառվի բոլոր ցուցանիշների կամ նրանց ենթախմբերի միավորների գումարման համար, քանի որ աղյուսակը չի կազմվել այդ նպատակով: Ընդհանուր առմամբ, կատարողականի ցուցանիշների խումբը նախատեսված չէ հանրագումարային արդյունքների որոշման համար և հետևաբար չի մշակվել հանրագումարման մեթոդաբանություն:

Փոխարկման աղյուսակ գնահատման մեթոդ Մ2-ի համար

Միավորներ առանձին չափումների համար			Ընդհանուր միավոր Մ2
Երկչափումային ցուցանիշներ			
D	D		D
D	C		D+
D	B		C
D	A		C+
C	C		C
C	B		C+
C	A		B
B	B		B
B	A		B+
A	A		A
Եռաչափումային ցուցանիշներ			
D	D	D	D
D	D	C	D+
D	D	B	D+
D	D	A	C
D	C	C	D+
D	C	B	C
D	C	A	C+
D	B	B	C+
D	B	A	B
D	A	A	B
C	C	C	C
C	C	B	C+
C	C	A	B
C	B	B	B

Միավորներ առանձին չափումների համար				Ընդհանուր միավոր Մ2
Չորսչափումային ցուցանիշներ				
D	D	D	D	D
D	D	D	C	D
D	D	D	B	D+
D	D	D	A	D+
D	D	C	C	D+
D	D	C	B	D+
D	D	C	A	C
D	D	B	B	C
D	D	B	A	C+
D	D	A	A	C+
D	C	C	C	D+
D	C	C	B	C
D	C	C	A	C+
D	C	B	B	C+
D	C	B	A	C+
D	C	A	A	B
D	B	B	B	C+
D	B	B	A	B
D	B	A	A	B
D	A	A	A	B+
C	C	C	C	C
C	C	C	B	C+
C	C	C	A	C+
C	C	B	B	C+
C	C	B	A	B

C	B	A	B
C	A	A	B+
B	B	B	B
B	B	A	B+
B	A	A	A
A	A	A	A

ՆՇՈՒՄ. Կարևոր չէ, թե ցուցանիշում չափումներն ինչ հաջորդականությամբ են ստանում իրենց անհատական միավորները

C	C	A	A	B
C	B	B	B	B
C	B	B	A	B
C	B	A	A	B+
C	A	A	A	B+
B	B	B	B	B
B	B	B	A	B+
B	B	A	A	B+
B	A	A	A	A
A	A	A	A	A

Աղյուսակը նախատեսված չէ այն ցուցանիշների համար, որոնց նկատմամբ կիրառվում է Մ1-ի մեթոդը:

Ընդհանուր ուղեցույցներ գնահատման վերաբերյալ

Ցուցանիշի որևէ չափման համար նշանակված միավորը հիմնավորելու համար անհրաժեշտ է, որ բավարարվեն գնահատման աղյուսակում տվյալ միավորի համար սահմանված բոլոր պահանջները: Ինչևէ, երբեմն միավորը հնարավոր է հիմնավորել այլընտրանքային պահանջներով, որի դեպքում այլընտրանքներն առանձնացվում են «ԿԱՄ» բառով:

«D» միավորը համարվում է մնացորդային միավոր, որը կիրառվում է ավելի բարձր միավորի պահանջներին չբավարարելու պարագայում: Ցուցանիշի յուրաքանչյուր չափման ճշգրտումը (այսինքն՝ կոնկրետ միավորի նվազագույն պահանջները) ներառում է նաև «D» միավորի պահանջների նկարագրությունը, սակայն լինում են դեպքեր, երբ փաստացի իրավիճակը ողջամտորեն լիովին չի համապատասխանում նկարագրությանը, նույնիսկ երբ բավարարվում են ավելի բարձր միավորի պահանջները: Նման դեպքերում նշանակվում է «D» միավորը, իսկ միավորի պահանջների և փաստացի իրադրության միջև տարբերությունը բացատրվում մեկնաբանության տեսքով:

Միավորի պահանջները կարող են գնահատվել տարբեր ժամանակային հորիզոնների հիման վրա: Այն համապատասխան ժամանակարջանը, որի հիման վրա պետք է գնահատվի չափումը և, հետևաբար, որի համար անհրաժեշտ է ապացույցներ հայթայթել, սահմանվում է շատ ցուցանիշների/չափումների վերաբերյալ ուղեցույցում կամ դասակարգման մեջ: Սահմանված չլինելու դեպքում գնահատումը պետք է կատարվի առկա իրավիճակի հիման վրա, կամ պարբերական իրադարձությունների դեպքում՝ ամենավերջին բյուջետային բոլորաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների հիման վրա:

«PI-1», «PI-2», «PI-3» և «D-1» ցուցանիշների համար որպես գնահատման հիմք պահանջվում են երեք տարվա տվյալներ: Վերջիններս պետք է ընդգրկեն ամենավերջին ֆիսկալ տարին, որի տվյալներն առկա են, և դրան անմիջապես նախորդող երկու տարիները: Գնահատումը հիմնվում է նշված երեք

տարիներից երկուսի կատարողականի վրա[5], այսինքն՝ հաշվի է առնվում այն, որ մեկ տարին արտասովոր է (և չի ազդում միավորի որոշման վրա) այնպիսի արտակարգ իրավիճակների պատճառով, ինչպիսիք են արտաքին ցնցումները (օրինակ՝ բնական աղետները, ներկրվող կամ արտահանվող կարևոր ապրանքների գնային տատանումները) կամ ներքին խնդիրները (օրինակ՝ քաղաքական բնույթի): Քանի որ նման անոմալիաները, ընդհանուր առմամբ, հաշվի են առնվում ճշգրտման մեջ, ոչ մի ֆիսկալ տարի չպետք է բաց թողնվի հիմնական տվյալների խմբում:

Գնահատման մասին լրացուցիչ ուղեցույցները, այդ թվում ամենահաճախ տրվող հարցերի պատասխանները, կզետեղվեն www.pefa.org ինտերնետային կայքում:

Հատուկ ուղեցույցներ յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ

Սույն հավելված 1-ի հետագա բաժիններում ներկայացվում են մանրամասն ուղեցույցներ ցուցանիշներից յուրաքանչյուրի գնահատման, այդ թվում նրա գնահատման աղյուսակների մասին:

Ամեն ցուցանիշի նկարագրական հաշվետվության վերաբերյալ ուղեցույցները տրվում են հավելված 2-ի բաժին 3-ի ներդիրում:

PI-1. Ծախսերի հանրագումարային արդյունքը՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ

Բյուջեով նախատեսվող ծախսը կատարելու ունակությունը կարևոր գործոն է, որը նպաստում է քաղաքականության հայտարարություններում, վերջնական արդյունքների գծով պարտավորություններում և աշխատանքային ծրագրերում ամրագրված հանրային ծառայությունները տվյալ տարում մատուցելու կառավարության ունակության ամրապնդմանը: Ցուցանիշն արտացոլում է սա՝ սկզբնականում բյուջեում նախատեսվող ընդհանուր ծախսերի (որոնք սահմանվում են կառավարության բյուջետային փաստաթղթերում և ֆիսկալ հաշվետվություններում) հետ համեմատության միջոցով չափելով փաստացի ընդհանուր ծախսերի գումարը, սակայն չներառելով ծախսային երկու կատեգորիա, որոնց նկատմամբ կառավարության հսկողությունը ցածր է: Այս կատեգորիաներն են. (ա) պարտքի սպասարկման գծով վճարումները, որոնք կառավարությունը սկզբունքորեն չի կարող փոփոխել տարվա ընթացքում, մինչդեռ դրանք կարող են ենթարկվել փոփոխության տոկոսադրույքների ու փոխարժեքի շարժերի արդյունքում, և (բ) դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ծախսերը, որոնց կառավարումն ու հաշվետվությունները սովորաբար գլխավորապես գտնվում են դոնոր կազմակերպությունների հսկողության տակ:

[5] Բացառությամբ «PI-2» կետում «A» միավորի համար նախատեսվող պահանջների:

Բյուջեով նախատեսված ու փաստացի ծախսերի միջև տարբերության պատճառներն ըմբռնելու համար կարևոր է, որ նկարագրական մասում ներկայացվեն այն արտաքին գործոնները, որոնք հավանաբար հանգեցրել են շեղման առաջացմանը և հատկապես նշվի «PI-3» (ներքին եկամուտներ) և «D-1» (արտաքին եկամուտներ) ցուցանիշների միջոցով արտահայտվող բյուջետային եկամուտների համեմատ շեղումների ազդեցությունը: Կարևոր է նաև հասկանալ, թե ինչ ազդեցություն ունի ընդհանուր ծախսերից շեղումը բյուջեով նախատեսված ծախսերի կառուցվածքն ապահովելու ունակության վրա (տես նաև «PI-2» և «PI-16»):

Գնահատման ենթակա չափումները (գնահատման մեթոդ M1).

(i) Փաստացի առաջնային ծախսերի և բյուջեով նախատեսված առաջնային ծախսերի միջև տարբերությունը (այսինքն՝ հանած պարտքի սպասարկման գծով վճարները, ինչպես նաև չհաշված արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի ծախսերը):

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդ M1)
A	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկում փաստացի ծախսերը շեղվել են բյուջեից, և շեղման գումարը կազմել է բյուջեով նախատեսված ծախսերի ոչ ավելի, քան 5 տոկոսը:
B	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկում փաստացի ծախսերը շեղվել են բյուջեից, և շեղման գումարը կազմել է բյուջեով նախատեսված ծախսերի ոչ ավելի, քան 10 տոկոսը:
C	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկում փաստացի ծախսերը շեղվել են բյուջեից, և շեղման գումարը կազմել է բյուջեով նախատեսված ծախսերի ոչ ավելի, քան 15 տոկոսը:
D	(i) Վերջին երեք տարիներից երկուսում կամ երեքում էլ փաստացի ծախսերը շեղվել են բյուջեից, և շեղման գումարը կազմել է բյուջեով նախատեսված ծախսերի ավելի քան 15 տոկոսը:

PI-2. Ծախսերի արդյունքների կառուցվածքը՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ

Երբ ծախսերի կառուցվածքը զգալիորեն տարբերվում է սկզբնական բյուջեից, ապա բյուջեն այլևս չի ծառայի որպես քաղաքականության նպատակն արտացոլող փաստաթուղթ: Այս ցուցանիշի հիման վրա գնահատում կատարելու համար անհրաժեշտ է ենթա-հանրագումարների մակարդակում կատարել փաստացի ու բյուջեով նախատեսված ծախսերի էմպիրիկ գնահատում: Քանի որ բյուջեն սովորաբար ընդունվում է և կառավարվում գերատեսչական (նախարարություն/գործակալություն) հիմունքով, ապա գնահատման համար գերադասելի է կիրառել գերատեսչական հիմունքը: Միաժամանակ ընդունելի այլընտրանք է գործառական հիմունքը: Գերատեսչական մակարդակում շեղումը հաշվարկվում է ըստ հաստատված բյուջեում ներառված (և ԿՖՎ-ի/ԿԳԴ-ի տաս հիմնական գործառույթների վրա հիմնվող) նախարարությունները, անկախ գերատեսչությունները և

գործակալությունները արտացոլող հիմնական տողային հոդվածների:[6]

Ծախսերի ընդհանուր մակարդակի փոփոխությունները (որոնք գնահատվում են «PI-1»-ում) կվերածվեն գերատեսչական (և գործառական) բյուջետային հոդվածներում արտացոլված ծախսերի փոփոխությունների: Համապատասխան ցուցանիշի («PI-2») միջոցով որոշվում է, թե ծախսերի ընդհանուր մակարդակի փոփոխություններից առաջացող տարբերությունից բացի, հոդվածների միջև վերահատկացումները որքանով են նպաստել ծախսերի կառուցվածքի տարբերության առաջացմանը: Նման գնահատում կատարելու համար անհրաժեշտ է վերջին երեք տարիներից յուրաքանչյուրի համար հաշվարկել ծախսերի կառուցվածքի ընդհանուր շեղումը և համեմատել առաջնային ծախսերի ընդհանուր շեղման հետ:

Շեղումն արտահայտվում է որպես փաստացի և սկզբնական բյուջեով նախատեսված ծախսերի կշռված միջին տարբերություն, որը հաշվարկվում է բյուջետային ծախսերի նկատմամբ տոկոսային հարաբերակցության տեսքով, գերատեսչական կամ գործառական դասակարգման հիման վրա: Հաշվարկի մեջ կիրառվում է շեղման բացարձակ արտահայտությունը:[7] «PI-1»-ում տրվող գնահատականի հետ համադրելիությունն ապահովելու համար հաշվարկից պետք է հանվեն պարտքի սպասարկման վճարումները և դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ծախսերը:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) Այն, թե վերջին երեք տարիներին որքանով է առաջնային ծախսերի կառուցվածքի շեղումը գերազանցում առաջնային ծախսերի ընդհանուր շեղումը (սահմանվում է «PI-1»-ում):

---

[6] Եթե հիմնական գերատեսչական հոդվածների թիվը գերազանցում է 20-ը, ապա շեղումը հաշվարկվում է 20 ամենախոշոր (ըստ գումարի) միավորների կամ բյուջետային ծախսերի 75 տոկոսը ներկայացնող ամենախոշոր միավորների մասով: Մնացած հոդվածների գծով շեղման հաշվարկը պետք է կատարվի հանրագումարային հիմունքով, այսինքն՝ ենթադրելով, որ դրանք կազմում են ընդամենը մեկ հոդված:

[7] Ամեն տարվա համար կատարվող հաշվարկը ներառում է հետևյալ քայլերը («Excel»-ով կազմված աղյուսակը, ինչպես նաև բացատրական օրինակը կարելի է դուրս բերել հետևյալ ինտերնետային կայքից. www.pefa.org).

- Առաջնային ծախսերում իր մասնաբաժինն ունեցող ամեն գերատեսչական հոդվածի համար հաշվարկվում է փաստացի և սկզբնական բյուջեով նախատեսված ծախսերի միջև շեղումը:
- Իրար են գումարվում գերատեսչական բոլոր հոդվածների գծով շեղումները՝ արտահայտված բացարձակ արժեքով (բացարձակ արժեք = փաստացի և բյուջեով նախատեսվածի միջև դրական տարբերություն): Տոկոսային արտահայտություններ չեն կիրառվում:
- Ստացված գումարն արտահայտվում է բյուջետային ընդհանուր առաջնային ծախսերի նկատմամբ տոկոսային հարաբերակցության տեսքով:
- Ընդհանուր ծախսերի շեղման համետատ ծախսերի կառուցվածքի շեղման մեծությունը (արտահայտված տոկոսային կետերով) հաշվարկելու համար նվազեցվում է ամեն տարվա առաջնային ընդհանուր ծախսերի շեղումը (տոկոսներով) (հաշվարկվում է «PI-1»-ի համար):
- Գնահատման աղյուսակի միջոցով որոշվում է, թե քանի տարում տոկոսային կետը գերազանցել է 5-ը կամ 10-ը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդ Մ1)
A	(i) Վերջին երեք տարիներից յուրաքանչյուրում ծախսերի կառուցվածքի շեղումը գերազանցել է առաջնային ծախսերի ընդհանուր շեղումը ոչ ավելի, քան 5 տոկոսային կետով:
B	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկում ծախսերի կառուցվածքի շեղումը գերազանցել է առաջնային ծախսերի ընդհանուր շեղումը ոչ ավելի, քան 5 տոկոսային կետով:
C	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկում ծախսերի կառուցվածքի շեղումը գերազանցել է առաջնային ծախսերի ընդհանուր շեղումը ոչ ավելի, քան 10 տոկոսային կետով:
D	(i) Վերջին երեք տարիներից առնվազն երկուսում ծախսերի կառուցվածքի շեղումը գերազանցել է առաջնային ծախսերի ընդհանուր շեղումը ոչ ավելի, քան 10 տոկոսային կետով:

PI-3. Եկամուտների հանրագումարային արդյունքները՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեի հետ

Ներքին եկամուտների ստույգ կանխատեսումը չափազանց կարևոր գործոն է բյուջեի կատարողականի որոշման մեջ, քանի որ բյուջեով նախատեսվող ծախսային հատկացումները հիմնվում են հենց տվյալ կանխատեսման վրա: Բյուջեով ակնկալվող և փաստացի եկամուտների համեմատությունը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել եկամուտների կանխատեսումների որակի մասին:

Ինչևէ, կարող են տեղի ունենալ չկանխատեսված արտաքին ցնցումներ, որոնք չեն վկայում վարչարարության թերությունների մասին: Դրանց բացատրությունը պետք է արտացոլվի նկարագրական մասում: Ճշգրտումը թույլ է տալիս առավելագույն միավոր նշանակել նույնիսկ եթե վերջին երեք տարիներից մեկում փաստացի արդյունքը էապես տարբերվում է կանխատեսումից, օրինակ՝ բյուջեի կատարման ընթացքում տեղի ունեցած արտաքին լուրջ ցնցման հետևանքով:

Տվյալ ցուցանիշի համար պետք է հնարավորինս օգտագործվեն բյուջեի կատարման մասին հաշվետվություններում և կառավարության վերջնական հաշիվներում արտացոլված տվյալները (այլ աղբյուրներից, օրինակ՝ եկամուտներ հավաքագրող մարմնից կամ կենտրոնական բանկից, ստացված տվյալների փոխարեն): Նկարագրական մասում պետք է նշվեն տվյալների աղբյուրները, համապատասխանության կամ հուսալիության հետ կապված մտահոգությունները, որոնք կարող են արտացոլվել նաև եկամուտների տվյալների համադրման գնահատականում՝ «PI-14»:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).

(i) Ներքին փաստացի եկամուտների հավաքագրումները՝ համեմատած սկզբնական հաստատված բյուջեում նախատեսվող ներքին եկամուտների հետ:

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)
A	(i) Վերջին երեք տարիներից միայն մեկում բյուջեով նախատեսված ներքին եկամուտների համեմատ փաստացի հավաքագրումները 97 տոկոսից ցածր են եղել:
B	(i) Վերջին երեք տարիներից միայն մեկում բյուջեով նախատեսված ներքին եկամուտների համեմատ փաստացի հավաքագրումները 94 տոկոսից ցածր են եղել:
C	(i) Վերջին երեք տարիներից միայն մեկում բյուջեով նախատեսված ներքին եկամուտների համեմատ փաստացի հավաքագրումները 92 տոկոսից ցածր են եղել:
D	(i) Վերջին երեք տարիներից երկուսում կամ երեքում էլ բյուջեով նախատեսված ներքին եկամուտների համեմատ փաստացի հավաքագրումները 92 տոկոսից ցածր են եղել:

PI-4. Ապառքների պաշարներ և ծախսային վճարումների գծով ապառքների մոնիտորինգ

Ծախսային վճարումների գծով ապառքները կառավարության կողմից ստանձնված ծախսային պարտավորություններ են, որոնց դեպքում աշխատողին, մատակարարին, կապալառուին կամ վարկային փոխատուին կատարման ենթակա վճարումը դարձել է ժամկետանց և իրենից ներկայացնում է ոչ թափանցիկ ֆինանսավորման մի ձև: Ապառքների բարձր մակարդակը կարող է վկայել մի շարք տարբեր խնդիրների մասին, ինչպիսին են պարտավորությունների նկատմամբ հսկողությունների, դրամական միջոցների նորմավորման անկատարությունը, պայմանագրերի գծով ծախսերի թերի արտացոլումը բյուջեում, որոշակի հոդվածներում ծախսերի թերի նախատեսումը և տեղեկատվության բացակայությունը: Ծախսային ապառքները նշանակում են, որ չկատարված վճարումը ենթակա է կատարման կառավարության ստանձնած որոշակի իրավական կամ պայմանագրային պարտավորության ներքո, և կարող է ներառել վճարման ենթակա, սակայն չվճարված պահանջներ աշխատավարձերի, կենսաթոշակների, մատակարարված ապրանքների, ծառայությունների, վարձակալության, ներքին և արտաքին պարտքի տոկոսների գծով: Կառավարության ինքնուրույն գործակալություններին և կառավարության այլ մակարդակներին սուբսիդիաների տրամադրման մեջ տեղի ունեցող ուշացումները կամ կրճատումները չեն հանգեցնում ապառքների առաջացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ենթադրում են իրավական պարտավորություն (որում սահմանվում է ամեն վճարման գումարն ու ժամկետը) կամ պայմանագրային գործարք: Տարեկան բյուջեի մասին օրենքում կամ հատկացումների ակտում նախատեսված տրանսֆերտն ինքնին չի հանդիսանում իրավական պարտավորություն: Վարկի մայր գումարի չկատարված մարումը տվյալ

ցուցանիշի համար չի համարվում որպես ապառք, որովհետև մարումը ոչ թե ծախս է, այլ ֆինանսավորում:

Երկրի կանոնակարգերով կամ լայնորեն ընդունված կանոններով կարող են սահմանվել այն դեպքերը, երբ չվճարված պահանջը դառնում է ապառք: Եթե նման որևէ կանոն կիրառվում է ապառքների պաշարները չափելու համար, ապա դրա բովանդակությունը և հիմքը պետք է արտացոլվեն նկարագրական մասում: Գնահատման համար, ինչևէ, որպես հիմք է ընդունվում միջազգայնորեն ընդունված գործարար հարաբերությունների փորձը, որի համաձայն պահանջը դիտվում է որպես ապառք, եթե վճարումը չի կատարվում կառավարության կողմից մատակարարի հաշիվ-անդորրագիրը / պահանջը (մատակարարված ապրանքների, տրամադրված ծառայությունների կամ իրականացված աշխատանքների դիմաց) ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, մինչդեռ աշխատողներին աշխատավարձի չվճարումը կամ պարտքի տոկոսների ժամանակին չմարումը անմիջապես հանգեցնում է նրան, որ վճարումը դառնում է ապառք:

Տվյալ ցուցանիշի միջոցով որոշվում է, թե որքան են ապառքների պաշարները և թե որքանով է համակարգային խնդիրը վերցվում հսկողության տակ և կարգավորվում: Թեև կարող է առաջանալ հին ապառքները որոշելու և մարելու հատուկ պահանջը, սակայն այս քայլը արդյունավետ չի լինի, եթե շարունակեն առաջանալ նորերը (վճարումներ, որոնք պետք է կատարվեին, սակայն չեն կատարվել անցած տարում): Ինչևէ, ամենակարևորը ապառքների մասին տվյալների առկայությունն է ու ամբողջականությունը, առանց որի գնահատումն անհնարին է դառնում:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) Ծախսային վճարումների գծով ապառքների պաշարները (արտահայտված որպես համապատասխան ֆինանսական տարվա փաստացի ծախսերի նկատմամբ տոկոսային հարաբերակցություն) և պաշարների վերջին ժամանակներս տեղի ունեցած փոփոխությունները:
(ii) Ծախսային վճարումների գծով ապառքների պաշարների մոնիտորինգի վերաբերյալ տվյալների առկայությունը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)
A	(i) Ապառքների պաշարները ցածր են (այսինքն՝ ընդհանուր ծախսերի 2 տոկոսից ցածր են) (ii) Ապառքների պաշարների մասին հուսալի և ամբողջական տվյալներ են ստացվում ընդունված ընթացակարգերի միջոցով առնվազն ամեն ֆինանսական տարվա վերջին (տվյալները նաև արտացոլում են ապառքների վաղեմությունը):
B	(i) Ապառքների պաշարները կազմում են ընդհանուր ծախսերի 2-10 տոկոսը, և տվյալներ կան այն մասին, որ վերջին երկու տարվա ընթացքում դրանք զգալիորեն կրճատվել են (ավելի քան 25 տոկոս): (ii) Ապառքների պաշարների մասին տվյալները կազմվում են տարեկան կտրվածքով, սակայն կարող են ամբողջական չլինել ծախսային մի քանի կատեգորիաների կամ սահմանված բյուջետային հիմնարկների առումով:

C	(i) Ապառքների պաշարները կազմում են ընդհանուր ծախսերի 2-10 տոկոսը, և տվյալներ չկան այն մասին, որ վերջին երկու տարվա ընթացքում դրանք զգալիորեն կրճատվել են: (ii) Ապառքների պաշարների մասին տվյալները կազմվել են վերջին երկու տարվա մեջ կատարված միանգամյա համապարփակ գնահատման արդյունքում:
D	(i) Ապառքների պաշարները գերազանցում են ընդհանուր ծախսերի 10 տոկոսը: (ii) Գոյություն չունեն վերջին երկու տարվա ապառքների պաշարների մասին հուսալի տվյալներ:

PI-5. Բյուջեի դասակարգումը

Դասակարգման կուռ համակարգը թույլ է տալիս գրանցել ծախսերը ըստ գերատեսչական միավորի, տնտեսագիտական, գործառական և ծրագրային դասերի: Ստանդարտ միջազգային դասակարգման կիրառման դեպքում կառավարությունները կարող են կազմել ծախսերի հաշվետվությունը ԿՖՎ-ի («GFS») ձևաչափով և գրանցել աղքատության կրճատման և այլ ընտրված ծախսային խմբերը: Բյուջեն կներկայացվի մի ձևով, որն արտացոլում է ամենակարևոր դասերը (սովորաբար դրանք են գերատեսչականը՝ տնտեսագիտական, գործառական և/կամ ծրագրային դասակարգման հետ միասին), իսկ դասակարգումը կարտացոլվի հաշվային պլանում՝ նպատակ հետապնդելով ապահովել այն, որ բոլոր գործառնությունները ներկայացվեն հաշվետվություններում կիրառվող ցանկացած դասակարգմանը համապատասխան:

Այն երկրներում, որտեղ աղքատության կրճատման ռազմավարությունը կառավարության քաղաքականության ընդհանուր ծրագրի հանգուցային տարրերից մեկն է, աղքատության կրճատման հետ կապված ծախսերի սահմանումը սովորաբար ուղղակիորեն կապվում է բյուջետային դասակարգման հետ:

Դասակարգման համակարգերի համար միջազգային ստանդարտը Կառավարության ֆինանսական վիճակագրությունն է («GFS»), որը սահմանում է գործառնությունների տնտեսագիտական և գործառական դասակարգման շրջանակները: ՄԱԿ-ի սահմանած Կառավարության գործառույթների դասակարգման համաձայն (ԿԳԴ/COFOG), որտեղ կիրառվում է ԿՖՎ-ի գործառական դասակարգումը, ամենաբարձր մակարդակի հիմնական գործառույթները 10-ն են, իսկ երկրորդ (ենթա-գործառական) մակարդակի գործառույթները՝ 69:

Ծրագրային դասակարգման համար գոյություն չունի միջազգային որևէ ստանդարտ, և նրա կիրառումը տարբեր երկրներում մեծապես տարբեր է: Ինչևէ, ծրագրային դասակարգումը կարող է ծառայել որպես կարևոր գործիք բյուջեի ձևավորման, կառավարման և հաշվետվության կազմման համար (տես «PI-12» ցուցանիշ), և նշված դասակարգման կիրառման եղանակը պետք է

ներկայացվի նկարագրական մասում այն դեպքում, երբ ամենաբարձր միավորը նշանակվում է տվյալ հիմունքով:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) Կենտրոնական կառավարության բյուջեի ձևավորման, կատարման և հաշվետվության կազմման մեջ կիրառվող դասակարգման համակարգը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)
A	(i) Բյուջեի ձևավորումը և կատարումը հիմնվում է գերատեսչական, տնտեսագիտական և ենթա-գործառական դասակարգման վրա՝ կիրառելով ԿՖՎ/ԿԳԴ-ի ստանդարտները կամ այնպիսի ստանդարտ, որի միջոցով հնարավոր է կազմել ԿՖՎ-ին / ԿԳԴ-ին համահունչ փաստաթղթեր: (Օրագրային դասակարգումը կարող է փոխարինել ենթա-գործառական դասակարգմանը, եթե այն կիրառվի այն մանրամասնությամբ, որն առնվազն համապատասխանում է ենթա-գործառականին:)
B	(i) Բյուջեի ձևավորումը և կատարումը հիմնվում է գերատեսչական, տնտեսագիտական և գործառական դասակարգման վրա (կիրառելով առնվազն ԿԳԴ-ի 10 հիմնական գործառույթները)՝ կիրառելով ԿՖՎ/ԿԳԴ-ի ստանդարտները կամ այնպիսի ստանդարտ, որի միջոցով հնարավոր է կազմել ԿՖՎ-ին / ԿԳԴ-ին համահունչ փաստաթղթեր:
C	(i) Բյուջեի ձևավորումը և կատարումը հիմնվում է գերատեսչական և տնտեսագիտական դասակարգման վրա՝ կիրառելով ԿՖՎ/ԿԳԴ-ի ստանդարտները կամ այնպիսի ստանդարտ, որի միջոցով հնարավոր է կազմել ԿՖՎ-ին / ԿԳԴ-ին համահունչ փաստաթղթեր:
D	(i) Բյուջեի ձևավորումը և կատարումը հիմնվում է այլ դասակարգման վրա (օր.՝ որը համադրելի չէ ԿՖՎ-ի հետ կամ ունի միայն գերատեսչական բաժանում):

PI-6. Բյուջեի փաստաթղթերում ներառված տեղեկատվության համապարփակությունը

Տարեկան բյուջեի փաստաթղթերը (տարեկան բյուջեն և ուղեկցող փաստաթղթերը), որոնք ներկայացվում են օրենսդիրի ուսումնասիրմանն ու հաստատմանը, պետք է ներկայացնեն կենտրոնական կառավարության ֆիսկալ կանխատեսումների, բյուջետային հայտերի և նախորդ տարիների փաստացի արդյունքների ամբողջական պատկերը: Ի լրումն եկամուտների ու ծախսերի մանրամասն տեղեկությունների, ամբողջականությունն ապահովելու համար տարեկան բյուջեի փաստաթղթերը պետք է ներառեն տեղեկատվություն հետևյալ տարրերի մասին.

1. Մակրո-տնտեսական ենթադրություններ, այդ թվում առնվազն ընդհանուր աճի, գնաճի և փոխարժեքի վերաբերյալ:
2. Ֆիսկալ դեֆիցիտ՝ սահմանված ԿՖՎ-ի կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտի համաձայն:
3. Դեֆիցիտի ֆինանսավորում, այդ թվում դեֆիցիտի ակնկալվող կառուցվածքի նկարագրություն:

4. Ընդհանուր պարտք, ներառյալ առնվազն ընթացիկ տարվա սկզբի դրությամբ տվյալները:
5. Ֆինանսական ակտիվներ, ներառյալ առնվազն ընթացիկ տարվա սկզբի դրությամբ տվյալները:
6. Նախորդ տարվա բյուջեի փաստացի կատարողական՝ ներկայացված այն նույն ձևաչափով, ինչ բյուջեի նախագիծն է:
7. Ընթացիկ տարվա բյուջե (վերանայված բյուջե կամ մոտավոր հաշվարկված փաստացի տվյալներ)՝ ներկայացված այն նույն ձևաչափով, ինչ բյուջեի նախագիծն է:
8. Ամփոփ բյուջետային տվյալներ (և եկամուտների, և ծախսերի մասով) համաձայն կիրառվող դասակարգման հիմնական տողային հոդվածների (տես «PI-5»), ներառյալ ընթացիկ և նախորդ տարիների տվյալները:
9. Բյուջեի վրա քաղաքականության նոր միջոցառումների ազդեցության նկարագրություն, եկամուտների քաղաքականության բոլոր հիմնական փոփոխությունների և/կամ ծախսային ծրագրերի էական փոփոխությունների ազդեցությունը բյուջեի վրա թվային արտահայտությամբ:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) Վերոնշյալ տեղեկատվության մասնաբաժինը կենտրոնական կառավարության կողմից միանգամայն վերջերս հրապարակված բյուջեի փաստաթղթերում (գնահատման մեջ հաշվի առնվելու համար պետք է ապահովվի համապատասխանությունը տեղեկատվության բոլոր հենանիշների հետ):

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)
A	(i) բյուջեի նոր հրապարակված փաստաթղթերը բավարարում են տեղեկատվության 9 հենանիշներից 7-9-ը
B	(i) բյուջեի նոր հրապարակված փաստաթղթերը բավարարում են տեղեկատվության 9 հենանիշներից 5-6-ը
C	(i) բյուջեի նոր հրապարակված փաստաթղթերը բավարարում են տեղեկատվության 9 հենանիշներից 3-4-ը
D	(i) բյուջեի նոր հրապարակված փաստաթղթերը բավարարում են տեղեկատվության 9 հենանիշներից 2-ը կամ պակաս

PI-7. Հաշվետվություններում չբացահայտված կառավարության գործառնությունների ծավալը

Տարեկան բյուջեի նախահաշիվները, տարվա ընթացքում կազմվող բյուջեի կատարման հաշվետվությունները և տարեվերջի ֆինանսական և այլ ֆիսկալ հաշվետվությունները՝ նախատեսված հանրության համար, պետք է արտացոլեն կենտրոնական կառավարության բոլոր բյուջետային և արտաբյուջետային գործառնությունները, որպեսզի պատկերեն կենտրոնական կառավարության բոլոր կատեգորիաների եկամուտները, ծախսերը և

ֆինանսավորումը: Սա կապահովվի, եթե. (i) արտաբյուջետային գործառնությունները (կենտրոնական կառավարության այն գործունեությունը, որը չի արտացոլվում տարեկան բյուջեի մասին օրենքում, օրինակ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ֆինանսավորվող գործունեություն) լինեն աննշան, կամ եթե արտաբյուջետային գործունեության հետ կապված որևէ զգալի ծախս ներառվի ֆիսկալ հաշվետվություններում, և եթե (i) բյուջեում արտացոլված, սակայն կառավարության բյուջեի կառավարման և հաշվապահական հաշվառման համակարգից դուրս կառավարվող աշխատանքները (հիմնականում դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերը) լինեն աննշան և ներառվեն կառավարության ֆիսկալ հաշվետվություններում:

Թեև դոնորների կողմից ծրագրերի ֆինանսավորումը մասնակիորեն դուրս է կառավարության հսկողությունից (հատկապես այն պայմանագրերի շրջանակներում բնեղենով տրամադրվող ֆինանսավորման դեպքում, որտեղ կառավարությունը հանդես չի գալիս որպես պայմանագրի կողմ), սակայն դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար պատասխանատու ՆԳԳ-երը պետք է առնվազն ի վիճակի լինեն տրամադրել համարժեք ֆինանսական հաշվետվություններ դրամական միջոցների տեսքով ստացված դոնորների ֆինանսավորման վերաբերյալ: Ծրագրերի ֆինանսավորման (այդ թվում բնեղենի տեսքով) մասին ֆինանսական տեղեկատվության տրամադրման հարցում կառավարությանը դոնորների կողմից ցուցաբերվող աջակցությունը գնահատվում է «D-2» ցուցանիշի միջոցով:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) Արտաբյուջետային այն ծախսերի ծավալը (բացառությամբ դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի), որը չի ներկայացված ֆիսկալ հաշվետվություններում:
(ii) Դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի մասին եկամտային/ծախսային տվյալներ, ոնք ներառվում են ֆիսկալ հաշվետվություններում:

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)
A	(i) Հաշվետվություններում չարտացոլված արտաբյուջետային ծախսերի մակարդակը (բացառությամբ դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի) նշանակալից չէ (ընդհանուր ծախսերի 1 տոկոսից ցածր): (ii) Դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի 90 տոկոսի համար (ըստ արժեքի) եկամտային / ծախսային հոդվածների ամբողջական տեղեկատվություն է ներառվում ֆիսկալ հաշվետվություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ բնեղենով տրամադրված ֆինանսավորումը ԿԱՄ դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ծախսերը նշանակալից չեն (ընդհանուր ծախսերի 1 տոկոսից ցածր):

B	(i) Հաշվետվություններում չարտացոլված արտաբյուջետային ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի 1-5 տոկոսը: (ii) Եկամտային / ծախսային ամբողջական տեղեկատվություն է ներառվում ֆիսկալ հաշվետվություններում վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող բոլոր ծրագրերի և դրամաշնորհային առնվազն 50 տոկոսի (ըստ արժեքի) համար:
C	(i) Հաշվետվություններում չարտացոլված արտաբյուջետային ծախսերը (բացառությամբ դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի) կազմում են ընդհանուր ծախսերի 10 տոկոսը: (ii) Եկամտային / ծախսային ամբողջական տեղեկատվություն է ներառվում ֆիսկալ հաշվետվություններում վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող բոլոր ծրագրերի համար:
D	(i) Հաշվետվություններում չարտացոլված արտաբյուջետային ծախսերը (բացառությամբ դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի) կազմում են ընդհանուր ծախսերի ավելի քան 10 տոկոսը: (ii) Դոնորների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվությունը, որը ներառված է ֆիսկալ հաշվետվություններում, խիստ թերի է և չի արտացոլում վարկային միջոցների հաշվին ֆինանսավորվող բոլոր գործառնությունները:

PI-8. Կառավարությունների միջև ֆիսկալ հարաբերությունների թափանցիկությունը

Կատարողականի ցուցանիշների խումբն ուղղված է կենտրոնական կառավարության ՊՖԿ-ին, մինչդեռ շատ երկրներում տեղական կառավարման (ՏԿ) մարմինները[8] կրում են լայնատեսակ ծախսային պատասխանատվություն: Ֆեդերալ նահանգներում կենտրոնական (ֆեդերալ կամ միութենական) կառավարության և առանձին նահանգների միջև ֆիսկալ հարաբերությունները սովորաբար ստեղծվում են տվյալ Միության կամ Դաշնության սահմանադրության հիման վրա: Այլ դեպքերում հատուկ օրենքների միջոցով են որոշվում ՏԿ-ի մակարդակները, ծախսային պատասխանատվությունը և եկամուտների բաշխման մեխանիզմները: Այս կատեգորիաներին պատկանող տրանսֆերտները սովորաբար ներառում են անպայմանական դրամաշնորհները, որոնց օգտագործումը որոշվում է ՏԿ-երի կողմից՝ տեղական բյուջեների միջոցով: Ի լրումն, կենտրոնական կառավարությունը կարող է տրամադրել պայմանական (նպատակային) դրամաշնորհներ ՏԿ-ի մարմիններին՝ ընտրված ծառայությունների մատուցման և ծախսային պատասխանատվության (օր.՝ ըստ գործառույթների կամ ծրագրերի) կատարման համար: Դրամաշնորհների ընդհանուր ծավալը (այսինքն՝ ուղղահայաց տեղաբաշխումը) սովորաբար որոշվում է կենտրոնական կառավարության հայեցողությամբ, բոյուջետային

[8] Կենտրոնական կառավարության ապակենտրոնացված միավորներին (որոնք չունեն տեղական հաշվետվողականության մեխանիզմներ) տրամադրվող ֆինանսավորումը չի ներառվում տվյալ ցուցանիշի մեջ:

քաղաքականության որոշումների կայացման կամ սահմանադրական քննարկումների գործընթացների շրջանակներում և այն չի գնահատվում տվյալ ցուցանիշի միջոցով: Ինչևէ, ՏԿ-ի մարմինների կողմից ծախսերի կազմման և իրականացման համար առկա միջոցների տեղաբաշխման թափանցիկության և միջնաժամկետ կանխատեսելիության նպատակով անհրաժեշտ են հստակ չափանիշներ, օրինակ՝ բանաձևեր, ՏԿ-ի մարմինների միջև դրամաշնորհների բաշխման (այսինքն՝ միջոցների հորիզոնական հատկացման) համար: Չափազանց կարևոր է նաև, որ ՏԿ-ի մարմինները ստանան հուսալի տեղեկատվություն կենտրոնական կառավարության կողմից տրամադրվելիք հատկացումների մասին տեղական բյուջեների կազմման գործընթացի ավարտից շատ ավելի առաջ (գերադասելի է նախքան նշված գործընթացի սկզիբը):

Տեղական կառավարման մարմինների մակարդակում ծառայությունների առաջնային մատուցումն իրականացնելու գնալով աճող միտման պայմաններում ըստ ոլորտների ռեսուրսներն բաշխման ճիշտ մեկնաբանության և փաստացի ծախսերի կատարման համար պահանջվում է ոլորտային կատեգորիաների հիման վրա (որը կարող է համապատասխանել ԿՖՎ-ի գործառական դասակարգմանը կամ ոչ) կառավարության բոլոր մակարդակներում ծախսային տվյալների գրանցում, նույնիսկ եթե նշված գրանցումը չհամընկնի իրավական այն ձևին, որի համաձայն բյուջեն կատարվում է: Ընդհանուր կառավարության կողմից ծախսերի գծով հատկացումների ամբողջական նկարագրի կազմման համար պահանջվում է, որ տեղական կառավարման մարմինները կազմեն ֆիսկալ տվյալները՝ կիրառելով կենտրոնական կառավարության դասակարգման հետ համադրելի դասակարգում: Բացի այդ, նշված տվյալները պետք է հավաքագրվեն առնվազն տարին մեկ անգամ և համախմբվեն կենտրոնական կառավարության հաշվետվություններում: Հնարավոր է, որ տեղական կառավարման մարմինները չկրեն անմիջապես կենտրոնական կառավարությանը հաշվետու լինելու պարտավորություն: Այդ իսկ պատճառով ընդհանուր կառավարության համար ֆիսկալ տվյալների կազմումն ու համախմբումը կարող է իրականացվել ազգային վիճակագրական գործակալության, այլ ոչ անպայմանորեն՝ կենտրոնական կառավարության կողմից: Իմաստալից ծածկույթն ապահովելու համար ֆիսկալ տեղեկատվության համախմբված հաշվետվությունը պետք է լինի պատշաճ որակի, ներառի ընդհանուր կառավարության բոլոր խմբերը և ներկայացվի ինչպես «ex-ante» (բյուջեով նախատեսված) և «ex-post» (փաստացի) հիմունքով: Փաստացի տեղեկատվությունը պետք է ստացվի հաշվապահական համակարգերի միջոցով:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ2).

(i) Կանոնների վրա հիմնվող և թափանցիկ համակարգերը կենտրոնական կառավարությունից անպայմանական և պայմանական տրանսֆերտների հորիզոնական բաշխման մեջ (ներառվում են բյուջեով նախատեսված ու փաստացի հատկացումները):

(ii) Տեղական կառավարման մարմիններին կենտրոնական կառավարությունից տրամադրվող գալիք տարվա հատկացումների մասին տեղեկատվության ժամանակին լինելը:

(iii) Որքանով են ընդհանուր կառավարության համախմբված ֆիսկալ (առնվազն եկամտային և ծախսային) տվյալները հավաքագրվում և ներկայացվում հաշվետվություններում ոլորտային կատեգորիաներին համապատասխան:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն M2
(i) ՏԿ-ի մարմինների միջև հորիզոնական տեղաբաշխումների թափանցիկություն և օբյեկտիվություն	**Միավոր = A**. Կենտրոնական կառավարությունից համարյա բոլոր տրանսֆերտների (ըստ արժեքի առնվազն 90%-ի) հորիզոնական տեղաբաշխումը կատարվում է կանոնների վրա հիմնվող և թափանցիկ համակարգերի միջոցով: **Միավոր = B.** Կենտրոնական կառավարությունից ստացվող տրանսֆերտների մեծ մասի (ըստ արժեքի առնվազն 50%-ի) հորիզոնական տեղաբաշխումը կատարվում է կանոնների վրա հիմնվող և թափանցիկ համակարգերի միջոցով: **Միավոր = C**. Կենտրոնական կառավարությունից ստացվող տրանսֆերտների միայն մի փոքր մասի (10-50%-ի) հորիզոնական տեղաբաշխումն է կատարվում կանոնների վրա հիմնվող և թափանցիկ համակարգերի միջոցով: **Միավոր = D.** Կենտրոնական կառավարությունից ստացվող տրանսֆերտների որևէ կամ համարյա ոչ մի մասի հորիզոնական տեղաբաշխումը չի կատարվում կանոնների վրա հիմնվող և թափանցիկ համակարգերի միջոցով:
(ii) Տեղական կառավարման մարմիններին տրամադրվող հատկացումների մասին տեղեկատվության ժամանակին լինելը	**Միավոր = A**. Տեղական կառավարման մարմիններին տրամադրվում է հուսալի տեղեկատվություն փոխանացման ենթակա հատակցումների մասին նախքան բյուջետային գործընթացի սկիզբը: **Միավոր = B**. Տեղական կառավարման մարմիններին տրամադրվում է հուսալի տեղեկատվություն փոխանացման ենթակա հատակցումների մասին նախքան բյուջետային հայտերի ներկայացումը, երբ հնարավոր է էական փոփոխությունների կատարումը նշված հայտերում: **Միավոր = C.** Տեղական կառավարման մարմիններին հուսալի տեղեկատվություն տրամադրվում է նախքան նրանց ֆինանսական տարվա սկզիբը, սակայն այն պահին, երբ չափից ավելի ուշ է էական բյուջետային փոփոխություններ կատարելու համար: **Միավոր = D**. Տրանսֆերտների մասին հուսալի տեղեկատվությունը տրամադրվում է տեղական

	կառավարման մարմիններին միայն այն բանից հետո, երբ վերջնական տեսքի են բերվում նրանց բյուջեները, կամ եթե դրանից առաջ տրամադրված մոտավոր տվյալները հուսալի չեն:
(iii) Որքանով են ընդհանուր կառավարության ֆիսկալ տվյալները համախմբվում ոլորտային կատեգորիաներին համապատասխան	**Միավոր = A**. Ֆիսկալ տվյալները (նախատեսված ու փաստացի), որոնք համահունչ են կենտրոնական կառավարության ֆիսկալ հաշվետվություններին, հավաքագրվում են տեղական կառավարման մարմինների ծախսերի 90 տոկոսի համար (ըստ արժեքի) և համախմբվում տարեկան հաշվետվություններում ֆինանսական տարվա ավարտից հետո 10 ամսվա ընթացքում: **Միավոր = B**. Ֆիսկալ տվյալները (նախատեսված ու փաստացի), որոնք համահունչ են կենտրոնական կառավարության ֆիսկալ հաշվետվություններին, հավաքագրվում են տեղական կառավարման մարմինների ծախսերի առնվազն 75 տոկոսի համար (ըստ արժեքի) և համախմբվում տարեկան հաշվետվություններում ֆինանսական տարվա ավարտից հետո 18 ամսվա ընթացքում: **Միավոր = C**. Ֆիսկալ տվյալները (նախատեսված ու փաստացի), որոնք համահունչ են կենտրոնական կառավարության ֆիսկալ հաշվետվություններին, հավաքագրվում են տեղական կառավարման մարմինների ծախսերի առնվազն 60 տոկոսի համար (ըստ արժեքի) և համախմբվում տարեկան հաշվետվություններում ֆինանսական տարվա ավարտից հետո 24 ամսվա ընթացքում: **Միավոր = D**. Ֆիսկալ տվյալները (նախատեսված ու փաստացի), որոնք համահունչ են կենտրոնական կառավարության ֆիսկալ հաշվետվություններին, հավաքագրվում են տեղական կառավարման մարմինների ծախսերի 60 տոկոսից պակասի համար (ըստ արժեքի) ԿԱՄ ավելի բարձր տոկոսային հարաբերակցության ապահովման դեպքում տարեկան հաշվետվություններում դրանց համախմբումը տեղի է ունենում ֆինանսական տարվա ավարտից հետո ավելի քան 24 ամսվա ընթացքում (եթե ընդհանրապես նման համախմբում կատարվում է):

PI-9. Հանրային հատվածի այլ միավորներից բխող ընդհանուր ֆիսկալ ռիսկի նկատմամբ հսկողություն

Կենտրոնական կառավարությունը սովորաբար իրականացնում է որոշակի վերահսկողություն հանրային հատվածի այլ միավորների նկատմամբ և

պարտավոր է իրականացնել տեղական կառավարման մարմինների, կառավարության ինքնուրույն գործակալությունների (ԿԻԳ) և պետական ձեռնարկությունների (ՊՁ), այդ թվում պետական բանկերի, գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի մոնիտորինգ ու կառավարում, սակայն քաղաքական նկատառումներով կարող է և ստիպված ստանձնել հանրային հատվածի այլ միավորների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում դրանք կատարելու պատասխանատվությունը, երբ ֆորմալ վերահսկողության դերակատարությունը բացակայում է: Ֆիսկալ ռիսկերը կարող են ստեղծվել տեղական կառավարման մարմինների, ԿԻԳ-երի և ՊՁ-երի կողմից և, ի թիվս այլոց, արտահայտվել պարտքի սպասարկման գծով (կենտրոնական կառավարության տրամադրած երաշխիքներով կամ առանց դրանց) պարտավորությունների չկատարման, չֆինանսավորված քվազի-ֆիսկալ գործառնությունների արդյունքում կրած վնասների, ծախսային վճարումների գծով ապառքների և չֆինանսավորված կենսաթոշակային պարտավորությունների տեսքով:

Կենտրոնական կառավարությունը պետք է պահանջի և ստանա եռամսյակային ֆինանսական հաշվետվություններ և աուդիտ անցած տարեվերջի հաշվետվություններ ԿԻԳ-երից և ՊՁ-երից՝ միաժամանակ հետևելով ֆինանսական նպատակային ցուցանիշների փաստացի կատարողականին: ԿԻԳ-երը և ՊՁ-երը հաճախ հաշվետու են իրենց հիմնադիր հանդիսացող ճյուղային նախարարություններին, սակայն տեղեկատվության համախմբումը կարևոր է կենտրոնական կառավարության ընդհանուր ֆիսկալ ռիսկերի նկարագրման և ներկայացման տեսանկյունից: Եթե տեղական կառավարման մարմիններն առաջացնում են ֆիսկալ պարտավորություններ կենտրոնական կառավարության համար, ապա նրանց ֆիսկալ դիրքը պետք է ենթարկվի մոնիտորինգի առնվազն տարեկան կտրվածքով՝ կրկին կատարելով հիմնական ֆիսկալ տվյալների համախմբում:
Այդ ռիսկերի մոնիտորինգի շնորհիվ կենտրոնական կառավարությունը հնարավորություն է ստանում թափանցիկության, կառավարման և հաշվետվողականության պահանջներին համահունչ ձեռնարկելու ուղղիչ միջոցառումներ՝ կապված ԿԻԳ-երի, ՊՁ-երի և տեղական կառավարման մարմինների գործունեության հետ:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) ԿԻԳ-երի և ՊՁ-երի նկատմամբ կենտրոնական կառավարության կողմից իրականացվող մոնիտորինգի աստիճանը:
(ii) Տեղական կառավարման մարմինների ֆիսկալ դիրքի նկատմամբ կենտրոնական կառավարության կողմից իրականացվող մոնիտորինգի աստիճանը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)

A	(i) Բոլոր խոշոր ԿԻԳ-երը/ՊՁ-երը առնվազն վեց ամիսը մեկ անգամ կենտրոնական կառավարությանն են ներկայացնում ֆիսկալ հաշվետվություններ, ինչպես նաև աուդիտ անցած տարեկան հաշվետվություններ, իսկ կենտրոնական կառավարությունը առնվազն տարեկան կտրվածքով կազմում է ֆիսկալ ռիսկերի վերաբերյալ համախմբված հաշվետվություն: (ii) Տեղական կառավարման մարմինները չեն կարող առաջացնել ֆիսկալ պարտավորություններ կենտրոնական կառավարության համար ԿԱՄ տեղական կառավարման բոլոր մակարդակներում զուտ ֆիսկալ դիրքը ենթարկվում է մոնիտորինգի առնվազն տարին մեկ անգամ, իսկ կենտրոնական կառավարությունը համախմբված ձևով ներկայացնում է ընդհանուր ֆիսկալ ռիսկերը տարեկան (կամ ավելի մեծ պարբերականություն ունեցող) հաշվետվություններում:
B	(i) Բոլոր խոշոր ԿԻԳ-երը/ՊՁ-երը առնվազն տարին մեկ անգամ կենտրոնական կառավարությանն են ներկայացնում ֆիսկալ հաշվետվություններ, ինչպես նաև աուդիտ անցած տարեկան հաշիվներ, իսկ կենտրոնական կառավարությունը կազմում է ֆիսկալ ռիսկերի վերաբերյալ համախմբված հաշվետվություն: (ii) Տեղական կառավարման ամենակարևոր մակարդակում զուտ ֆիսկալ դիրքը ենթարկվում է մոնիտորինգի առնվազն տարին մեկ անգամ, իսկ կենտրոնական կառավարությունը համախմբված ձևով ներկայացնում է ընդհանուր ֆիսկալ ռիսկերը հաշվետվությունում:
C	(i) Խոշոր ԿԻԳ-երի/ՊՁ-երի մեծ մասը առնվազն տարին մեկ անգամ կենտրոնական կառավարությանն են ներկայացնում ֆիսկալ հաշվետվություններ, սակայն համախմբված հաշվետվություն չի ներկայացվում կամ էլ այն մեծապես թերի է: (ii) Տեղական կառավարման ամենակարևոր մակարդակում զուտ ֆիսկալ դիրքը ենթարկվում է մոնիտորինգի առնվազն տարին մեկ անգամ, սակայն համախմբված հաշվետվություն չի ներկայացվում կամ էլ այն մեծապես թերի է:
D	(i) ԿԻԳ-երի և ՊՁ-երի տարեկան մոնիտորինգ չի իրականացվում, կամ էլ այն մեծապես թերի է: (ii) Տեղական կառավարման մարմինների ֆիսկալ դիրքի տարեկան մոնիտորինգ չի իրականացվում, կամ էլ այն մեծապես թերի է:

PI-10. Հարկաբյուջետային հիմնական տեղեկատվության հասանելիություն հանրության համար

Թափանցիկությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է կառավարության ֆիսկալ ծրագրերի, դիրքերի և կատարողականի մասին տեղեկատվությունը հասանելի ընդհանուր հանրությանը կամ առնվազն առանձին շահագրիռ խմբերին:

Գնահատականի նկարագրական մասում պետք է մեկնաբանություն արվի ներկայացվող տեղեկատվության որակի (օրինակ՝ հասկանալի լեզու և կառուցվածք, շարադարանքի համապատասխան տեսք) և հանրության համար հասանելիություն ապահովող միջոցների մասին (ինչպիսիք են մամուլը, ինտերնետային կայքերը, տպագրման ինքնարժեքով կարևոր փաստաթղթերի

տպագիր օրինակների վաճառքը և տեղեկատու վահանակների վրա տեղական նշանակության տեղեկատվության զետեղումը): Այն, թե որքանով են նշված միջոցները համարժեք, կախված է փաստաթղթերի բնույթից և շահերը ներկայացնող խմբերի կամ օգտագործողների բնորոշ առանձնահատկություններից, օրինակ՝ տարբեր լրատվամիջոցներից օգտվելու հնարավորությունից:

Տեղեկատվության այն տարրերը, որոնց հասանելիությունը հանրության համար հանգուցային նշանակություն ունի, ներառում են հետևյալը.

(i) Տարեկան բյուջեի փաստաթղթերը. փաստաթղթերի ամբողջական[9] խումբ, որը հանրության կողմից հնարավոր է ձեռք բերել համապատասխան եղանակներով այն ժամանակ, երբ այն ներկայացվում է օրենսդիրին:
(ii) Բյուջեի կատարման մասին տարեմեջյան հաշվետվություններ. վերջիններս սովորաբար ներկայացվում են հանրությանը համապատասխան եղանակներով՝ կազմման ամսաթվից հետո մեկ ամսվա ընթացքում:
(iii) Տարեվերջի ֆինանսական հաշվետվություններ. վերջիններս հանրությանն են ներկայացվում համապատասխան եղանակներով, իրականացված աուդիտի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
(iv) Արտաքին աուդիտի եզրակացություններ. կենտրոնական կառավարության համախմբված գործառնությունների մասին բոլոր հաշվետվությունները հանրությանն են ներկայացվում համապատասխան եղանակներով, իրականացված աուդիտի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:
(v) Կնքված պայմանագրեր. 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից բարձր արժեք ունեցող բոլոր պայմանագրերը հրատարակվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ համապատասխան եղանակների միջոցով:
(vi) Առաջնային ծառայությունների միավորներին հասանելի ռեսուրսներ. տեղեկատվությունը բացահայտվում է համապատասխան եղանակների միջոցով առնվազն տարին մեկ անգամ կամ ներկայացվում է ըստ պահանջի առնվազն երկու ոլորտի ծածկույթ ունեցող առաջնային ծառայությունների միավորների դեպքում (օրինակ՝ տարրական դպրոցներ կամ առաջնային բուժօգնության հիվանդանոցներ):

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ1).
(i) Տեղեկատվության հասանելիության վերոնշյալ բավարարված տարրերի թիվը (գնահատման մեջ հաշվի առնվելու համար պետք է ապահովվի համապատասխանությունը տեղեկատվության բոլոր հենանիշների հետ):

Միավոր	Նվազագույն պահանջներ (գնահատման մեթոդ Մ1)

[9] «Ամբողջական» նշանակում է, որ հանրությանը բացահայտվող փաստաթղթերը պարունակում են «PI-6» ցուցանիշով նախատեսվող ողջ տեղեկատվությունը (եթե այն առկա է):

A	(i) կառավարությունը հանրությանն է ներկայացնում տեղեկատվության նշված 6 տեսակներից 5-6-ը
B	(i) կառավարությունը հանրությանն է ներկայացնում տեղեկատվության նշված 6 տեսակներից 3-4-ը
C	(i) կառավարությունը հանրությանն է ներկայացնում տեղեկատվության նշված 6 տեսակներից 1-2-ը
D	(i) կառավարությունը հանրությանը չի ներկայացնում տեղեկատվության նշված 6 տեսակներից որևէ մեկը

PI-11. Կարգավորված մոտեցում և մասնակցություն տարեկան բյուջեի գործընթացում

Թեև Ֆինանսների նախարարությունն (ՖՆ) է սովորաբար հանդես գալիս որպես տարեկան բյուջեի կազմման գործընթացի նախաձեռնողն ու իրականացնողը, սակայն բյուջեի կազմման մեջ այլ նախարարությունների, գերատեսչությունների և գործակալությունների (ՆԳԳ), ինչպես նաև քաղաքական ղեկավարության[10] արդյունավետ մասնակցությամբ է պայմանավորված այն, թե որքանով բյուջեն կարտացոլի մակրո-տնտեսական, հարկա-բյուջետային և ոլորտային քաղաքականությունները: Լիարժեք մասնակցության համար պահանջվում է «վերևից՝ ներքև» և «ներքևից՝ վերև» բյուջետավորման միասնական գործընթաց, որում կարգավորված ձևով ու ժամանակին ընդգրկվում են բոլոր մասնակիցները, համաձայն բյուջեի կազմման նախապես սահմանված ժամանակացույցի:

Ժամանակացույցը հնարավորություն է տալիս ընդունել բյուջեի մասին օրենքը նախքան ֆիսկալ տարվա սկիզբը, ինչպես նաև բավարար ժամանակ է ապահովում ուղեցույցներին համապատասխան ՆԳԳ-երի կողմից բյուջետային մանրամասն և իմաստալից հայտեր կազմելու համար: Բյուջեի ընդունման առումով ուշացումները կարող են անորոշություն առաջացնել հաստատված ծախսերի ծավալի շուրջ՝ հանգեցնելով կառավարության որոշ աշխատանքների, այդ թվում խոշոր պայմանագրերի իրականացման մեջ ուշացումների: Բյուջետային գործընթացի վերաբերյալ հստակ ուղեցույցներ պետք է ներկայացվեն բյուջեի շրջաբերականում և բյուջեի ձևավորման ձեռնարկում, ներառյալ գերատեսչական միավորների կամ գործառական հոդվածների համար առավելագույն մոտավոր սահմանաչափերի նախանշումը:

Բյուջետային հայտերում ամենավերջին պահին փոփոխությունների կատարման անհրաժեշտությունից խուսափելու համար կարևոր է, որ քաղաքական ղեկավարությունը ակտիվորեն մասնակցի հանրագումարային

[10] «Քաղաքական ղեկավարությունը» այստեղ նշանակում է գործադիրի, օրինակ՝ կառավարության կամ համարժեք մարմնի ղեկավարությունը: Բյուջետային հայտերի ուսումնասիրման աշխատանքներում օրենսդիրի մասնակցությունը քննության է առնվում «PI-27» կետում:

հատկացումների (հատկապես ոլորտների կամ գործառույթների համար) որոշման աշխատանքներում, բյուջեի կազմման գործընթացի ամենավաղ փուլից սկսած: Սա պետք է նախաձեռնվի բյուջեի շրջաբերականում հատկացումների առավելագույն սահմանաչափերի ներկայացման և հաստատման (բյուջեի շրջաբերականի կամ հանրագումարային հատկացումների մասին նախորդ հայտի հաստատման) միջոցով:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ2).

(i) Բյուջեի սահմանված ժամանակացույցի առկայություն և նրա ժամկետների պահպանում:
(ii) Բյուջետային փաստաթղթերի (բյուջեի շրջաբերականի կամ համարժեք այլ փաստաթղթի) կազմման վերաբերյալ ուղեցույցների հստակություն / համապարփակություն և դրանց մշակման մեջ քաղաքական մասնակցություն:
(iii) Բյուջեի ժամանակին հաստատում օրենսդիրի կամ համանման մանդատ ունեցող այլ մարմնի կողմից (վերջին երեք տարիների ընթացքում):

ՆՇՈՒՄ. Սույն ցուցանիշի իմաստով համապատասխան ՆԳԳ-եր են համարվում նրանք, որոնք ուղղակի պատասխանատվություն են կրում ոլորտային քաղաքականությունների համաձայն բյուջեն կատարելու համար և ֆինանսավորում կամ ծախսման լիազորություն են ստանում ուղղակիորեն ՖՆ-ից: Վերադաս նախարարության միջոցով հաշվետվություններ ներկայացնող և բյուջետային ֆինանսավորում ստացող գերատեսչությունները և գործակալությունները գնահատման ժամանակ հաշվի չեն առնվում:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն Մ2
(i) Բյուջեի սահմանված ժամանակացույցի առկայություն և նրա ժամկետների պահպանում	**Միավոր = A.** Գոյություն ունի տարեկան բյուջեի հստակորեն սահմանված ժամանակացույց, որը ընդհանուր առմամբ պահպանվում է և բավարար ժամանակ է տալիս ՆԳԳ-երին (բյուջեի շրջաբերականը ստանալու ամսաթվից հետո առնվազն վեց շաբաթ) մանրամասնորեն կազմված նախահաշիվները իմաստալից կերպով ու ժամանակին եզրափակելու համար: **Միավոր = B.** Գոյություն ունի տարեկան բյուջեի ժամանակացույց, սակայն վերջինիս ժամկետների պահպանման մեջ որոշ ուշացումներ են գրանցվում: Ժամանակացույցը բավարար ժամանակ է տալիս ՆԳԳ-երին (բյուջեի շրջաբերականը ստանալու ամսաթվից հետո առնվազն չորս շաբաթ) մանրամասնորեն կազմված նախահաշիվները իմաստալից կերպով ու ժամանակին եզրափակելու համար: **Միավոր = C**. Գոյություն ունի տարեկան բյուջեի կատարման ժամանակացույց, սակայն այն

	ռուդիմենտար է, իսկ ժամկետների պահպանման մեջ զգալի ուշացումներ են գրանցվում: Ժամանակացույցն այնքան քիչ ժամանակ է տալիս ՆԳԳ-երին, որ նրանից շատերը չեն հասցնում ժամանակին եզրափակել մանրամասն նախահաշիվները: **Միավոր = D**. Բյուջեի կատարման ժամանակացույց չի կազմվում ԿԱՄ այն ընդհանուր առմամբ չի պահպանվում ԿԱՄբյուջեների կազմման համար ԿԳԳ-երին հատկացվող ժամանակն ակնհայտորեն անբավարար է իմաստալից հայտեր կազմելու համար:
(ii) Բյուջետային հայտերի կազմման ուղեցույցներ	**Միավոր = A**. ՆԳԳ-երին տրամադրվում է համապարփակ և հստակորեն սահմանված բյուջեի շրջաբերական, որն արտացոլում է Կառավարության (կամ համարժեք այլ մարմնի) կողմից հաստատված առավելագույն սահմանաչափերը նախքան ՆԳԳ-երի շրջանում նշված փաստաթղթի տարածումը: **Միավոր = B**. ՆԳԳ-երին տրամադրվում է համապարփակ և հստակորեն սահմանված բյուջեի շրջաբերական, որն արտացոլում է Կառավարության (կամ համարժեք այլ մարմնի) կողմից հաստատված առավելագույն սահմանաչափերը: Հաստատումը տեղի է ունենում ՆԳԳ-երի շրջանում նշված փաստաթուղթը տարածելուց հետո, սակայն նախքան ՆԳԳ-երի կողմից բյուջետային հայտերի եզրափակելը: **Միավոր = C.** ՆԳԳ-երին տրամադրվում է բյուջեի շրջաբերական, որը ներառում է առանձին գերատեսչական միավորների կամ գործառական հոդվածների առավելագույն սահմանաչափերը: Բյուջեի նախահաշիվները հաստատվում են Կառավարության կողմից միայն այն բանից հետո, երբ ՆԳԳ-երն ավարտում են դրանց մանրամասն կազմումը՝ դրանով իսկ լրջորեն սահմանափակելով Կառավարության՝ ճշգրտումներ կատարելու հնարավորությունը: **Միավոր = D.** Բյուջեի շրջաբերականը չի տրամադրվում ՆԳԳ-երին ԿԱՄ շրջաբերականի որակը շատ ցածր է ԿԱՄ Կառավարությունը հաստատում է հատկացումները մանրամասն հայտերը օրենսդիրին ներկայացնելուց անմիջապես առաջ՝ դրանով իսկ կորցնելով ճշգրտումներ կատարելու հնարավորությունը:
(iii) Բյուջեի ժամանակին հաստատում օրենսդիրի կողմից	**Միավոր = A**. Օրենսդիրը վերջին երեք տարիների ընթացքում հաստատել է բյուջեն մինչև ֆիսկալ տարվա սկսվելը: **Միավոր = B**. Օրենսդիրը հաստատում է բյուջեն նախքան ֆիսկալ տարվա սկիզբը, սակայն վերջին երեք տարիներից մեկում արձանագրվել է մինչև երկու ամսվա ուշացում: **Միավոր = C**. Վերջին երեք տարիներից երկուսում

	օրենսդիրը հաստատել է բյուջեն ֆիսկալ տարվա սկզբից հետո երկու ամսվա ընթացքում: **Միավոր = D.** Վերջին երեք տարիներից երկուսում բյուջեն հաստատվել է ավելի քան երկու ամսվա ուշացումով:

PI-12. Մեկից ավելի տարիների կտրվածքով հարկաբյուջետային ծրագրման, ծախսային քաղաքականության և բյուջետավորման իրականացում

Ծախսային քաղաքականության որոշումները տևական հետևանքներ են ունենում և պետք է համապատասխանեցվեն միջնաժամկետ հեռանկարում առկա միջոցների հետ: Ուստի քաղաքականության փոփոխությունները պետք է հիմնվեն մեկից ավելի տարիների կտրվածքով եկամուտների ֆիսկալ կանխատեսումների, պարտադիր ծախսերի գծով միջնաժամկետ ծախսերի հանրագումարների և հավանական դեֆիցիտի ֆինանսավորման վրա (այդ թվում՝ արտաքին և ներքին պարտքը ներառող պարտքի կայունության ուսումնասիրություններ):

Ծախսային քաղաքականության վերաբերյալ որոշումները կամ տարբերակները պետք է նկարագրվեն ոլորտային ռազմավարական փաստաթղթերում, որոնցում ծախսերը՝ հետագա ծախսերի գնահատականների առումով, ամբողջովին գնահատվում են (այդ թվում, ինչպես պարբերական բնույթ կրող ծախսերը, այնպես էլ ներդրումային պարտավորությունները և դրանց պարբերական ծախսային հետևանքները ներառող ծախսերը), որոնք հնարավորություն կտան որոշել, թե արդյոք ներկա և նոր քաղաքականությունը ընդհանուր ֆիսկալ ծրագրային ցուցանիշների առումով ընդունելի են: Դրա հիման վրա պետք է կատարվի քաղաքականության տարբերակների ընտրություն և սահմանվեն ճյուղային միջնաժամկետ հատկացումների կողմնորոշիչ մեծությունները: Քաղաքականություն - բյուջե կապը պայմանավորված է նախնական գնահատականներում նոր քաղաքականության նախաձեռնությունների ծախսային առումով մանրամասն ազդեցության, ռազմավարության հետ կապված ներդրումների ընտրության հստակ չափանիշների ներառման և տարեկան բյուջեի ձևավորման գործընթացում ինտեգրման աստիճանով:

Այն երկրները, որ արդյունավետ կերպով բյուջետային գործընթացում ներդրել են բազմամյա ծրագրեր, հավանական է, որ այս ցուցանիշի հիմնական կողմերի գծով լավ կատարողական դրսևորեն: Այդ առումով, գնահատողները կարող են ցուցանիշի (i) չափման «ծրագրերը» փոխարինել «գործառույթներով», իսկ (iii) և (iv)-ում՝ «ոլորտային ռազմավարական ծրագրեր»-ով:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ M2)

(i) Մեկից ավելի տարիների կտրվածքով ֆիսկալ կանխատեսումների և ֆունկցիոնալ հատկացումների կազմում:
(ii) Պարտքի կայունության վերլուծության շրջանակներ ու պարբերականություն:

(iii) Ոլորտային ռազմավարական ծրագրերի առկայություն, որ ներառում են մեկից ավելի տարիների կտրվածքով ընթացիկ և ներդրումային ծախսերի գնահատականներ:
(iv) Ներդրումային բյուջեների և հետագա ծախսերի գնահատականների միջև կապ:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն Մ2
(i) Մեկից ավելի տարիների կտրվածքով ֆիսկալ կանխատեսումներ և ֆունկցիոնալ հատկացումներ	**Միավոր = A**. Հանրագումարային ֆիսկալ ցուցանիշների կանխատեսումները (տնտեսագիտական և գործառական/ ճյուղային դասակարգման հիմնական խմբերի հիման վրա) կազմվում են առնվազն երեք տարվա կտրվածքով՝ յուրաքանչյուր տարի ավելացնելով հերթական տարին: Մեկից ավելի տարիների գնահատականների և դրան հաջորդող տարեկան բյուջեների առավելագույն չափի սահմանման միջև կապը հստակ է, իսկ տարբերությունները՝ բացատրված: **Միավոր = B**. Հանրագումարային ֆիսկալ ցուցանիշների կանխատեսումները (տնտեսագիտական և գործառական/ ճյուղային դասակարգման հիմնական խմբերի հիման վրա) կազմվում են առնվազն երկու տարվա կտրվածքով՝ յուրաքանչյուր տարի ավելացնելով հերթական տարին: Մեկից ավելի տարիների գնահատականների և դրան հաջորդող տարեկան բյուջեների առավելագույն չափի սահմանման միջև կապը հստակ է, իսկ տարբերությունները՝ բացատրված: **Միավոր = C**. Հանրագումարային ֆիսկալ ցուցանիշների կանխատեսումները (տնտեսագիտական և գործառական/ճյուղային դասակարգման հիմնական խմբերի հիման վրա) կազմվում են առնվազն երկու տարվա կտրվածքով՝ յուրաքանչյուր տարի ավելացնելով հերթական տարին: **Միավոր = D**. Հանրագումարային ֆիսկալ ցուցանիշների նախնական գնահատում չի իրականացվում:
(ii) Պարտքի կայունության վերլուծության (ՊԿՎ) շրջանակ ու պարբերականություն	**Միավոր = A**. Տարեկան կտրվածքով իրականացվում է արտաքին և ներքին պարտքի գծով պարտքի կայունության վերլուծություն (ՊԿՎ) **Միավոր = B**. Վերջին երեք տարիների ընթացքում առնվազն մեկ անգամ արտաքին և ներքին պարտքի գծով ՊԿՎ է իրականացվել

	Միավոր = C. Վերջին երեք տարիների ընթացքում առնվազն արտաքին պարտքի գծով մեկ անգամ ՊԿՎ է իրականացվել **Միավոր = D**. Վերջին երեք տարիների ընթացքում ՊԿՎ չի իրականացվել
(iii) Ոլորտային ռազմավարական ծրագրերը՝ ծախսերի գնահատականով	**Միավոր = A**. Առաջնային ծախսերի առնվազն 75% -ը ներկայացնող ոլորտների համար առկա են ռազմավարական ծրագրեր, ընթացիկ և ներդրումային ծախսերի ամբողջական գնահատականներով, որոնք ընդհանուր գծերով համապատասխանում են ֆիսկալ կանխատեսումներին **Միավոր = B**. Առկա են ոլորտների ռազմավարությունների հայտարարագրեր՝ ծախսերի ամբողջական գնահատականներով, որոնք ընդհանուր գծերով համապատասխանում են ֆիսկալ կանխատեսումներին, առաջնային ծախսերի 25-75% կազմող ոլորտների համար **Միավոր = C**. Մի քանի խոշոր ոլորտների համար առկա են ոլորտային ռազմավարությունների հայտարարագրեր, բայց միայն առաջնային ծախսերի մինչև 25%-ը կազմող ծախսերն են հիմնականում գնահատվել ԿԱՄ ծախսերի առումով գնահատված ռազմավարական ծրագրերն առավել շատ ոլորտներ են ընդգրկում, սակայն չեն համապատասխանում ընդհանուր ֆիսկալ կանխատեսումներին **Միավոր = D**. Ոլորտային ռազմավարական ծրագրեր, հնարավոր է, որ կազմված լինեն որոշ ոլորտների համար, սակայն դրանցից և ոչ մեկը հիմնականում ամբողջական ներդրումային և ընթացիկ ծախսերի գնահատական չի պարունակում
(iv) Ներդրումային բյուջեների և ծախսերի նախնական գնահատականների միջև կապը	**Միավոր = A**. Ներդրումները հետևողական կերպով ընտրվում են համապատասխան ոլորտների ռազմավարական ծրագրերի և ընթացիկ ծախսային ազդեցության հիման վրա՝ համաձայն ոլորտային հատկացումների և ներառվում են ոլորտի նախնական բյուջեի գնահատականներում **Միավոր = B**. Կարևոր ներդրումների մեծ մասն ընտրվում է համապատասխան ոլորտների ռազմավարական ծրագրերի և ընթացիկ ծախսային ազդեցության հիման վրա՝ համաձայն ոլորտային հատկացումների և ներառվում է ոլորտի նախնական բյուջեի գնահատականներում **Միավոր = C**. Շատ ներդրումային որոշումների կապը ոլորտների ռազմավարությունների հետ թույլ է և դրանց ընթացիկ ծախսային ազդեցությունները նախնական բյուջեի գնահատականներում միայն քիչ

	(բայց էական) դեպքերում են ներառվում **Միավոր = D**. Ներդրումների և ընթացիկ ծախսերի բյուջեում նախատեսումն առանձին գործընթացներ են, որի ժամանակ ընթացիկ ծախսերի գնահատականները չեն փոխանակվում:

PI-13. Հարկ վճարողների պարտականությունների և պարտավորությունների թափանցիկություն

Հարկային պարտավորության արդյունավետ գնահատումը գտնվում է միևնույն հսկողական միջավայրի ներքո, որն առկա է եկամուտների վարչարարության համակարգում (հղում՝ PI-14), սակայն նաև մեծապես հենվում է ինչպես անհատ, այնպես էլ կորպորատիվ մասնավոր հատվածի հարկ վճարողների ուղղակի ներգրավվածության և համագործակցության վրա: Հարկային քաղաքականությանն ընդհանուր համապատասխանությունն ապահովելու գործում նրանց մասնակցությունը խրախուսվում է և խթանվում հարկային պարտավորությունների թափանցիկության բարձր աստիճանով, այդ թվում օրենսդրության և վարչական ընթացակարգերի հստակությամբ, համապատասխան տեղեկատվության մատչելիությամբ և հարկային պարտավորության գծով վարչական որոշումները վիճարկելու կարողությամբ:

Հարկերի հավաքագրման լավ համակարգը խրախուսում է հարկային կանոններին համապատասխան գործունեությունը և սահմանափակում հարկային պարտավորությունների անհատական բանակցումը՝ ապահովելով հստակ և ամբողջական հարկային օրենսդրություն, որը սահմանափակում է ներգրավված պետական մարմինների, օրինակ՝ եկամուտների վարչարարության (ԵՎ), ֆինանսների նախարարության և ներդրումների խթանման գերատեսչության հայեցողական լիազորությունները (հատկապես հարկերի գնահատման և հարկերից ազատման մասին որոշումներում):

Պետք է նշել, որ երկրի ԵՎ-ն կարող է մի քանի մարմիններից բաղկացած լինել, որոնցից յուրաքանչյուրի առաջնային գործառույթը եկամուտների հավաքագրումն է (օրինակ՝ ներքին եկամուտների գործակալություն և մաքսային մարմին): Այդ բոլոր մարմինները պետք է ներառվեն եկամուտներին առնչվող ցուցանիշների գնահատման մեջ՝ PI-13, PI-14 և PI-15, եթե տեղին է:

Հարկ վճարողների կրթումը գրանցման, հայտարարագրման և վճարման ընթացակարգերի պահանջների կատարումը խթանելու աշխատանքի կարևոր մասն է կազմում: Փաստացի և հավանական հարկ վճարողներին անհրաժեշտ է օրենքների, կանոնակարգերի և ընթացակարգերի օգտագործողների համար հարմարավետ, համապարփակ և արդիական տեղեկատվությունից (օրինակ՝ տեղակայված կառավարության վեբ կայքերում, հարկ վճարողների համար սեմինարների ժամանակ տրամադրվող տեղեկատվություն, լայն տարածման համար նախատեսված ուղեցույցեր/գրքույկներ և կրթական այլ միջոցառումներ) օգտվելու հնարավորություն ունենալ: Հավանական հարկ վճարողները պետք է իրենց հարկային պարտավորությունների մասին տեղեկացվեն նաև հարկ վճարողների կրթարշավների միջոցով:

Եկամուտների վարչարարության մարմնի որոշումներն ու գնահատումը հարկ վճարողների կողմից վիճարկելու հնարավորությունը պահանջում է

բողոքարկումների/գանգատարկման արդյունավետ մեխանիզմի առկայություն, որը հարկ վճարողների նկատմամբ արդարացի մոտեցում է երաշխավորում: Հարկային գանգատարկման մեխանիզմի գնահատումը պետք է արտացոլի գործնականում նման համակարգի *առկայությունը, դրա անկախությունը* կազմակերպական կառուցվածքի, նշանակումների և ֆինանսավորման առումով, *դրա իրավասությունները* իր ընդունած որոշումների համապատասխան գործելու առումով, ինչպես նաև *իրականացվող գործառույթները*՝ հասանելիության (գործերի քանակն ու չափը), արդյունավետության (գործերին ընթացք տալու ժամանակահատվածները) և անաչառության (վճիռների հավասարակշռվածությունը) տեսանկյունից:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ2)

(i) Հարկային պարտավորությունների հստակությունն ու համապարփակությունը.
(ii)Հարկ վճարողների համար հարկային պարտավորությունների և վարչական ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը.
(iii) Հարկերի գանգատարկման մեխանիզմի առկայությունը և գործունեությունը:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջները Գնահատման մեթոդաբանություն Մ2
(i)Հարկային պարտավորությունների հստակությունն ու համապարփակությունը	**Միավոր = A**. Բոլոր հիմնական հարկատեսակների վերաբերյալ օրենսդրությունն ու ընթացակարգերը համապարփակ և հստակ են, իսկ ներգրավված պետական մարմինների հայեցողական իրավասությունները՝ խիստ սահմանափակ: **Միավոր = B**. Հիմնական հարկատեսակների վերաբերյալ օրենսդրությունն ու ընթացակարգերը մեծ մասամբ համապարփակ ու հստակ են, իսկ ներգրավված պետական մարմինների հայեցողական իրավասությունները՝ բավականին սահմանափակ: **Միավոր = C**. Որոշ հիմնական հարկատեսակների վերաբերյալ օրենսդրությունն ու ընթացակարգերը համապարփակ են և հստակ, սակայն համակարգի անաչառությունը կասկածի տեղիք է տալիս՝ պայմանավորված ներգրավված պետական մարմինների զգալի հայեցողական իրավասություններով: **Միավոր = D**. Հարկման զգալի հատվածների վերաբերյալ օրենսդրությունն ու ընթացակարգերը համապարփակ և հստակ չեն և/կամ հարկային պարտավորությունների գնահատման հարցում վարչական, հայեցողական մոտեցման էական տարրեր են պարունակում:

(ii)Հարկ վճարողների համար հարկային պարտավորությունների և վարչական ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը	**Միավոր A**. Հարկ վճարողներն առանց դժվարության կարող են օգտվել բոլոր հիմնական հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների և վարչական ընթացակարգերի վերաբերյալ համապարփակ, օգտվելու տեսակետից հարմար և արդի տեղեկություններից, իսկ ԵՎ-ը այդ տեղեկությունները լրացնում է հարկ վճարողներին կրթելու նպատակով իրականացվող ակտիվ արշավներով: **Միավոր = B**: Հարկ վճարողներն առանց դժվարության կարող են օգտվել որոշ հիմնական հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների և վարչական ընթացակարգերի վերաբերյալ օգտվելու տեսակետից հարմար և արդի տեղեկություններից, իսկ մյուս հարկերի վերաբերյալ տեղեկությունները սահմանափակ են: **Միավոր = C**. Հարկ վճարողները կարող են օգտվել հարկային պարտավորությունների և վարչական ընթացակարգերի վերաբերյալ որոշ տեղեկություններից, սակայն տեղեկատվության օգտակարությունը սահմանափակ է՝ պայմանավորված միայն ընտրված հարկերի ընդգրկմամբ, համակողմանիության բացակայությամբ և /կամ արդիական չլինելով: **Միավոր = D**. Հարկ վճարողների համար արդի օրենսդրության և ընթացակարգային ուղեցույցների մատչելիությունը լուրջ թերություններ ունի:
(iii)Հարկերի գանգատարկման մեխանիզմի առկայությունը և գործունեությունը	**Միավոր A**.Ամբողջովին ստեղծված է թափանցիկ վարչական ընթացակարգերով հարկերի գանգատարկման համակարգ՝ համապատասխան զսպումների և հակակշիռների մեխանիզմով, որն իրականացվում է անկախ ինստիտուցիոնալ կառուցվածքներով և գործում է արդյունավետ կերպով, բավարար հասանելիությամբ և անաչառությամբ, իսկ որոշումներն իրականացվում են առանց հապաղման: **Միավոր = B**. Թափանցիկ վարչական ընթացակարգերով հարկերի գանգատարկման համակարգը ամբողջովին ստեղծված է և գործում է, սակայն դեռ շատ վաղ է համակարգի արդյունավետության գնահատման համար կամ պետք է անդրադառնալ հասանելիության, արդյունավետության, անաչառության կամ իր որոշումների նկատմամբ հետագա

	արդյունավետ վերահսկողության հետ կապված հարցերին: **Միավոր = C**. Ստեղծվել է վարչական ընթացակարգերի հարկային գանգատարկման համակարգ, սակայն դրա կառուցվածքը զգալի փոփոխելու կարիք կա, որպեսզի այն դառնա անաչառ, թափանցիկ և արդյունավետ: **Միավոր = D**. Հարկերի գանգատարկման գործող համակարգ չի ստեղծվել:

PI-14. Հարկ վճարողների գրանցման և հարկերի գնահատման միջոցառումների արդյունավետություն

Հարկերի գնահատման արդյունավետությունը որոշվում է հարկային պարտավորություններ ունեցող հարկ վճարողների գրանցման և այդ հարկ վճարողների հարկային պարտավորության ճշգրիտ գնահատման միջև փոխհարաբերությամբ:

Եկամուտների վարչարարության (ԵՎ) կողմից ներդրված հսկողական մեխանիզմները խթանում են հարկ վճարողների գրանցումը: Հարկ վճարողների եզակի հերթական համարների վրա հիմնված հարկ վճարողների տվյալների բազայի վարումը նման հսկողության համակարգի կարևոր տարրերից է, սակայն այն առավելագույնս արդյունավետ է դառնում, երբ զուգակցվում է կառավարության այլ գրանցման համակարգերի հետ, որոնք ներառում են հարկվող շրջանառության և ակտիվների տարրեր (ինչպես օրինակ գործունեության լիցենզիաների տրամադրում, բանկային հաշիվների և կենսաթոշակային հիմնադրամի հաշիվների բացում): Բացի այդ, ԵՎ-ները պետք է գրանցման պահանջների կատարումը ապահովեն հավանական հարկ վճարողների նպատակային հարցումների միջոցով, օրինակ՝ ընտրովի, ֆիզիկական զննություն իրականացնելով գործունեության շենքում կամ նստավայրում:

Հարկ վճարողների կողմից որպես հարկատու գրանցվելու և հարկային հայտարարագրեր ներկայացնելու իրենց ընթացակարգային պարտավորությունների կատարման ապահովումը խրախուսելու համար հաճախ տուգանքներ են կիրառվում, որոնք, պայմանավորված սխալի լրջությամբ, կարող են տարբեր լինել: Նման տուգանքների արդյունավետությունը որոշվում է նրանով, թե արդյոք տուգանքները բավականաչափ բարձր են, որպեսզի ցանկալի ազդեցությունն ունենան և իրականացվում են հետևողականորեն և անաչառ կերպով:

Ժամանակակից ԵՎ-ներն աստիճանաբար ավելի շատ են ապավինում ինքնագնահատման համակարգերին և որպես հարկային համապատասխանությունն ամրապնդելու և հարկերի վճարումից խուսափումը զսպելու առանցքային միջոցառում՝ իրականացնում են ռիսկերին ուղղված հարկ վճարողների ստուգումներ: Ռեսուրսների անխուսափելի սահմանափակությունից հետևում է, որ ստուգումների ընտրության գործընթացները պետք է կատարելագործվեն, որպեսզի բացահայտվեն այն հարկ վճարողները և հարկման ենթակա գործունեության տեսակները, որոնք պարունակում են սահմանված հարկային պահանջների չկատարման հավանական ամենամեծ ռիսկերը: Ռիսկի ցուցանիշներն են՝ հարկային հաշվետվությունների փոփոխման հաճախականությունն ու հարկային ստուգումների արդյունքում հայտաբերված լրացուցիչ հարկերը: Հարկային պահանջները չկատարելու և այլ

ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումն ու վերլուծությունը անհրաժեշտ է հարկային ստուգման աշխատանքները և միջոցները կոնկրետ ոլորտների և հարկ վճարողների խմբերին ուղղելու համար, որոնց գծով եկամուտները կորուստների ամենամեծ ռիսկն են պարունակում: Սահմանված պահանջների չկատարման առավել լուրջ հարցերի թվին են դասվում հարկերի չվճարման դիտավորյալ փորձերը և կեղծիքը, որ կարող են ներառել ԵՎ-ի ներկայացուցիչների հետ գաղտնի համաձայնությունը: Հարկերի չվճարման և կեղծիքի խոշոր դեպքերը ԵՎ-ի կողմից կանոնավոր կերպով բացահայտելու, հետաքննելու և հաջողությամբ դատական կարգով հետապնդելու կարողությունն անհրաժեշտ է ապահովելու համար, որ հարկ վճարողները կատարեն իրենց պարտավորությունները:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ2)

(i) Հսկողություն հարկ վճարողների գրանցման համակարգում:
(ii) Գրանցման և հայտարարագրման պարտավորությունների չկատարման համար տուգանքների արդյունավետությունը:
(iii) Հարկային ստուգումների և կեղծիքների հետաքննության ծրագրերի պլանավորում ու մոնիտորինգ:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն Մ2
(i) Հսկողություն հարկ վճարողների գրանցման համակարգում	**Միավոր = A**. Հարկ վճարողները գրանցված են տվյալների բազայի ամբողջական համակարգում, որը կառավարության գրանցման այլ համապատասխան համակարգերի և ֆինանսական հատվածի կանոնակարգերի հետ ուղիղ կապով է ապահովված: **Միավոր = B**. Հարկ վճարողները գրանցված են ամբողջական տվյալների բազայի համակարգում, որը կառավարության գրանցման այլ համապատասխան համակարգերի և ֆինանսական հատվածի կանոնակարգերի հետ որոշ կապերով է ապահովված: **Միավոր = C**. Հարկ վճարողներն առանձին հարկերի համար գրանցված են տվյալների բազայի համակարգում, որը հնարավոր է ամբողջական և հետևողական կերպով կապակցված չլինեն: Գրացման/լիցենզավորման այլ գործառույթների հետ կապը կարող է թույլ լինել, սակայն դրանք լրացվում են հավանական հարկ վճարողների ոչ պարբերական հետազոտություններով: **Միավոր = D**. Հարկ վճարողների գրանցումը չի ենթարկվում որևէ արդյունավետ հսկողության կամ կիրարկման համակարգերի:

(ii) Գրանցման և հայտարարագրման պարտավորությունների չկատարման համար տուգանքների արդյունավետությունը	**Միավոր = A**. Անհամապատասխանության բոլոր ոլորտների համար տուգանքները բավականաչափ բարձր են սահմանված, որպեսզի հանդես գան որպես կանխարգելման միջոց, և հետևողականորեն կիրառվում են: **Միավոր = B**. Անհամապատասխանության էական ոլորտների հիմնական մասի համար տուգանքներ են գործում, սակայն ոչ միշտ են արդյունավետ՝ պայմանավորված ոչ բավարար մակարդակով և/կամ ոչ հետևողական կիրառմամբ: **Միավոր = C**. Ընդհանուր առմամբ անահամապատասխանության համար առկա են տուգանքներ, սակայն զգալի փոփոխություններ են անհրաժեշտ դրանց կառուցվածքում, մակարդակում կամ կիրառման ձևում, որպեսզի դրանք իրական ազդեցություն ունենան համապատասխանության վրա: **Միավոր = D**. Անհամապատասխանության համար ընդհանուր առմամբ տուգանքներ չկան կամ անարդյունավետ են (այսինքն՝ չափազանց ցածր են, որպեսզի ազդեցություն ունենան կամ հազվագյուտ են կիրառվում):
(iii) Հարկային ստուգումների և կեղծիքների ուսումնասիրման ծրագրերի պլանավորում և մոնիտորինգ	**Միավոր A**. Հարկային ստուգումները և կեղծիքների ուսումնասիրումը կառավարվում է և դրա մասին հաշվետվություններ են ներկայացվում ըստ ստուգումների համակողմանի և փաստաթղթերով հիմնավորված ծրագրի, որում ռիսկի գնահատման հստակ չափանիշներ են առկա բոլոր հիմնական հարկերի համար, որոնց մասով ինքնագնահատում է կիրառվում: **Միավոր = B**. Հարկային ստուգումները և կեղծիքի ուսումնասիրությունները կառավարվում են և դրանց մասին հաշվետվություններ են ներկայացվում փաստաթղթերով հիմնավորված ստուգումների ծրագրով, որում ռիսկի գնահատման հստակ չափանիշներ են առկա առնվազն մեկ խոշոր հարկային ոլորտում, որի գծով ինքնագնահատում է կատարվում: **Միավոր = C**. Առկա է հարկային ստուգումների և կեղծիքի ուսումնասիրման շարունակական ծրագիր, սակայն ստուգումների ծրագրերը հիմնված չեն ռիսկի գնահատման հստակ չափանիշների վրա: **Միավոր = D**. Հարկային ստուգումները և կեղծիքի ուսումնասիրությունները իրականացնվում են ըստ առանձին դեպքերի, եթե ընդհանրապես իրականացվում են:

PI-15. Հարկային վճարումների հավաքագրման արդյունավետություն

Հարկային ապառքների կուտակումը կարող է բյուջետային իրական արդյունքների բարձր ցուցանիշները թուլացնող վճռորոշ գործոն լինել, մինչդեռ հարկային պարտքերի հավաքագրումը հարկային գնահատման գործընթացի նկատմամբ վստահություն է ձևավորում և բոլոր հարկ վճարողների նկատմամբ արտացոլում հավասար մոտեցում, անկախ նրանից թե վճարում են կամավոր, թե նրանց նկատմամբ սերտ վերահսկողություն իրականացնելու կարիք կա: Հարկային ապառքների մակարդակն ինքնին պարտադիր չէ, որ կապված լինի հարկային հավաքագրման համակարգի արդյունավետության հետ, քանի որ հարկերի գնահատման մեծ ձգտումը կարող է զգալի ավելացնել հարկային ապառքները: Սակայն գնահատված հարկերը հավաքագրելու ԵՎ-ի կարողությունն առանցքային է, եթե իհարկե ընդհանուր ապառքների մակարդակը անէական չէ: Ապառքների հավաքագրման ջանքերի մի մասը կապված է վիճարկվող հարկային պարտքի խնդրի կարգավորման հետ: Որոշ երկրներում վիճարկվող հարկային ապառքները կազմում են ընդհանուր հարկային ապառքների զգալի մասը, ինչի պատճառով համախառն և զուտ ապառքներում հնարավոր են զգալի տարբերություններ (համապատասխանաբար, ներառելով և չներառելով վեճերը):

Հավաքագրումների արագ փոխանցումը Գանձապետարան կարևոր է ապահովելու համար, որ հավաքագրված եկամուտները ծախսերի կատարման համար մատչելի լինեն Գանձապետարանին: Դա կարող է տեղի ունենալ կամ այնպիսի համակարգի միջոցով, որը հարկ վճարողներին պարտավորեցնում է ուղղակիորեն վճարումներ կատարել Գանձապետարանի կողմից հսկվող հաշիվներին (որը հնարավոր է, որ կառավարվի բանկի կողմից) կամ երբ ԵՎ-ն վարում է իր սեփական հավաքագրման հաշիվները, այդ հաշիվներից հաճախակի և ամբողջական փոխանցումներ կատարելով Գանձապետարանի կողմից հսկվող հաշիվներին (նշված ժամանակահատվածները չեն ներառում բանկային համակարգի ուշացումները):

Հարկային գնահատումների, հավաքագրումների, ապառքների և Գանձապետարան կատարվող փոխանցումների (Գանձապետարանի կողմից ստացումների) հանրագումարային տվյալների վերաբերյալ պետք է կանոնավոր հաշվետվություններ ներկայացվեն և համադրվեն, ըստ անհրաժեշտության, որպեսզի հավաքագրման համակարգը գործի ըստ նախատեսվածի, հարկային ապառքները մոնիտորինգի ենթարկվեն և եկամուտների տատանումները հասցվեն նվազագույնի:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Համախառն հարկային ապառքների հավաքագրման գործակիցը, որը ֆիսկալ տարվա սկզբում հարկային ապառքների տոկոսն է, որ տվյալ ֆիսկալ տարվա ընթացքում հավաքագրվել է (վերջին երկու ֆիսկալ տարվա միջին ցուցանիշը):
(ii) Եկամուտների վարչարարության կողմից հավաքագրված հարկերը գանձապետարան փոխանցելու արդյունավտությունը:
(iii) Հարկային գնահատումների, հավաքագրումների, ապառքների գրանցումների և Գանձապետարանի մուտքերի միջև ամբողջական հաշիվների համադրման պարբերականությունը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Վերջին երկու ֆիսկալ տարիների ընթացքում պարտքի հավաքագրման միջին տոկոսային ցուցանիշը կազմել է 90% և ավելի ԿԱՄ հարկային ապառքների ընդհանուր գումարը չնչին է (այսինքն՝ ընդհանուր տարեկան հավաքագրումների 2%-ից փոքր): (ii) Ողջ հարկային եկամուտները ուղղակիորեն վճարվում են գանձապետարանի կողմից վերահսկվող հաշիվներին կամ փոխանցումները գանձապետարան կատարվում են ամեն օր: (iii) Հարկային գնահատումների, հավաքագրումների և գանձապետարան կատարվող փոխանցումների ամբողջական համադրումը կատարվում է առնվազն ամիսը մեկ անգամ՝ ամսվա ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:
B	(i) Վերջին երկու ֆիսկալ տարիների ընթացքում պարտքի հավաքագրման միջին տոկոսային ցուցանիշը կազմել է 75-90%, իսկ հարկային ապառքների ընդհանուր գումարն էական է: (ii) Հավաքագրված եկամուտները Գանձապետարան են փոխանցվում առնվազն շաբաթական կտրվածքով: (iii) Հարկային գնահատումների, հավաքագրումների, ապառքների և գանձապետարան կատարված փոխանցումների լիարժեք համադրումը կատարվում է առնվազն եռամսյակային կտրվածքով, եռամսյակի ավարտից հետո վեց շաբաթվա ընթացքում:
C	(i) Վերջին երկու ֆիսկալ տարիների ընթացքում պարտքի հավաքագրման միջին տոկոսային ցուցանիշը կազմել է 60-75%, իսկ հարկային ապառքների ընդհանուր գումարը էական է: (ii) Հավաքագրված եկամուտները առնվազն ամսական կտրվածքով փոխանցվում են գանձապետարան: (iii) Հարկային գնահատումների, հավաքագրումների, ապառքների և գանձապետարան կատարված փոխանցումների ամբողջական համադրում է կատարվում առնվազն տարեկան կտրվածքով, տարվա ավարտից հետո երեք ամսվա ընթացքում:
D	(i) Վերջին երկու տարիների ընթացքում պարտքի հավաքագրման միջին տոկոսային ցուցանիշը կազմել է 60%-ից ցածր ցուցանիշ, իսկ հարկային ապառքների ընդհանուր գումարը էական է եղել(այսինքն՝ ընդհանուր տարեկան հավաքագրումների 2% -ից ավելին): (ii) Հավաքագրված եկամուտները գանձապետարան են փոխանցվում ամսականից պակաս պարբերականությամբ: (iii) Հարկային գնահատումների, հավաքագրումների, ապառքների և Գանձապետարան կատարված փոխանցումների ամբողջական համադրումը տարեկան կտրվածքով չի իրականացվում կամ կատարվում է ավելի քան երեք ամիս ուշացումով:

PI-16. Ծախսային պարտավորությունների ստանձնման համար միջոցների առկայության կանխատեսելիություն

Բյուջեի արդյունավետ կատարումը, ըստ աշխատանքային ծրագրերի, պահանջում է, որ ծախսող նախարարությունները, գերատեսչությունները և գործակալությունները (ՆԳԳ) ստանան հուսալի տեղեկություններ միջոցների առկայության վերաբերյալ, որոնց շրջանակում նրանք կարող են ընթացիկ և կապիտալ ծախսերի համար պարտավորություն ստանձնել: Այս ցուցանիշի միջոցով գնահատվում է, թե որքանով է ֆինանսների կենտրոնական նախարարությունը ՆԳԳ-ներին հուսալի տեղեկություններ տրամադրում միջոցների մատչելիության վերաբերյալ, որ կենտրոնական կառավարության բյուջեում գերատեսչական (կամ ծրագրային) բյուջետային ղեկավարները (կամ քվեները) կառավարում են և հետևաբար ֆինանսների նախարարությունից նման տեղեկությունների առաջնային ստացողներն են հանդիսանում: Այս ցուցանիշը վերաբերում է նույն ՆԳԳ-ներին, ինչպես PI-11-ը:

Որոշ համակարգերում, միջոցները (պարտավորությունների առավելագույն չափը, ծախսելու իրավասությունը կամ դրամական միջոցների փոխանցումը) ֆինանսների նախարարության կողմից տրամադրվում են բյուջետային տարվա ընթացքում՝ փուլերով (ամսական, եռամսյակային և այլն): Մյուս երկրներում, տարեկան բյուջեի մասին օրենքի ընդունումը լիարժեք իրավասություն է տալիս ծախսելու տարվա սկզբին, սակայն ֆինանսների նախարարությունը (կամ այլ կենտրոնական գերատեսչությունը) կարող է գործնականում ուշացնել նախարարությունների կողմից նոր պարտավորությունների ստանձնումը (և համապատասխան վճարումների կատարումը), երբ դրամական միջոցների հոսքերի հետ կապված խնդիրներ են առաջանում: Հուսալիության համար՝ կոնկրետ ժամանակահատվածի համար կազմակերպությանը տրամադրված միջոցների գումարը չպետք է կրճատվի այդ ժամանակահատվածում:

Գանձապետարանի կողմից կանխիկ դրամական միջոցների հոսքերի արդյունավետ ծրագրումը, մոնիտորինգը և կառավարումը նպաստում է ՆԳԳ-ների համար միջոցների մատչելիության կանխատեսելիությանը՝ հիմնված դրամական միջոցների ներհոսքի, ինչպես նաև խոշոր, ոչ բնորոշ արտահոսքի (ինչպես օրինակ ընտրությունների անցկացման ծախսերը և առաձին կապիտալ ներդրումները) կանոնավոր և հուսալի կանխատեսումների վրա, որոնք կապված են առանձին ՆԳԳ-ների բյուջեի կատարման և պարտավորությունների ծրագրերի հետ և ներառում են տարվա ընթացքում նախատեսվող փոխառությունները՝ ցանկացած պահի ապահովելով բավարար իրացվելիություն:

Հաշվի առնելով եկամուտների և/կամ ծախսերի վրա ազդող չնախատեսված իրադարձությունները՝ կառավարությունների կողմից հատկացված գումարներում տարվա ընթացքում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Սկզբնական բյուջետային հատկացումների կանխատեսելիության և ամբողջականության վրա ազդեցությունը նվազագույնի է հասցվում նախապես սահմանելով ճշգրտման մեխանիզմ, որտեղ սիստեմատիկ և թափանցիկ կերպով ճշգրտումը կապվում է բյուջետային գերակայությունների հետ (օրինակ՝ կոնկրետ ձայների/քվեների կամ բյուջետային տողերի պաշտպանումը, որոնք հռչակվում են գերակա կամ ասենք, «աղքատությանն առնչվող»): Եվ ընդհակառակը, ճշգրտումներ կարող են իրականացվել առանց հստակ կանոնների/ուղեցույցերի կամ ոչ պաշտոնապես (օրինակ՝ ուշացնելով նոր պարտավորությունների ստանձնումը): Թեև բյուջետային շատ ճշգրտումներ կարող են իրականացվել վարչականորեն՝ բյուջետային դասակարգումների առավել ընդհանուր մակարդակում ծախսերի կազմի

իրական արդյունքների վրա փոքր ազդեցություն ունենալով, առավել կարևոր փոփոխությունները կարող են փաստացի կազմը փոխել գերատեսչական, գործառական և տնտեսագիտական դասակարգման համեմատաբար հանրագումարային մակարդակներում: Կանոնները, թե երբ պետք է օրենսդիրը տարվա ընթացքում ներգրավվի նմանատիպ բյուջետային փոփոխությունների իրականացման գործում, գնահատվում են PI-27 ցուցանիշում և այստեղ չեն ընդգրկվում:

Ծախսերի համար պարտավորությունների ստանձնման առավելագույն սահմանների պահպանումն այստեղ չի գնահատվում, սակայն այն ընդգրկվում է ներքին հսկողության վերաբերյալ PI-20 ցուցանիշում:

Գնահատման ենթակա չափումները (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Որքանով են կանխիկ դրամական միջոցների հոսքերը կանխատեսվում և մոնիտորինգի ենթարկվում:
(ii) Ծախսերի գծով պարտավորությունների ստանձման առավելագույն չափի վերաբերյալ տարվա ընթացքում պարբերական տեղեկությունների հուսալիությունն ու ընդգրկած ժամանակահատվածը:
(iii) ՆԳԳ-ների ղեկավարությունից ավելի բարձր մակարդակում կայացվող որոշումների հիման վրա բյուջետային հատկացումներում փոփոխությունների կատարման պարբերականությունը և թափանցիկությունը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Ֆիսկալ տարվա համար կազմվում է դրամական հոսքերի կանխատեսում, որը դրամական միջոցների փաստացի ներհոսքի և արտահոսքի հիման վրա ամսական կտրվածքով վերանայվում է: (ii) ՆԳԳ-երը կարողանում են ծախսերը ծրագրել և դրանց գծով պարտավորություններ ստանձնել առնվազն վեց ամիս առաջ՝ բյուջեով նախատեսված հատկացումների համաձայն: (iii) Տարվա ընթացքում բյուջետային հատկացումների էական ճշգրտումներ մեկ կամ երկու անգամ են տեղի ունենում, և դրանք կատարվում են թափանցիկ և կանխատեսելի ձևով:
B	(i) Ֆիսկալ տարվա համար կազմվում է դրամական հոսքերի կանխատեսում, որը դրամական միջոցների փաստացի ներհոսքի և արտահոսքի հիման վրա առնվազն եռամսյակային կտրվածքով վերանայվում է: (ii) ՆԳԳ-ներին առնվազն մեկ եռամսյակ առաջ հուսալի տեղեկություններ են տրամադրվում առավելագույն գումարների վերաբերյալ, որոնցով կարող են պարտավորություններ ստանձնել: (iii) Տարվա ընթացքում բյուջետային հատկացումների էական ճշգրտումներ մեկ կամ երկու անգամ են տեղի ունենում, և դրանք կատարվում են բավականին թափանցիկ ձևով:
C	(i) Ֆիսկալ տարվա համար կազմվում է դրամական հոսքերի կանխատեսում, սակայն չի վերանայվում (կամ միայն մասամբ և ոչ հաճախ է վերանայվում): (ii) ՆԳԳ-ներին հուսալի տեղեկություններ են տրամադրվում մեկ կամ երկու ամիս առաջ: (iii) Տարվա ընթացքում հաճախ են բյուջետային հատկացումների էական ճշգրտումներ կատարվում, բայց իրականացվում են միայն որոշ

	թափանցիկությամբ:
D	(i) Դրամական միջոցների հոսքերի պլանավորում և մոնիտորինգ չի իրականացվում կամ շատ վատ որակ ունի: (ii) ՆԳԳ-ները տեղեկացվում են պարտավորությունների ստանձնման առավելագույն չափի վերաբերյալ մեկ ամիսից էլ ավելի քիչ ժամանակ առաջ ԿԱՄ պարտավորությունների համար մատչելի փաստացի միջոցների վերաբերյալ որևէ հուսալի տեղեկություն չի տրամադրվում: (iii) Տարվա ընթացքում հաճախ են բյուջետային հատկացումների էական ճշգրտումներ կատարվում և թափանցիկ ձևով չեն իրականացվում:

PI-17. Դրամական մնացորդների, պարտքի և երաշխիքների գրանցում և կառավարում

Պարտքի կառավարումը՝ պայմանագրերի կնքման, սպասարկման և մարման տեսանկյունից, և պետական երաշխիքների տրամադրումը որպես կանոն ընդհանուր ֆիսկալ կառավարման խոշոր տարրերն են: Պարտքի և երաշխիքների վատ կառավարումը կարող է չափից ավելի բարձր պարտքի սպասարկման ծախսեր և էական ֆիսկալ ռիսկեր առաջացնել: Պարտքի վերաբերյալ տվյալների համակարգի վարումը և պարտքի պորտֆելի հիմնական առաձնահատկությունների և զարգացումների վերաբերյալ պարբերական հաշվետվությունների ներկայացումը, ինչպես նաև այնպիսի հարակից արդյունքը, ինչպիսին պարտքի սպասարկումը ճշգրիտ կերպով բյուջեում նախատեսելը, սահմանված ժամկետում սպասարկման վճարումը և պարտքի լավ ծրագրված երկարաձգումը, էապես կարևորվում են տվյալների ամբողջականության ապահովման առումով:

Անհարկի փոխառությունների և տոկոսագումարների գծով ծախսերից խուսափելու կարևոր պահանջն այն է, որ կառավարության բոլոր բանկային հաշիվների կանխիկ դրամական միջոցների մնացորդները բացահայտվեն և համախմբվեն (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցները և կառավարության կողմից վերահսկվող ծրագրերի հաշիվները): Բանկային հաշիվների հաշվարկն ու համախմբումը հեշտանում է միասնական գանձապետական հաշվի առկայության կամ բոլոր հաշիվների կենտրոնացման դեպքում: Չկենտրոնացված բազմաթիվ բանկային հաշիվների պարբերական համախմբում իրականացնելու համար որպես կանոն կառավարությանը սպասարկող բանկերի հետ էլեկտրոնային վճարահաշվարկային մեխանիզմների առկայություն կպահանջվի:

Պարտքի կառավարման կատարողականի համար խիստ կարևոր է նաև կառավարության տրամադրած երաշխիքների վերաբերյալ գրանցումների վարումն ու դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը, ինչպես նաև բոլոր երաշխիքների հաստատումը մեկ պետական մարմնի կողմից (օրինակ՝ ֆինանսների նախարարության կամ պարտքի կառավարման հանձնաժողովի կողմից)՝ համարժեք և թափանցիկ չափանիշների համապատասխան:

Պարտքի կայունության վերլուծությունների իրականացմանն անդրադարձ է կատարվում PI-12 ցուցանիշի մեկից ավելի տարիների հեռանկարների ներքո, իսկ երաշխիքների հետևանքով առաջացող պարտավորությունների մոնիտորինգը՝ PI-9 ցուցանիշի ֆիսկալ ռիսկի վերահսկողության ներքո:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ M2)

(i) Պարտքի վերաբերյալ տվյալների գրանցման և հաշվետվությունների ներկայացման որակ,
(ii) Կառավարության կանխիկ դրամական միջոցների մնացորդների համախմբման աստիճան,
(iii) Վարկերի գծով պայմանագրերի կնքման և երաշխիքների տրամադրման համակարգեր:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն Մ2
Պարտքի վերաբերյալ տվյալների գրանցման և հաշվետվությունների ներկայացման որակ	**Միավոր = A**. Ներքին և արտաքին պարտքի գրանցումներն ամբողջական են, թարմացվում և ամսական կտրվածքով համադրվում են խիստ ամբողջական համարվող տվյալների հետ: Առնվազն եռամսակային կտրվածքով կազմվում են կառավարման և վիճակագրական համապարփակ հաշվետվություններ (ընդհանուր պարտքի սպասարկման և գործառնությունների վերաբերյալ): **Միավոր = B.** Ներքին և արտաքին պարտքի գրանցումներն ամբողջական են, թարմացվում և համադրվում են եռամսյակային կտրվածքով: Տվյալները համարվում են բավականաչափ բարձր չափանիշների բավարարող, սակայն համադրման փոքր խնդիրներ են առաջանում: Առնվազն տարեկան կտրվածքով կազմվում են կառավարման և վիճակագրական համապարփակ հաշվետվություններ (պարտքի սպասարկման, ընդհանուր պարտքի և գործառնությունների վերաբերյալ): **Միավոր = C**. Ներքին և արտաքին պարտքի գրանցումներն ամբողջական են, թարմացվում և համադրվում են առնվազն տարեկան կտրվածքով: Տվյալների որակը բավարար է համարվում, սակայն ընդունվում է, որ կան որոշ բացեր և համադրման խնդիրներ: Ընդհանուր պարտքի և սպասարկման վերաբերյալ հազվադեպ են հաշվետվություններ կազմվում և սահմանափակ բովանդակություն են ունենում: **Միավոր = D**. Պարտքի վերաբերյալ տվյալների գրանցումներն ամբողջական չեն և զգալի ոչ ճշգրիտ են:
(ii) Կառավարության կանխիկ դրամական միջոցների մնացորդների համախմբման աստիճանը	**Միավոր = A**. Կանխիկ դրամական միջոցների բոլոր մնացորդները հաշվարկվում են օրական կտրվածքով և համախմբվում են: **Միավոր = B**. Կանխիկ դրամական միջոցների հիմնական մնացորդները հաշվարկվում են առնվազն օրական կտրվածքով, սակայն որոշ արտաբյուջետային միջոցների մասով դա չի իրականացվում: **Միավոր = C**.Կառավարության կանխիկ դրամական միջոցների մնացորդների հիմնական մասի հաշվարկն ու

	համախմբումն իրականացվում է առնվազն ամսական կտրվածքով, սակայն կիրառվող համակարգը թույլ չի տալիս բանկային մնացորդների համախմբում իրականացնել: **Միավոր = D**. Մնացորդների հաշվարկն իրականացվում է անկանոն կերպով, եթե ընդհանրապես իրականացվում է, իսկ կիրառվող համակարգը թույլ չի տալիս բանկային մնացորդների համախմբում իրականացնել:
(iii) Վարկերի գծով պայմանագրերի կնքման և երաշխիքների տրամադրման համակարգեր:	**Միավոր = A**. Կենտրոնական կառավարության կողմից վարկերի գծով պայմանագրերի կնքումը և երաշխիքների տրամադրումն իրականացվում է թափանցիկ չափանիշների և ֆիսկալ ծրագրային ցուցանիշների համապատասխան և միշտ հաստատվում է կառավարության մեկ պատասխանատու մարմնի կողմից: **Միավոր = B**. Կենտրոնական կառավարության կողմից վարկերի գծով պայմանագրերի կնքումը և երաշխիքների տրամադրումը կատարվում է ընդհանուր պարտքի և ընդհանուր երաշխիքների սահմաններում և միշտ հաստատվում կառավարության մեկ պատասխանատու մարմնի կողմից: **Միավոր = C**. Կենտրոնական կառավարության կողմից վարկերի գծով պայմանագրերի կնքումը և երաշխիքների տրամադրումը միշտ հաստատվում է կառավարության մեկ պատասխանատու մարմնի կողմից, սակայն չեն որոշվում հստակ ուղեցույցերի, չափանիշների կամ ընդհանուր առավելագույն չափանիշների հիման վրա: **Միավոր = D**. Կենտրոնական կառավարության կողմից վարկերի գծով պայմանագրերի կնքումը և երաշխիքների տրամադրումը հաստատվում է կառավարության տարբեր մարմինների կողմից, առանց միասնական ամփոփման մեխանիզմի:

PI-18. Աշխատավարձերի ֆոնդի հսկողության արդյունավետություն

Աշխատավարձի ֆոնդը որպես կանոն կառավարության ծախսերի ամենախոշոր հոդվածն է և խոցելի է թույլ հսկողության և կոռուպցիայի նկատմամբ: Այս ցուցանիշը վերաբերում է սոսկ պետական ծառայողների աշխատավարձերին: Ժամանակավոր աշխատակիցների վարձատրությունը և հայեցողական նպաստները, որոնք աշխատավարձի ֆոնդի մաս չեն կազմում, ներառված են ընդհանուր ներքին հսկողության գնահատման մեջ (PI-20): Սակայն, պետական ծառայության տարբեր սեգմենտները կարող են գրանցվել տարբեր աշխատավարձերի վճարացուցակներում: Նման աշխատավարձերի վճարացուցակներից ամենակարևորները պետք է գնահատվեն որպես այս ցուցանիշի գնահատման հիմք և նշվեն տեքստում:

Աշխատավարձի վճարացուցակն ամրապնդվում է աշխատակիցների տվյալների բազայով (որոշ դեպքերում կոչվում է հաստիքացուցակ և պարտադիր չէ, որ

համակարգչայնացված լինի), որտեղ ներկայացվում է աշխատակիցների ցանկը, ովքեր պետք է վճարվեն ամեն ամիս և որը կարող է ճշտվել հաստատության հաստատված ցանկի և անհատական աշխատակիցների գրանցումների (կամ կադրերի գործերի) հետ: Աշխատակիցների տվյալների շտեմարանի և աշխատավարձերի վճարացուցակի միջև կապը հսկողության առանցքային միջոց է: Աշխատակիցների տվյալների շտեմարանի պահանջվող ցանկացած փոփոխությունների պետք է ժամանակին ընթացք տրվի փոփոխության մասին հաշվետվությամբ և դրանց արդյունքում պետք է աուդիտի հետք ձևավորվի: Աշխատավարձերի վճարացուցակի աուդիտը պետք է կանոնավոր բնույթ կրի՝ «ուրվական» աշխատակիցներին բացահայտելու, տվյալների բացերը լրացնելու և հսկողության թերությունները բացահայտելու համար:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Աշխատակիցների գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակի տվյալների ինտեգրման և համադրման աստիճանը:
(ii) Անձնակազմի գրանցումներում և աշխատակիցների վճարացուցակում ժամանակին փոփոխությունների իրականացումը:
(iii) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակի փոփոխությունների նկատմամբ ներքին հսկողությունը:
(iv) Աշխատավարձերի վճարացուցակի աուդիտի առկայությունը՝ հսկողության թերությունների և/կամ «ուրվական» աշխատակիցների հայտնաբերման համար:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Անձնակազմի տվյալների բազան և աշխատավարձերի վճարացուցակները ուղղակիորեն կապակցված են՝ տվյալների համապատասխանության ապահովման և ամսական համադրման համար: (ii) Անձնակազմի գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակի պահանջվող փոփոխությունները թարմացվում են ամսական կտրվածքով, որպես կանոն սահմանված ժամկետում՝ մինչև հաջորդ ամսվա վճարումները: Հետադարձ ճշգրտումները հազվագյուտ են (հուսալի տվյալների առկայության դեպքում, նրանում ճշտումներ են կատարվում առավելագույնը աշխատավարձերի վճարումների 3% -ում): (iii) Գրանցումները և աշխատավարձերի վճարացուցակներում փոփոխություններ կատարելու իրավասությունը սահմանափակ է և դրա արդյունքում աուդիտի հետք է ձևավորվում: (iv) Հսկողության թերությունների և/կամ «ուրվական» աշխատողների բացահայտման համար գործում է աշխատավարձերի ցուցակի տարեկան աուդիտի կայուն համակարգ:

B	(i) Անձնակազմի և աշխատավարձերի վճարացուցակի տվյալներն ուղղակիորեն կապակցված չեն, սակայն յուրաքանչյուր ամիս անձնակազմի գրանցումներում կատարված բոլոր փոփոխությունների մասով աշխատավարձերի վճարացուցակը հիմնավորվում է լիարժեք փաստաթղթերով և ստուգվում նախորդ ամսվա աշխատավարձերի ցուցակի տվյալների հետ: (ii) Աշխատակիցների գրանցումների և աշխատավարձերի վճարացուցակների փոփոխությունների թարմացումը կատարվում է մինչև երեք ամիս ուշացումով, սակայն ազդում է միայն փոփոխությունների փոքր մասի վրա: Հետադարձ ճշգրտումներ հազվադեպ են կատարվում: (iii) Աշխատակիցների գրանցումներում և աշխատավարձերի վճարացուցակում փոփոխությունների համար իրավասությունն ու հիմքերը հստակ են: (iv) Անցյալ երեք տարիների ընթացքում կենտրոնական կառավարության բոլոր մարմինների աշխատավարձերի վճարացուցակի առնվազն մեկ աուդիտ է իրականացվել (կամ փուլերով կամ որպես միասնական միջոցառում):
C	(i) Հնարավոր է, որ ամբողջությամբ չվարվի աշխատակազմի տվյալների շտեմարան, սակայն առնվազն վեցամսյա կտրվածքով կատարվի աշխատավարձերի վճարացուցակի համադրում աշխատակիցների գրանցումների հետ: (ii) Փոփոխությունների կատարումը աշխատակազմի գրանցումներում և աշխատավարձերի վճարացուցակում մինչև երեք ամիս ուշանում է, որի հետևանքով հաճախ հետադարձ ճշգրտումներ են կատարվում: (iii) Հսկողությունն առկա է, սակայն բավարար չէ տվյալների լիարժեք ամբողջականություն ապահովելու համար: (iv) Վերջին երեք տարիների ընթացքում իրականացվել են աշխատավարձերի վճարացուցակի մասնակի աուդիտներ կամ աշխատակիցների հարցումներ:
D	(i) Աշխատակազմի ամբողջական գրանցումների և աշխատակիցների տվյալների բազայի բացակայության պատճառով կամ երեք ցանկերը չհամադրելու հետևանքով աշխատավարձերի վճարացուցակի ամբողջականությունը էապես խաթարված է: (ii) Աշխատավարձերի ցուցակում և հաստիքացուցակում փոփոխությունների կատարման ուշացումը հաճախ երեք ամսից երկար է տևում և համատարած հետադարձ ճշգրտումներ պահանջում: (iii) Գրանցումների փոփոխությունների նկատմամբ հսկողությունը թերի է և նպաստում է վճարման սխալների առաջացմանը: (iv) Վերջին երեք տարիների ընթացքում աշխատավարձերի վճարացուցակի աուդիտ չի իրականացվել:

PI-19. Մրցակցություն, արժեք դրամի դիմաց և հսկողություն գնումների նկատմամբ

Պետական ծախսերի զգալի մասը կատարվում է պետական գնումների համակարգի միջոցով: Լավ գործող գնումների համակարգն ապահովում է, որ փողն արդյունավետ և օպերատիվ կերպով օգտագործվի: Ինչպես փորձը ցույց է տվել, պայմանագրերի

շնորհման ժամանակ բաց մրցակցությունը լավագույն հիմքն է ստեղծում կառավարության կողմից ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման նպատակով միջոցների ձեռքբերման և դրամի դիմաց արժեք ստանալու արդյունավետությունն ապահովելու համար: Այս ցուցանիշը կենտրոնանում է գնումների կանոնակարգման դաշտի որակի և թափանցիկության վրա՝ բաց և ազատ մրցույթի իրականացումը որպես գնումների նախընտրելի մեթոդ կիրառելու համար և սահմանում է բաց մրցույթի այլընտրանքային տարբերակները, որոնք կարող են նպատակահարմար լինել՝ կոնկրետ, սահմանված իրավիճակներում հիմնավորված լինելու դեպքում:

Գնումների համակարգին նպաստում է ընդհանուր հսկողության միջավայրը, որն առկա է ՊՖԿ համակարգում, այդ թվում՝ իրականացնող գործակալությունների կողմից կատարվող ներքին հսկողությունը և արտաքին աուդիտի կողմից իրականացվող արտաքին հսկողությունը, տե՛ս PI-20, PI-21, PI-22 և PI-26:

Սակայն պետական գնումների գործընթացի առանձնահատկությունը մասնավոր հատվածի մասնակիցների ուղղակի ներգրավումն է, ովքեր քաղաքացիների հետ մեկտեղ, գնումների գործընթացի արդյունքի ուղղակի շահագրգիռ կողմն են: Գնումների լավ համակարգում այս շահագրգիռ կողմերի մասնակցությունն օգտագործվում է հսկողության համակարգի շրջանակում՝ սահմանելով հստակ կանոնակարգված գործընթաց, որը մասնավոր հատվածի մասնակիցների կողմից բողոքների ներկայացման և ժամանակին դրանց լուծում տալու հնարավորություն է տալիս: Բողոքարկման գործընթացի և տեղեկությունների մատչելիությունը շահագրգիռ կողմերին դարձնում է համակարգի հսկողության մասնակից:

Գնահատման ենթակա չափումներ (գնահատման մեթոդ Մ2).

(i) Փոքր ձեռքբերումների համար սահմանված ազգային դրամային շեմը գերազանցող պայմանագրերի շնորհման համար բաց մրցույթների կիրառման վերաբերյալ փաստեր (շեմը գերազանցող շնորհված պայմանագրերի թվի տոկոսը):
(ii) Պակաս մրցակցային գնումների մեթոդների կիրառման հիմնավորվածության աստիճանը:
(iii) Գնումների բողոքարկման մեխանիզմի առկայությունն ու աշխատանքը:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն Մ2
(i) Փոքր ձեռքբերումների համար սահմանված ազգային դրամային շեմը գերազանցող պայմանագրերի շնորհման համար բաց մրցույթների կիրառում	**Միավոր = A**. Պետական պայմանագրերի շնորհման համար կիրառված մեթոդի վերաբերյալ առկա են ճշգրիտ տվյալներ և ցույց են տալիս, որ շեմը գերազանցող պայմանագրերի 75%-ից ավելին շնորհվում է բաց մրցութային կարգով: **Միավոր = B**. Պետական պայմանագրերի վերաբերյալ մատչելի տվյալները ցույց են տալիս, որ շեմը գերազանցող պայմանագրերի 50%-ից ավելի, բայց 75%-ի պակաս մասը շնորհվում են բաց մրցութային կարգով, սակայն հնարավոր է, որ տվյալները ճշգրիտ չլինեն: **Միավոր = C**. Առկա տվյալները ցույց են տալիս, որ շեմը գերազանցող պայմանագրերի 50%-ից ավելին

	շնորհվում են բաց մրցութային կարգով, սակայն տվյալները հնարավոր է, որ ճշգրիտ չլինեն: **Միավոր = D**. Տվյալները բավարար չեն պետական պայմանագրերի շնորհման մեթոդի գնահատման համար ԿԱՄ մատչելի տվյալները ցույց են տալիս, որ բաց մրցույթների կիրառումը սահմանափակ է:
(ii) Պակաս մրցակցային գնումների մեթոդների կիրառման հիմնավորվածությունը	**Միավոր = A**. Այլ պակաս մրցակցային մեթոդների կիրառումը հիմնավորվում է կանոնակարգման հստակ պահանջներով: **Միավոր = B**. Այլ պակաս մրցակցային մեթոդների կիրառումը հիմնավորվում է կանոնակարգման պահանջներով: **Միավոր = C**. Պակաս մրցակցային մեթոդների կիրառման հիմնավորումը թույլ է կամ բացակայում է: **Միավոր = D**. Կանոնակարգման պահանջներով բաց մրցույթը հստակ չի սահմանում որպես գնման նախընտրելի մեթոդ:
(iii) Գնումների բողոքարկման մեխանիզմի առկայությունն ու աշխատանքը	**Միավոր = A.** Գործում է գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների ներկայացման և ժամանակին լուծում տալու գործընթաց (օրենսդրությամբ սահմանված), որը ենթակա է արտաքին մարմնի կողմից վերահսկողության, իսկ բողոքների վերաբերյալ տվյալները հանրության կողմից ուսումնասիրման համար հասանելի են: **Միավոր = B**. Գործում է գնումների գործընթացի վերաբերյալ բողոքների ներկայացման և դրանց արձագանքելու գործընթաց (օրենսդրությամբ սահմանված), սակայն հնարավորություն չի տալիս բողոքի կարգավորման համար դիմել արտաքին վերադաս մարմնի: **Միավոր = C.** Առկա է գնումներին առնչվող բողոքների ներկայացման և դրանց արձագանքելու գործընթաց, սակայն այն վատ է նախագծված և չի գործում այնպես, որ ապահովի սահմանված ժամկետում բողոքների կարգավորումը: **Միավոր = D**. Չկա սահմանված գործընթաց, որը հնարավորություն կտա ներկայացնել և արձագանքել գնումների գործընթացի իրականացման վերաբերյալ բողոքներին:

PI-20. Ոչ աշխատավարձային ծախսերի նկատմամբ ներքին հսկողությունների արդյունավետություն

Ներքին հսկողության արդյունավետ համակարգն այն համակարգն է, որը (ա) հիմնավորված է (այսինքն՝ հիմնված է ռիսկերի և ռիսկերի կառավարման համար պահանջվող հսկողության գնահատման վրա), (բ) ընդգրկում է համակողմանի և ծախսարդյունավետ հսկողությունների խումբ (ուղղված գնումների և այլ ծախսային գործընթացների կանոններին համապատասխանության, սխալների և կեղծիքների կանխարգելման ու հայտնաբերման, տեղեկատվության և գույքի անվտանգության և հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների որակի ու սահմանված ժամկետներում դրանց ներկայացման ապահովմանը), (գ) համընդհանուր կերպով ընկալվում և կատարվում է և (դ) շրջանցվում է միայն իրավամբ արտակարգ դեպքերում: Ներքին հսկողության համակարգի արդյունավետության մասին փաստերը պետք է ստացվեն կառավարության ֆինանսական հսկիչներից, կանոնավոր ներքին և արտաքին աուդիտից կամ ղեկավարության կողմից իրականացված այլ հետազոտություններից: Ընթացիկ ֆինանսական ընթացակարգերում սխալների կամ մերժման տոկոսները կարող են տեղեկության մի տեսակ լինել:

Այս խմբի մյուս ցուցանիշներն ընդգրկում են պարտքի կառավարման, աշխատավարձերի վճարացուցակի կառավարման և կանխավճարների կառավարման գծով հսկողությունը: Հետևաբար այս ցուցանիշը միայն ընգրկում է ծախսերի գծով ստանձնած պարտավորությունները և ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումը, ժամանակավոր աշխատակիցների աշխատավարձերը և աշխատակիցների հայեցողական նպաստները: Ծախսային պարտավորությունների նկատմամբ հսկողության արդյունավետությունը առանձնացվում է որպես սույն ցուցանիշի առանձին տարր՝ պայմանավորված կանխատեսված մատչելի դրամական միջոցների սահմաններում կառավարության վճարման պարտավորությունների ապահովման համար նման հսկողության կարևորությամբ, որի միջոցով էլ կառավարությունը կխուսափի ծախսերի գծով ապառքների առաջացումից (տե՛ս ցուցանիշ PI-4):

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1).

(i) Ծախսերի գծով պարտավորությունների ստանձնման նկատմամբ հսկողության արդյունավետություն:
(ii) Ներքին հսկողության մյուս կանոնների/ընթացակարգերի համակողմանիությունը, հիմնավորվածությունը ու դրանց ընկալումը:
(iii) Գործարքների ձևակերպման և գրանցման կանոնների հետ համապատասխանության աստիճանը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Ծախսային պարտավորությունների ստանձնման գծով առկա է համակողմանի հսկողություն և արդյունավետ կերպով պարտավորությունները սահմանափակվում են փաստացի առկա դրամական միջոցների և հաստատված բյուջետային հատկացումների սահմանում (ըստ փոփոխությունների): (ii) Ներքին հսկողության այլ կանոններն ու ընթացակարգերը հիմնավորված են և ներառում են համակողմանի և ընդհանուր առմամբ ծախսարդյունավետ հսկողությունների խումբ, որը համատարած կերպով ընկալվում է: (iii) Կանոնների պահպանման ցուցանիշը շատ բարձր է, իսկ պարզեցված

	կամ արտակարգ դեպքերի համար նախատեսված ընթացակարգերի կիրառումը՝ ոչ էական:
B	(i) Ծախսային պարտավորությունների ստանձնման գծով առկա է համակողմանի հսկողություն և արդյունավետ կերպով հիմնական ծախսատեսակների գծով պարտավորությունները սահմանափակվում են փաստացի առկա դրամական միջոցների և հաստատված բյուջետային հատկացումների սահմանում, որոշ փոքր բացառություններով: (ii) Ներքին հսկողության մյուս կանոնները և ընթացակարգերը ներառում են համակողմանի հսկողությունների խումբ, որը համատարած կերպով ընկալվում է, իսկ որոշ դեպքերում կարող են չափազանց շատ լինել (օրինակ՝ հաստատումների կրկնողությամբ) և հանգեցնել կադրերի օգտագործման անարդյունավետության և անհարկի ուշացումների: (iii) Կանոնների պահպանման ցուցանիշը բավականաչափ բարձր է, պարզեցված կամ արտակարգ դեպքերի համար նախատեսված ընթացակարգերը հազվադեպ են կիրառվում առանց բավարար հիմնավորման:
C	(i) Ծախսերի գծով պարտավորությունների ստանձնման ընթացակարգեր առկա են և մասամբ են արդյունավետ, սակայն դրանք հնարավոր է, որ բոլոր ծախսերը համակողմանիորեն չընդգրկեն կամ դրանք կարող են երբեմն խախտվել: (ii) Ներքին հսկողության գծով այլ կանոնները և ընթացակարգերը բաղկացած են գործարքների ձևակերպման և գրանցման տարրական կաննոներից, որոնք դրանց կիրառմամբ անմիջականորեն զբաղվողների համար հասկանալի են: Որոշ կանոններ և ընթացակարգեր, հնարավոր է, որ ավելի են, քան անհրաժեշտ է, իսկ ավելի պակաս կարևոր հարցերի նկատմամբ հսկողությունը կարող է թերի լինել: (iii) Գործարքների մեծ մասի դեպքում կանոնները կատարվում են, իսկ չհիմնավորված իրավիճակներում պարզեցված կամ արտակարգ իրավիճակների համար նախատեսված ընթացակարգերի կիրառումը կարևոր մտավախություն է:
D	(i) Պարտավորությունների նկատմամբ հսկողության համակարգերը որպես կանոն բացակայում են ԿԱՄ շարունակաբար խախտվում են: (ii) Բացակայում են բոլոր կարևոր հարցերին առնչվող հստակ, համակողմանի հսկողության կանոնները/ընթացակարգերը: (iii) Կանոնների հիմնական մասը շարունակաբար և համատարած կերպով չի կատարվում՝ պայմանավորված կանոնների ուղղակի խախտման կամ պարզեցված/արտակարգ իրավիճակների համար նախատեսված ընթացակարգերի շարունակական չհիմնվորված կիրառմամբ:

PI-21. Ներքին աուդիտի արդյունավետություն

Ներքին հսկողության համակարգերի գործունեության վերաբերյալ ներքին աուդիտի գործառույթի (կամ համակարգերի մոնիտորինգի համարժեք գործառույթի) միջոցով անհրաժեշտ է կանոնավոր և համարժեք կարծիք ներկայացնել ղեկավարությանը: Նման գործառույթը պետք է բավարարի միջազգային չափանիշները, ինչպես օրինակ՝ ISPPIA[11] (ներքին աուդիտորների մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտները)՝ (ա) մասնավորապես մասնագիտական անկախությանը վերաբերող համապատասխան կառուցվածքի, (բ) լիազորությունների բավարար լայն շրջանակի, տեղեկատվությունից օգտվելու իրավունքի և զեկուցելու իրավասության, (գ) աուդիտի մասնագիտական մեթոդների, այդ թվում՝ ռիսկի գնահատման մեթոդների կիրառման առումով: Այս գործառույթը պետք է բևեռվի էական համակարգային հարցերի վերաբերյալ տեղեկացնելու վրա՝ կապված ֆինանսական և գործառնական տեղեկատվության հուսալիության և ամբողջականության, գործառնությունների արդյունավետության և օպերատիվության, գույքի/ակտիվների անվտանգության ապահովման հետ և օրենքների, կանոնակարգերի և պայմանագրերի դրույթներին համապատասխան գործելու հետ: Որոշ երկրներում ներքին աուդիտի գործառույթը միայն գործարքների նախնական ստուգման մեջ է կայանում, ինչն այստեղ համարվում է ներքին հսկողության համակարգի մաս և հետևաբար գնահատվում է PI-20 ցուցանիշի շրջանակում:

Ներքին աուդիտի (կամ համակարգերի մոնիտորինգի) արդյունավետ գործառույթի վերաբերյալ կոնկրետ փաստերը կներառեն նաև բարձր ռիսկային ոլորտների վրա ուշադրության կենտրոնացումը, Գերագույն ատյանի աուդիտի հաստատության կողմից ներքին աուդիտի հաշվետվությունների օգտագործումը և ներքին աուդիտի ստացած տվյալների ուղղությամբ ղեկավարության իրականացրած գործողությունները: Վերջինս չափազանց կարևոր է, քանի որ ստացված արդյունքների ուղղությամբ միջոցառումների բացակայությունը ամբողջովին խաթարում է ներքին աուդիտի գործառույթի հիմքը:

Ներքին աուդիտի գործառույթը կարող է իրականացվել կազմակերպության կողմից, որը կենտրոնական կառավարության տարբեր մարմինների նկատմամբ իրավասություններ ունի (ինչպես օրինակ կառավարության գլխավոր վերահսկողության կամ ֆինանսական գլխավոր վերահսկողության մարմինը) կամ կառավարության առանձին մարմինների համար ներքին աուդիտի առանձին գործառույթների միջոցով: Բոլոր նման աուդիտի կազմակերպությունների ընդհանուր արդյունավետությունը սույն ցուցանիշի հիմքն է:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1).

(i) Ներքին աուդիտի գործառույթի ընդգրկումն ու որակը:
(ii) Հաշվետվությունների պարբերականությունը և տարածումը:
(iii) Ներքին աուդիտի ստացած տվյալներին ղեկավարության

[11] Ներքին աուդիտորների մասնագիտական գործունեության ստանդարտներ , որ հրապարակվել են Ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից:

արձագանքի աստիճանը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն M1)
A	(i) Կենտրոնական կառավարության բոլոր մարմիններում գործում է ներքին աուդիտը և ընդհանուր առմամբ բավարարում է մասնագիտական չափանիշները: Այն բևեռվում է սիստեմատիկ խնդիրների վրա (առնվազն աշխատակիցների ժամանակի 50% -ը): (ii) Հաշվետվություններում պահպանվում է սահմանված ժամանակացույցը և դրանք բաժանվում են աուդիտի ենթարկված մարմնին, ֆինանսների նախարարությանը և ԳԱԱՀ-ին: (iii) Ներքին աուդիտի ստացած արդյունքների ուղղությամբ ղեկավարության կողմից ժամանակին և համակողմանի միջոցառումներ են ձեռնարկվում կենտրոնական կառավարության բոլոր մարմիններում:
B	(i) Ներքին աուդիտը գործում է կենտրոնական կառավարության մարմինների մեծ մասում (չափված ըստ եկամուտների/ծախսերի արժեքի) և հիմնականում բավարարում է մասնագիտական չափանիշները: Այն ուղղված է սիստեմատիկ խնդիրներին (առնվազն աշխատակիցների ժամանակի 50% -ը): (ii) Հաշվետվությունները կանոնավոր կերպով կազմվում են աուդիտի ենթարկված կազմակերպությունների մեծ մասի համար և տրամադրվում են աուդիտի ենթարկված մարմնին, ֆինանսների նախարարությանը և ԳԱԱՀ-ին: (iii) Ժամանակին և համակողմանի միջոցառումներ են ձեռնարկվում շատ (սակայն ոչ բոլոր) ղեկավարների կողմից:
C	(i) Գործառույթն առնվազն գործում է կենտրոնական կառավարության ամենակարևոր մարմիններում և համակարգերի որոշ ուսումնասիրություն է իրականացնում (առնվազն աշխատակիցների ժամանակի 20%-ը), սակայն հնարավոր է, որ չբավարարի ընդունված մասնագիտական չափանիշները: (ii) Հաշվետվությունները կանոնավոր կերպով պատրաստվում են կառավարության մարմինների մեծ մասի համար, սակայն հնարավոր է, որ ֆինանսների նախարարությանը և ԳԱԱՀ-ին չներկայացվեն: (iii) Շատ ղեկավարների կողմից էական հարցերի ուղղությամբ բավականաչափ միջոցառումներ են իրականացվում, սակայն հաճախ ուշացումով:
D	(i) Համակարգերի մոնիտորինգի վրա բևեռված ներքին աուդիտը սահմանափակ է կամ բացակայում է: (ii) Հաշվետվությունները կամ գոյություն չունեն կամ շատ անկանոն են: (iii) Ներքին աուդիտի առաջարկությունները սովորաբար անտեսվում են (մի քանի բացառություններով):

PI-22. Հաշիվների համադրման ժամկետայնություն և պարբերականություն

Ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ հուսալի հաշվետվությունների ներկայացման համար պահանջվում է հաշվապահների գրանցման գործելակերպերի մշտական ստուգում և ճշտում, ինչը ներքին հսկողության կարևոր մասն է կազմում և ղեկավարության և արտաքին հաշվետվությունների համար լավ որակի տեղեկատվության հիմքն է հանդիսանում: Տարբեր աղբյուրների տվյալների ժամանակին և պարբերական համադրումն անհրաժեշտ է տվյալների հուսալիության ապահովման համար: Համադրման երկու կարևոր տեսակներն են՝ (i) կառավարության հաշվապահական գրքերում պահվող հաշվապահական հաշվառման տվյալների համադրումը կառավարության կենտրոնական բանկում և առևտրային բանկերում պահվող հաշիվների տվյալների հետ, որպեսզի էական տարբերություններն առանց պարզաբանման չմնան և (ii) օժանդակ հաշիվների և կանխավճարների քլիրինգը և համադրումը, այսինքն՝ կանխիկ դրամական միջոցներով կատարված վճարումները, որոնց գծով ծախսեր դեռ չեն գրանցվել: Կանխավճարները կներառեն գործուղման կանխավճարները և օպերացիոն առհաշիվ գումարները, սակայն ոչ ինքնուրույն գործակալությունների և ՏԿ մարմինների համար բյուջեով նախատեսված տրանսֆերտները, որոնք որպես ծախս են դասակարգվում իրականացման ժամանակ, անգամ եթե նպատակային տրանսֆերտների որևէ մասի գծով պարբերական հաշվետվությունների ներկայացում է ակնկալվում:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ2).

(i) Բանկային համադրումների պարբերականությունը:

(ii) Օժանդակ հաշիվների և կանխավճարների համադրման և քլիրինգի պարբերականությունը:

Չափում	Չափման միավորի նվազագույն պահանջներ Գնահատման մեթոդաբանություն Մ2
(i) Բանկային համադրումների պարբերականությունը	**Միավոր = A**. Կենտրոնական կառավարության բոլոր բանկային հաշիվների համադրումը կատարվում է բոլոր հանրագումարային և մանրամասն մակարդակներում՝ առնվազն ամսական կտրվածքով, սովորաբար ժամանակաշրջանի ավարտից հետո չորս շաբաթվա ընթացքում: **Միավոր = B**. Գանձապետարանի կողմից կառավարվող բոլոր բանկային հաշիվների բանկային համադրումը կատարվում է առնվազն ամսական կտրվածքով, սովորաբար ամսվա ավարտից հետո չորս շաբաթվա ընթացքում: **Միավոր = C**. Գանձապետարանի կողմից կառավարվող բոլոր բանկային հաշիվների բանկային համադրումը կատարվում է եռամսյակային կտրվածքով, սովորաբար եռամսյակի ավարտից հետո ութ շաբաթվա ընթացքում: **Միավոր = D**. Գանձապետարանի կողմից կառավարվող բոլոր բանկային հաշիվների

	բանկային համադրումն իրականացվում ավելի պակաս պարբերականությամբ, քան եռամսակային կտրվածքով ԿԱՄ մի քանի ամիս կուտակվելով:
(ii) Օժանդակ հաշիվների և կանխավճարների համադրման և քլիրինգի պարբերականությունը	**Միավոր = A**. Օժանդակ հաշիվների և կանխավճարների համադրումն ու քլիրինգն իրականացվում են առնվազն եռամսյակային կտրվածքով, ժամանակաշրջանի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում և փոքր մնացորդներ են տեղափոխվում հետագա ժամանաշրջան: **Միավոր = B**. Օժանդակ հաշիվների և կանխավճարների համադրումն ու քլիրինգն իրականացվում են առնվազն տարեկան կտրվածքով, ժամանակաշրջանի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում: Որոշ հաշիվներ ունենում են հետագա ժամանակահատված տեղափոխված քլիրինգի չենթարկված մնացորդներ: **Միավոր = C**. Օժանդակ հաշիվների և կանխավճարների համադրումն ու քլիրինգն ընդհանրապես իրականացվում են առնվազն տարեկան կտրվածքով, տարվա ավարտից հետո երկու ամսվա ընթացքում, սակայն զգալի թվով հաշիվներ հետագա ժամանակահատված տեղափոխված քլիրինգի չենթարկված մնացորդներ են ունենում: **Միավոր = D**. Օժանդակ հաշիվների և կանխավճարների համադրումն ու քլիրինգը իրականացվում է կամ տարեկան կտրվածքով, երկու ամսից ավելի ուշացումով, կամ առավել պակաս հաճախականությամբ:

PI-23. Ծառայություններ մատուցող միավորների կողմից ստացված միջոցների վերաբերյալ տեղեկատվության առկայություն

Հաճախ խնդիրներ են առաջանում համայնքային մակարդակում հաճախորդներին ծառայություններ մատուցող միավորներում (ինչպես օրինակ՝ դպրոցներ և կլինիկաներ), այն միջոցները ստանալու առումով, որոնք նախատեսվել են նրանց կողմից օգտագործվելու համար՝ դրամական միջոցների տրանսֆերտներ, բնաիրային ապրանքների բաշխման (օրինակ՝ դեղորայք և դասագրքեր) կամ կենտրոնի կողմից ներգրավվող և վճարվող կադրերի ապահովում: Նախատեսված միջոցների տրամադրումը հնարավոր է, որ բյուջետային փաստաթղթերում բացահայտ կերպով չարտացոլվի, սակայն հավանական է, որ ճյուղային նախարարությունների ներքին ծախսերի նախահաշիվների կազմման մաս կազմի: Հաճախորդներին ծառայություններ մատուցող միավորները, լինելով միջոցների բաշխման շղթայի ամենահեռու օղակը, ավելի հավանական է, որ տուժեն ընդհանուր ծախսերի նախահաշվից պակաս միջոցների հետևանքով կամ եթե կազմակերպական առավել բարձր մակարդակի միավորները որոշեն միջոցներն այլ նպատակների ուղղել (օրինակ՝ վարչական): Հնարավոր է զգալի ուշացումներ լինեն միջոցները տվյալ միավորին փոխանցելու հարցում, լինի դա կանխիկ դրամական միջոցների, թե

բնաիրային տեսքով: Նման տեղեկություններին հետևելը էապես կարևոր է պարզելու համար, թե արդյոք ՊՖԿ համակարգերն արդյունավետ կերպով օժանդակում են հաճախորդներին մատուցվող ծառայություններին:

Ծառայությունների միավորների կողմից միջոցների ստացման վերաբերյալ տեղեկությունները հաճախ բացակայում են: Հաշվապահական հաշվառման համակարգը, եթե բավարար չափով ընդգրկուն, հուսալի և ժամանակին է, պետք է ապահովի այս տեղեկությունները, սակայն հաճախ տեղերում ծախսերի մասին տեղեկություններն ամբողջական չեն և անհուսալի են, իսկ տեղեկատվական հոսքերն ընդհատվում են կառավարության տարբեր մակարդակներում(որպես կանոն առաջնային ծառայությունների մատուցման հիմնական միավորների պատասխանատուն տեղական իշխանություններն են) կիրառվող տարբեր և չկապակցված համակարգերով: Ընթացիկ տվյալների հավաքագրման համակարգերը, բացի հաշվապահական հաշվառման համակարգերից (այսինքն՝ վիճակագրական համակարգերը), կարող են գոյություն ունենալ և հնարավոր է կարողանան ծառայությունների մատուցման վերաբերյալ այլ տեղեկությունների հետ մեկտեղ համապատասխան տեղեկություններ ընդգրկել: Պետական ծախսերին հետևելու հարցումները, ստուգումները, աուդիտը (ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աուդիտի կողմից) կամ այլ չնախատեսված գնահատումները կարող են հանդես գալ որպես տեղեկատվության այլընտրանքային աղբյուր:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1).
(i) Տեղեկությունների հավաքագրում և մշակում հաճախորդներին ամենատարածված ծառայությունները մատուցող միավորների կողմից փաստացի ստացված միջոցների (կանխիկ դրամական միջոցների կամ բնաիրային տեսքով) (ուշադրությունը սևեռելով տարրական դպրոցների և բուժօգնության առաջին օղակի կլինիկաների վրա) վերաբերյալ, ոլորտին (ներին) տրամադրված ընդհանուր միջոցների հետ համեմատությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե կառավարության ո՛ր օղակն է պատասխանատու այդ միավորների գործունեության և ֆինանսավորման համար:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Ընթացիկ տվյալների հավաքագրումը կամ հաշվապահական հաշվառման համակարգերը հուսալի տեղեկություններ են տրամադրում կանխիկ դրամական միջոցների և բնաիրային տեսքով ստացված բոլոր տեսակի միջոցների վերաբերյալ՝ ինչպես տարրական դպրոցների, այնպես էլ առաջնային օղակի բուժ. կլինիկաների կողմից: Տեղեկատվությունը առնվազն տարեկան կտրվածքով հավաքվում է հաշվետվություններում:
B	(i) Ընթացիկ տվյալների հավաքագրումը կամ հաշվապահական հաշվառման համակարգերը հուսալի տեղեկություններ են տրամադրում համարյա ամբողջ երկրում գտնվող տարրական դպրոցների կամ առաջնային օղակի բուժ. կլինիկաների կողմից կանխիկ դրամական միջոցների և բնաիրային տեսքով ստացված բոլոր տեսակի միջոցների մասին և տեղեկությունները հավաքվում են առնվազն տարեկան հաշվետվություններում ԿԱՄ վերջին երեք տարիների ընթացքում իրականացված հատուկ հարցումների միջոցով բացահայտվել է համարյա ամբողջ երկրում կանխիկ դրամական միջոցների և բնաիրային տեսքով տարրական դպրոցների և առաջնային օղակի բուժ. կլինիկաների կողմից ստացված միջոցների մակարդակը (այդ թվում ներկայացուցչական ընտրանքի կազմման միջոցով):

C	(i) Վերջին երեք տարիների ընթացքում իրականացված հատուկ հետազոտությունները ցույց են տվել կանխիկ միջոցներով և բնաիրային տեսքով տարրական դպրոցների կամ առաջնային օղակի բուժ. կլինիկաների ստացած միջոցների մակարդակը, որոնք ընդգրկում են երկրի զգալի մասը ԿԱՄ մի քանի այլ ոլորտներում համայնքային մակարդակում առաջնային ծառայություններ մատուցող միավորների ստացած միջոցները:
D	(i) Վերջին երեք տարիների ընթացքում որևէ խոշոր ոլորտում ծառայություն մատուցող միավորներին տրամադրված միջոցների մասին համապարփակ տվյալներ չեն հավաքագրվել կամ մշակվել:

PI-24. Տարվա ընթացքում բյուջետային հաշվետվությունների որակ և ժամկետայնություն

Բյուջեն «սահմանելու» կարողությունը պահանջնում է, որ բյուջեի փաստացի կատարողականի վերաբերյալ տվյալները ժամանակին և կանոնավոր կերպով տրամադրվեն ինչպես ֆինանսների նախարարությանը (և կառավարությանը)՝ կատարողականի մոնիտորինգի, իսկ հարկ եղած դեպքում, նոր միջոցառումներ նախանշելու համար, որպեսզի բյուջեն կրկին ճիշտ ուղու վրա դրվի, այնպես էլ ՆԳԳ-երին, որպեսզի կառավարեն այն գործերը, որոնց համար հաշվետու են: Սույն ցուցանիշը կենտրոնանում է հաշվապահական հաշվառման համակարգից բյուջեի բոլոր ասպեկտների վերաբերյալ համակողմանի հաշվետվություններ կազմելու կարողության վրա (ՆԳԳ-ներին միջոցների տրամադրման վերաբերյալ ակնթարթային հաշվետվությունները բավարար չեն): Ծախսերի ընդգրկումը ինչպես պարտավորությունների ստանձման, այնպես էլ վճարման փուլում կարևոր են բյուջեի կատարողականի մոնիտորինգի և տրամադրված միջոցների օգտագործման համար: Պետք է ներառվի կենտրոնական կառավարության ապակենտրոնացված միավորներին (ինչպես օրինակ մարզային կառավարման մարմինները) ուղղված տրանսֆերտներից ծախսերի կատարման հաշվառումը:

Ֆինանսների նախարարության և ճյուղային նախարարությունների միջև պատասխանատվության բաշխումը հաշվետվությունների կազմման հարցում կախված կլինի գործող հաշվապահական հաշվառման և վճարային համակարգի տեսակից: Ֆինանսների նախարարության դերը կարող է զուտ իրենց հաշվապահական գրանցումներից ճյուղային նախարարությունների (և ապակենտրոնացված միավորներից, եթե այդպիսիք կան) ներկայացրած հաշվետվությունների համախմբումը լինել: Այլ դեպքերում ֆինանսների նախարարությունը կարող է ստանձնել տվյալների մուտքագրման և գործարքների հաշվառման դերը, որի պարագայում ճյուղային նախարարության մասնակցությունը հավանաբար կսահմանափակվի ֆինանսների նախարարության տվյալներն իրենց սեփական գրանցումների հետ համադրմամբ: Իսկ ուրիշ դեպքերում էլ ֆինանսների նախարարությունը կարող է հաշվետվությունները ստանալ ինտեգրված, համակարգչայնացված հաշվապահական հաշվառման համակարգերից: Կարևոր պահանջն այն է, որ տվյալները լինեն բավարար ճշգրիտ, որպեսզի դրանք իրականում օգտագործվեն բոլոր շահառուների կողմից:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ M1):

(i) Հաշվետվությունների շրջանակը՝ ընդգրկման և բյուջեի նախահաշվի հետ

համատեղելիության առումով:
(ii) Հաշվետվությունների հրապարակման ժամկետայնություն:
(iii) Տեղեկությունների որակ:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Տվյալների դասակարգումը թույլ է տալիս ուղղակի համեմատություն կատարել սկզբնական բյուջեի հետ: Տեղեկությունները ներառում են բյուջետային նախահաշվի բոլոր հոդվածները: Ծախսերը ներառվում են ինչպես պարտավորությունների ստանձնման, այնպես էլ վճարման փուլերում: (ii) Հաշվետվությունները պատրաստվում են եռամսյակային կտրվածքով կամ ավելի հաճախ և հրապարակվում են ժամանակաշրջանի ավարտից հետո 4 ամսվա ընթացքում: (iii) Տվյալների ճշգրտության վերաբերյալ որևէ էական մտավախություն չկա:
B	(i) Դասակարգումը բյուջեի հետ համեմատելու հնարավորություն է տալիս, սակայն միայն որոշ ընդհանրացմամբ: Ծախսերը ներառվում են ինչպես պարտավորությունների ստանձնման, այնպես էլ վճարման փուլերում: (ii) Հաշվետվությունները պատրաստվում են եռամսյակային կտրվածքով և հրապարակվում են եռամսյակի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: (iii) Ճշգրտության վերաբերյալ որոշ մտավախություններ կան, սակայն տվյալների հետ կապված խնդիրներն ընդհանուր առմամբ հաշվետվություններում ընդգծվում են և ընդհանուր միասնականությունը/օգտակարությունը չեն վտանգում:
C	i) Բյուջեի հետ համեմատությունը հնարավոր է միայն գերատեսչական դասակարգման հիմնական վերնագրերի համար: Ծախսերն ընդգրկվում են կամ պարտավորությունների ստանձնման կամ վճարման փուլում (ոչ թե երկուսը): (ii) Հաշվետվությունները պատրաստվում են եռամսյակային կտրվածքով (հավանաբար բացառությամբ առաջին եռամսյակի) և հրապարակվում են եռամսյակի ավարտից հետո ութ շաբաթվա ընթացքում : (iii) Տեղեկատվության ճշգրտության վերաբերյալ որոշ մտավախություններ կան, որոնք ոչ միշտ են ընդգծվում հաշվետվություններում, սակայն հիմնովին չեն խաթարում իրենց հիմնական օգտակարությունը:
D	(i) Կարող է հնարավոր չլինել բյուջեի հետ համեմատություն կատարել է բոլոր հիմնական գերատեսչական վերնագրերի մասով: (ii) Եռամսյակային հաշվետվություններ կամ չեն պատրաստվում կամ հաճախ հրապարակվում են ութ շաբաթյա ուշացումով: (iii) Տվյալները չափազանց շատ անճշտություններ կան, որպեսզի իրականում դրանք օգտագործվեն:

PI-25. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների որակ և ժամկետայնություն

Տարվա վերջի դրությամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունները էապես կարևոր են ՊՖԿ թափանցիկ համակարգի համար: Ամբողջական լինելու համար դրանք պետք է հիմնված լինեն բոլոր նախարարությունների, անկախ գերատեսչությունների և ապակենտրոնացած միավորների բոլոր տվյալների վրա: Բացի այդ, տարեվերջյան ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելը հաշվապահական հաշվառման համակարգի լավ աշխատանքի և պահվող գրանցումների որակի հիմնական ցուցանիշն է: Որոշ համակարգերում առանձին նախարարությունները, գերատեսչությունները և ապակենտրոնացած միավորները հրապարակում են ֆինանսական հաշվետվություններ, որոնք այնուհետև համախմբվում են ֆինանսների նախարարության կողմից: Առավել կենտրոնացված համակարգերում, հաշվետվությունների համար ողջ տեղեկությունները պահվում են ֆինանսների նախարարության կողմից: Արտաքին աուդիտորի կողմից հավաստագրման միջոցով ֆինանսական հաշվետվությունների ստուգումը ներառված է PI-26 ցուցանիշում: Տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը ԿԻԳ-երի կողմից, որոնք կենտրոնական կառավարության մաս են կազմում, ներառվում է PI-9 ցուցանիշում:

Օգտակար լինելու և թափանցիկությանը նպաստելու նպատակով, ֆինանսական հաշվետվությունները պետք է ընթերցողի համար հասկանալի լինեն և գործարքների, ակտիվների և պարտավորություններին անդրադառնան թափանցիկ և հետևողական ձևով: Սա է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման չափանիշների նպատակը: Որոշ երկրներ ունեն իրենց հանրային հատվածի սեփական ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ստանդարտները, որոնք սահմանվել են կառավարության կամ այլ լիազոր մարմնի կողմից: Ընդհանուր առմամբ ընդունելի լինելու համար, նման ազգային ստանդարտները որպես կանոն համապատասխանեցվում են միջազգային չափանիշներին, ինչպիսին են օրինակ Հաշվապահների միջազգային դաշնության Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները (IPSAS), որոնց մի մասը տեղին են այն երկրների համար, որոնք ընդունում են հաշվեգրման մեթոդով հաշվառում, իսկ մյուսները՝ հաշվառման դրամարկղային մեթոդով գործող համակարգերի համար:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությունը:
(ii) Սահմանված ժամկետում ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը:
(iii) Հաշվապահական հաշվառման կիրառվող ստանդարտները:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Կառավարության համախմբված հաշվետվությունը պատրաստվում է տարեկան կտրվածքով և ամբողջական տեղեկություններ է պարունակում եկամուտների, ծախսերի և ֆինանսական ակտիվների/պարտավորությունների վերաբերյալ: (ii) Հաշվետվությունը արտաքին աուդիտի համար ներկայացվում է ֆիսկալ տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: (iii) IPSAS կամ համապատասխան ազգային ստանդարտները կիրառվում են բոլոր հաշվետվությունների համար:

B	(i) Կառավարության համախմբված հաշվետվությունը կազմվում է տարեկան կտրվածքով: Դրանք, որոշ բացառություններով, ներառում են ծախսերի և ֆինանսական ակտիվների/պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ: (ii) Կառավարության համախմբված հաշվետվությունը արտաքին աուդիտի է ներկայացվում ֆիսկալ տարվա ավարտից հետո 10 ամսվա ընթացքում: (iii) Կիրառվում են IPSAS կամ համապատասխան ազգային ստանդարտները:
C	(i) Կառավարության համախմբված հաշվետվությունը պատրաստվում է տարեկան կտրվածքով: Եկամուտների, ծախսերի և բանկային հաշիվների մնացորդների վերաբերյալ տեղեկությունները հնարավոր է, որ ոչ միշտ լինեն ամբողջական, սակայն բացթողումներն էական չեն: (ii) Հաշվետվություններն արտաքին աուդիտի են ներկայացվում ֆիսկալ տարվա ավարտից հետո 15 ամսվա ընթացքում: (iii) Ժամանակի ընթացքում հաշվետվությունները ներկայացվում են հետևողական ձևաչափով, հաշվապահական հաշվառման ստանդարտների որոշ բացահայտմամբ:
D	(i) Տարեկան կտրվածքով կառավարության համախմբված հաշվետվություն չի պատրաստվում ԿԱՄ էական տեղեկություններ են բացակայում ֆինանսական հաշվետվություններից ԿԱՄ ֆինանսական գրանցումները չափազանց թերի են, որպեսզի աուդիտ իրականացնելու հնարավորություն տան: (ii) Եթե կազմվում են տարեկան հաշվետվություններ, դրանք ընդհանրապես ֆիսկալ տարվա ավարտից հետո 15 ամսվա ընթացքում արտաքին աուդիտի չեն ներկայացվում: (iii) Հաշվետվությունները ժամանակի ընթացքում հետևողական ձևաչափով չեն ներկայացվում կամ հաշվապահական հաշվառման ստանդարտները չեն բացահայտվում:

PI-26. Արտաքին աուդիտի շրջանակներ, բնույթ և հետ-աուդիտային ստուգում

Բարձր որակի արտաքին աուդիտը պետական միջոցների օգտագործման առումով թափանցիկության ապահովման կարևոր պահանջ է: Փաստացի արտաքին աուդիտի որակի առանցքային տարրերը ներառում են աուդիտի շրջանակը կամ աուդիտի ընդգրկումը, համապատասխան աուդիտի ստանդարտների պահպանումը, այդ թվում՝ արտաքին աուդիտ իրականացնող մարմնի անկախությունը (տե՛ս INTOSAI և IFAC/IAASB), հաշվետվություններում ՊՖԿ-ի էական և համակարգային հարցերի վրա ուշադրության բևեռումը և ֆինանսական աուդիտի ամբողջական իրականացումը, ինչպես օրինակ՝ ֆինանսական հաշվետվությունների հուսալիությունը, գործարքների պարբերականությունը և ներքին հսկողության և գնումների համակարգերի գործունեությունը: Արդյունավետության աուդիտի որոշ կողմերի ներառումը (ինչպես օրինակ՝ խոշոր ենթակառուցվածքների պայմանագրերում՝ արժեք դրամի դիմաց) ևս կակնկալվի աուդիտի բարձրորակ գործառույթից:

Աուդիտի իրավասությունների շրջանակը պետք է ներառի արտաբյուջետային միջոցները և ինքնուրույն գործակալությունները: Վերջիններս հնարավոր է, որ ոչ միշտ աուդիտի ենթարկվեն Գերագույն ատյանի աուդիտի հաստատության՝ ԳԱԱՀ-ի կողմից, քանի որ հնարավոր է նախատեսվի աուդիտի այլ հաստատությունների օգտագործումը: Շրջանակն այն մարմինները և միջոցների աղբյուրներն են, որոնք աուդիտի են ենթարկվում տվյալ տարում: Եթե ԳԱԱՀ-ի կարողությունները

սահմանափակ են, աուդիտի ծրագիրը կարող է ԳԱԱՀ-ի կողմից մշակվել աուդիտի իրավական պահանջների հետ մեկտեղ, մեկից ավելի տարիների կտրվածքով, որպեսզի ապահովվի, որ ամենակարևոր և ռիսկային մարմինները և գործառույթները տարեկան կտրվածքով ընդգրկվեն, մինչդեռ մյուս մարմինները և գործառույթները կարող են առավել պակաս հաճախականությամբ ներառվել:

Թեև կոնկրետ գործընթացը կախված կլինի որոշ չափով կառավարման համակարգից, ընդհանուր առմամբ գործադիրը (աուդիտի ենթարկված առանձին մարմինները և/կամ ֆինանսների նախարարությունը) ակնկալվում է, որ հետամուտ կլինի արտաքին աուդիտի ստացած արդյունքներին՝ աուդիտորների կողմից բացահայտված սխալների և համակարգի թերությունների շտկման միջոցով: Աուդիտի ստացած արդյունքների ուղղությամբ հետագա արդյունավետ քայլերի մասին փաստերը ներառում են գործադիր ղեկավարի կամ աուդիտի ենթարկված հաստատության կողմից պաշտոնական գրավոր պատասխանի պատրաստումը, նշելով, թե ինչպես է դրանց անդրադարձ կատարվում կամ արդեն կատարվել: Հաջորդ տարվա արտաքին աուդիտի հաշվետվությունը կարող է իրականացման մասին փաստեր տրամադրել՝ ամփոփելով, թե որքանով են աուդիտի ենթարկված ընկերությունները պարզաբանել աուդիտի հարցումները և իրականացրել աուդիտի առաջարկությունները:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1).

(i) Իրականացված աուդիտի շրջանակը/բնույթը (այդ թվում աուդիտի ստանդարտների պահպանումը):
(ii) Սահմանված ժամկետում աուդիտի հաշվետվությունների ներկայացումը օրենսդիրին:
(iii) Աուդիտի առաջարկությունների իրականացման վերաբերյալ փաստեր:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Կենտրոնական կառավարության բոլոր մարմինները տարեկան կտրվածքով ենթարկվում են աուդիտի, որը ներառում է եկամուտները, ծախսերը և ակտիվները/պարտավորությունները: Իրականացվում է ամբողջական ֆինանսական աուդիտ և արդյունավետության աուդիտի որոշ տարրեր և ընդհանուր առմամբ պահպանվում են աուդիտի ստանդարտները՝ բևեռվելով էական և համակարգային խնդիրների վրա: (ii) Աուդիտի հաշվետվությունները օրենսդիրին են ներկայացվում հաշվետվության ընդգրկած ժամանակաշրջանի ավարտից հետո չորս ամսվա ընթացքում, իսկ ֆինանսական հաշվետվությունների դեպքում՝ աուդիտի գրասենյակի կողմից ստանալուց հետո: (iii) Առաջարկությունների արդյունավետ կերպով և ժամանակին իրականացնելու վերաբերյալ հստակ փաստերի առկայություն:
B	(i)Կենտրոնական կառավարության մարմինները, որ ներկայացնում են ընդհանուր ծախսերի[12] առնվազն 75%-ը, տարեկան աուդիտի են ենթարկվում, առնվազն ներառելով եկամուտներն ու ծախսերը: Իրականացվում է լայնածավալ ֆինանսական աուդիտ՝ բևեռվելով էական և համակարգային խնդիրների վրա: (ii) Աուդիտի հաշվետվություններն օրենսդիրին են ներկայացվում

[12] Այս տոկոսը վերաբերում է մարմինների ծախսերին, որոնք ընդգրկված են տարեկան աուդիտի աշխատանքներում: Դա չի վերաբերում աուդիտորների կողմից տվյալ մարմնի ներսում ուսումնասիրելու համար ընտրված գործարքների ընտրանքին:

	ընդգրկված ժամանակահատվածի ավարտից հետո, իսկ ֆինանսական հաշվետվությունների դեպքում՝ աուդիտի գրասենյակի կողմից դրանց ստացումից հետո 8 ամսվա ընթացքում: (iii) Պաշտոնական պատասխանը պատրաստվում է ժամանակին, սակայն առաջարկություններին սիստեմատիկ կերպով հետամուտ լինելու մասին վկայող փաստերը քիչ են:
C	(i) Ընդհանուր ծախսերի առնվազն 50%-ը ներկայացնող ընկերությունները ենթարկվում են տարեկան աուդիտի: Աուդիտները հիմնականում բաղկացած են գործարքային մակարդակի ստուգումներից, սակայն հաշվետվություններում էական խնդիրներ են բացահայտվում: Աուդիտի ստանդարտները կարող են միայն սահմանափակ չափով բացահայտվել: (ii) Աուդիտի հաշվետվությունները օրենսդիրին են ներկայացվում ընդգրկված ժամանակաշրջանի ավարտից (ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար՝ աուդիտորների կողմից դրանց ստացումից) հետո 12 ամսվա ընթացքում: (iii) Պաշտոնական պատասխան է պատրաստվում, թեև ուշացումով և ոչ շատ մանրամասն, սակայն քիչ են հետ-ստուգման վերաբերյալ փաստերը:
D	(i) Աուդիտը ներառում է ընդհանուր ծախսերի առնվազն 50% -ը ներկայացնող կառավարության մարմինները կամ աուդիտին ունի ավելի լայն ընդգրկման շրջանակ, սակայն էական խնդիրները չի ընդգծում: (ii) Աուդիտի հաշվետվությունները օրենսդիրին են ներկայացվում ընդգրկված ժամանակաշրջանի ավարտից ավելի քան 12 ամիս հետո (ֆինանսական հաշվետվությունների աուդիտի դեպքում ՝ աուդիտորների կողմից ստանալուց հետո): (iii)Պատասխանի կամ հետ-ստուգման վերաբերյալ քիչ փաստեր կան:

PI-27. Տարեկան բյուջեի մասին օրենքի ուսումնասիրում օրենսդիրի կողմից

Օրենսդիր մարմինը Կառավարությանը ծախսեր կատարելու լիազորություն տալու իրավասություն ունի և այդ իրավասությունն իրականացվում է տարեկան բյուջեի մասին օրենքի ընդունմամբ: Եթե օրենսդիրն օրենքը խիստ ուսումնասիրման չի ենթարկում և չի քննարկում, ապա այդ իրավասությունը արդյունավետ կերպով չի իրականացվում և ընտրազանգվածի առջև կառավարության հաշվետվողականությունը խաթարվում է: Օրենսդիրի կողմից տարեկան բյուջեի մասին օրենքի մանրամասն ուսումնասիրումը և բանավեճի գնահատումը տեղեկացված կլինի տարբեր գործոնների դիտարկմամբ, այդ թվում՝ ուսումնասիրման շրջանակը, ներքին ընթացակարգերն ու քննարկումը և այդ գործընթացի համար հատկացված ժամանակը:

Օրենսդիրին ներկայացված բյուջետային փաստաթղթերի համարժեքության հարցն ընդգրկվում է PI-6 ցուցանիշում:

Տարվա ընթացքում բյուջեի փոփոխությունները տարեկան բյուջետային գործընթացի սովորական հատկանիշն են: Սկզբնական բյուջեի նշանակությունը չխաթարելու համար, փոփոխությունների լիազորումը, որոնք կարող են գործադիրի կողմից իրականացվել, պետք է հստակ սահմանվեն, այդ թվում՝ բյուջեի ծախսային մասը, ընդլայնման և վերաբաշխման սահմանաչափերը և օրենսդիրի կողմից հետադարձ հաստատման համար գործադիրի կողմից փոփոխությունների ներկայացման ժամկետները: Այս կանոնները ևս պետք է պահպանվեն:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Օրենսդիրի ուսումնասիրման շրջանակը:
(ii) Որքանով են օրենսդիրի ընթացակարգերը լավ սահմանված և պահպանվում:
(iii) Բյուջետային առաջարկություններին՝ ինչպես մանրամասն ծախսերի նախահաշիվներին, այնպես էլ, եթե կիրառելի է, խոշորացված մակրո-ֆիսկալ ցուցանիշների վերաբերյալ բյուջեի կազմման վաղ փուլում պատասխան ներկայացնելու համար օրենսդիրի համար ժամանակի բավարարությունը (գործնականում բոլոր փուլերի համար միասին տրամադրվող ժամանակը):
(iv) Տարվա ընթացքում բյուջեում առանց օրենսդիրի նախնական հաստատման փոփոխություններ կատարելու կանոնները:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Օրենսդիր մարմնի ուսումնասիրումն ընդգրկում է ֆիսկալ քաղաքականությունը, միջնաժամկետ ֆիսկալ համակարգը և միջնաժամկետ գերակայությունները, ինչպես նաև ծախսերի և եկամուտների մանրամասները: (ii) Բյուջետային ուսումնասիրության համար նախատեսված օրենսդիր մարմնի ընթացակարգերը սահմանված են և պահպանվում են: Դրանք ներառում են ներքին կազմակերպական մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ մասնագիտացված ուսումնասիրության հանձաժողովներ և բանակցային ընթացակարգեր: (iii) Օրենսդիր մարմինն առնվազն երկու ամիս ունի բյուջետային առաջարկությունների ուսումնասիրման համար: (iv) Տարվա ընթացքում գործադիրի կողմից բյուջեում փոփոխություններ կատարելու համար առկա են հստակ կանոններ, փոփոխությունների և բնույթի վերաբերյալ սահմանված խիստ սահմանափակումներ կան և դրանք հետևողականորեն պահպանվում են:
B	(i) Օրենսդիրի ուսումնասիրությունն ընդգրկում է առաջիկա տարվա ֆիսկալ քաղաքականությունն ու հանրագումարային ցուցանիշները, ինչպես նաև ծախսերի և եկամուտների մանրամասն նախահաշիվը: (ii) Օրենսդիրի կողմից բյուջեի ուսումնասիրության պարզ ընթացակարգեր են առկա և դրանք պահպանվում են: (iii) Օրենսդիրը բյուջետային առաջարկությունների ուսումնասիրության համար առնվազն մեկ ամիս ժամանակ ունի: (iv) Տարվա ընթացքում գործադիր մարմնի կողմից բյուջեում փոփոխություններ կատարելու համար առկա են հստակ կանոններ, սակայն դրանք զգալի գերատեսչական վերաբաշխումների կատարելու հնարավորություն են տալիս:
C	(i) Օրենսդիրի կողմից ուսումնասիրությունն ընդգրկում է ծախսերի և եկամուտների մանրամասները, սակայն մանրամասն առաջարկությունները վերջնական տեսքի բերելու փուլում: (ii) Օրենսդիրի կողմից բյուջեի ուսումնասիրության որոշ ընթացակարգեր կան, սակայն դրանք համապարփակ չեն և միայն մասամբ են պահպանվում:

	(iii) Օրենսդիրը բյուջետային առաջարկությունների ուսումնասիրության համար առնվազն մեկ ամիս ժամանակ ունի: (iv) Առկա են հստակ կանոններ, սակայն դրանք ոչ միշտ են պահպանվում ԿԱՄ դրանք զգալի գերատեսչական վերաբաշխումներ կատարելու, ինչպես նաև ընդհանուր ծախսերն ավելացնելու հնարավորություն են տալիս:
D	(i) Օրենսդիրի կողմից ուսումնասիրությունը բացակայում է կամ խիստ սահմանափակ է ԿԱՄ գործող օրենդիր մարմին չկա: (ii) Օրենսդիրի կողմից ուսումնասիրության ընթացակարգեր գոյություն չունեն կամ չեն պահպանվում: (iii) Օրենսդիրի կողմից ուսումնասիրվելու համար հատկացված ժամանակը միանշանակ բավարար չէ իմաստալից քննարկում ծավալելու համար (մեկ ամսից զգալի պակաս): (iv) Տարվա ընթացքում բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ կանոնները հնարավոր է, որ գոյություն ունենան, սակայն դրանք կամ շատ տարրական են կամ ոչ հստակ ԿԱՄ դրանք որպես կանոն չեն պահպանվում:

PI-28. Արտաքին աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրում օրենդիրի կողմից

Օրենսդիրն առանցքային դեր է կատարում հաստատված բյուջեի կատարումն ուսումնասիրելու գործում: Ընդունված ձևն այն է, որ դա կատարվի օրենսդրական կոմիտեի(ների) կամ հանձնաժողովի(ների) կողմից, որոնք ուսումնասիրության են ենթարկում արտաքին աուդիտի հաշվետվությունները և հաշվետվության ստացված տվյալների վերաբերյալ հարցեր ուղղում պատասխանատուներին: Հանձնաժողովի(ների) աշխատանքը կախված կլինի ֆինանսական և տեխնիկական միջոցներից, ինչպես նաև աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրության առումով ամենաթարմ տեղեկություններն ունենալու համար բավարար ժամանակ հատկացնելուց: Հանձնաժողովը կարող է նաև գործողություններ և պատժամիջոցներ առաջարկել, որոնք ենթակա են կատարման գործադիրի կողմից՝ ի լրումն արտաքին աուդիտորների կողմից կատարված առաջարկությունների ընդունման (տե՛ս PI-26):

Սույն ցուցանիշը բևեռվում է կենտրոնական կառավարության մարմինների, այդ թվում ինքնուրույն գործակալությունների վրա, այն մասով, որ կամ (ա) օրենքով պահանջվում է, որ այդ մարմինները օրենսդիր մարմնին ներկայացնեն աուդիտի հաշվետվություններ կամ (բ) նախարարությունը/ կամ գերատեսչությունը, որի իրավասության շրջանակում կամ վերահսկողության ներքո գործում են այդ մարմինները, պարտավոր են պատասխանել հարցերին և միջոցառումների ձեռնարկել այդ գերատեսչության անունից:

Օրենսդիր մարմնի կողմից ուսումնասիրության ժամկետայնության վրա կարող է բացասաբար անդրադառնալ ներկայացվող աուդիտի հաշվետվությունների թվի աճը, երբ արտաքին աուդիտորները փորձում են կուտակված գործերը հասցնել: Նման իրավիճակներում հանձնաժողովը (ները) կարող է որոշումն կայացնել այն աուդիտի հաշվետվություններին առաջնահերթություն տալու մասին, որոնք ընդգրկում են ամենավերջին հաշվետու ժամանակահատվածները և այն աուդիտի ենթարկվող մարմիններին, որոնք նախկինում սահմանված պահանջների կատարման վատ ցուցանիշներ են ունեցել: Գնահատումը պետք է լավագույն փորձի նման տարրերը որպես դրական դիտարկի և հիմնված չլինի առավել հեռավոր

ժամանակահատվածների ուսումնասիրման հետևանքով առաջացող ուշացման վրա:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Սահմանված ժամկետում աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրումն օրենսդիրի կողմից (վերջին երեք տարիների ընթացքում ստացված հաշվետվությունների մասով):

(ii) Օրենսդիրի կողմից առանցքային տվյալների վերաբերյալ կատարվող լսումների շրջանակը:

(iii) Օրենսդիրի կողմից առաջարկվող միջոցառումների հրապարակում և իրականացում գործադիր մարմնի կողմից:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i)Սովորաբար աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրությունը օրենսդիրի կողմից կատարվում է հաշվետվությունների ստացումից հետո երեք ամսվա ընթացքում: (ii) Առանցքային արդյունքների վերաբերյալ խորացված լսումները հետևողականորեն տեղի են ունենում վերապահումով կամ բացասական եզրակացություն ստացած աուդիտի ենթարկված բոլոր կամ հիմնական մարմինների պատասխանատու պաշտոնյաների մասնակցությամբ: (iii) Որպես կանոն օրենսդիրն առաջարկություններ է տալիս այն միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է իրականացվեն գործադիր մարմնի կողմից և փաստեր կան այն մասին, որ սովորաբար դրանք իրականացվում են:
B	(i) Սովորաբար աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրումը օրենսդիրի կողմից կատարվում է հաշվետվությունների ստացումից հետո վեց ամսվա ընթացքում: (ii) Կանոնավոր կերպով առանցքային արդյունքների վերաբերյալ խորացված լսումներ են տեղի ունենում աուդիտի ենթարկված մարմինների պատասխանատու պաշտոնյաների մասնակցությամբ, սակայն կարող են ընդգրկել միայն որոշ մարմիններ, որ վերապահումով կամ բացասական եզրակացություն են ստացել: (iii) Օրենսդիրը գործադիրին առաջարկություններ է անում միջոցառումների վերաբերյալ, որոնց մի մասն իրականացվում է՝ առկա փաստերի համաձայն:
C	(i)Սովորաբար աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրումը օրենսդիրի կողմից կատարվում է հաշվետվությունների ստացումից հետո 12 ամսվա ընթացքում: (ii) Երբեմն առանցքային արդյունքների վերաբերյալ խորացված լսումներ են տեղի ունենում, որոնք վերաբերում են միայն փոքր թվով աուդիտի ենթարկված մարմինների կամ կարող են ներառել միայն ֆինանսների նախարարության պաշտոնյաներին: (iii) Առաջարկություններ կատարվում են, սակայն գործադիր մարմինը հազվադեպ է գործում դրանց համապատասխան:
D	(i) Օրենսդիր մարմնի կողմից աուդիտի հաշվետվությունների ուսումնասիրություն չի կատարվում կամ 12 ամսից ավելի է պահանջվում դրա իրականացման համար: (ii) Օրենսդիր մարմնի կողմից խորացված լսումներ չեն անցկացվում: (iii) Օրենսդիր մարմնի կողմից առաջարկություններ չեն տրվում:

D-1. Ուղղակի բյուջետային ֆինանսավորման կանխատեսելիություն

Ուղղակի բյուջետային ֆինանսավորումը շատ երկրների կենտրոնական կառավարության համար եկամտի կարևոր աղբյուր է: Բյուջետային օժանդակության միջոցների ներհոսքի վատ կանխատեսելիությունը շատ առումներով բացասաբար է անդրադառնում կառավարության ֆիսկալ կառավարման վրա այնպես, ինչպես արտաքին ցնցումների ազդեցությունը ներքին եկամուտների հավաքագրման վրա: Թե բյուջետային ֆինանսավորման ընդհանուր գումարի դեֆիցիտը և թե տարվա ընթացքում ներհոսքերի բաշխումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ կառավարության կողմից իր բյուջեն ըստ նախատեսվածի իրականացնելու հնարավորության համար:

Ուղղակի բյուջետային ֆինանսավորումը բաղկացած է կառավարության ընդհանուր բյուջեին (ընդհանուր բյուջետային օժանդակություն) կամ կոնկրետ ոլորտների օժանդակելու նպատակով գանձապետարանին տրամադրված օգնությունից: Գանձապետարանի կողմից ստացվելով՝ միջոցները կօգտագործվեն մյուս բոլոր ընդհանուր եկամուտների նկատմամբ կիրառվող ընթացակարգերի համաձայն: Ուղղակի բյուջետային ֆինանսավորումը, մինչև գանձապետարանին տրամադրումը, կարող է ուղղվել առանձին կամ համատեղ դոնորային հոլդինգային հաշիվների միջոցով:

Տեքստային մասում պետք է բացատրվեն կանխատեսումների և փաստացի վճարումների միջև նկատված շեղումները, որոնց թվում կարող են լինել կառավարության հետ որպես վճարման նախապայման համաձայնեցված գործողությունները չիրականացնելը կամ ուշացնելը:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)

(i) Բյուջետային օժանդակության տարեկան շեղումը դոնոր կազմակերպությունների կողմից ներկայացված կանխատեսումներից՝ առնվազն կառավարության կողմից իր բյուջետային առաջարկները օրենսդիր մարմնին (կամ այն հաստատող համարժեք մարմնին) ներկայացնելուց վեց շաբաթ առաջ:
(ii) Սահմանված ժամկետում դոնորների կողմից վճարումների կատարումը (համապատասխանությունը եռամսյակային ընդհանուր գնահատականներին):

(ii) չափումը պետք է գնահատվի ըստ փաստացի բյուջետային ներհոսքերի եռամսյակային բաշխվածության և համաձայնեցված ծրագրի բաշխվածության համեմատության: Վճարման կշռված ուշացումը կհաշվարկվի որպես ուշացած միջոցների տոկոսի և ուշացման եռամսյակների թվի բազմապատիկ (ուստի եթե փաստացի ներհոսքի 10%-ը չորրորդ եռամսյակում ստացվի, նախատեսված առաջին եռամսյակի փոխարեն, ուշացման կշռված ցուցանիշը 30% կլինի):

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկի ընթացքում ուղղակի բյուջետային ֆինանսավորման փաստացի արդյունքները կանխատեսումից առավել քան 5% տոկոսով պակաս են եղել: (ii) Եռամսյակային վճարման գնահատականները համաձայնեցվել են դոնորների հետ ֆիսկալ տարվա սկզբում կամ դրանից առաջ, իսկ փաստացի վճարումների ուշացումները (կշռված) վերջին երեք տարիներից երկուսի ընթացքում 25%-ը չեն գերազանցել:

B	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկի ընթացքում ուղղակի բյուջետային ֆինանսավորման փաստացի արդյունքը կանխատեսված ցուցանիշից ավելի քան 10%-ով պակաս է եղել: (ii) Եռամսյակային վճարման գնահատականները համաձայնեցվել են դոնորների հետ ֆիսկալ տարվա սկզբում կամ դրանից առաջ, իսկ փաստացի վճարումների ուշացումները (կշռված) վերջին երեք տարիներից երկուսի ընթացքում 25%-ը չեն գերազանցել:
C	(i) Վերջին երեք տարիներից ոչ ավելի, քան մեկի ընթացքում ուղղակի բյուջետային ֆինանսավորման փաստացի արդյունքը կանխատեսված ցուցանիշից ավելի քան 15%-ով պակաս է եղել: (ii) Եռամսյակային վճարման գնահատականները համաձայնեցվել են դոնորների հետ ֆիսկալ տարվա սկզբում կամ դրանից առաջ, իսկ փաստացի վճարումների ուշացումները (կշռված) վերջին երեք տարիներից երկուսի ընթացքում 50%-ը չեն գերազանցել:
D	(i) Վերջին երեք տարիներից առնվազն երկուսի ընթացքում ուղղակի բյուջետային ֆինանսավորման փաստացի արդյունքը կանխատեսված ցուցանիշից ավելի քան 15%-ով պակաս է եղել ԿԱՄ դոնոր կազմակերպությունների կողմից համապարփակ և ժամանակին կանխատեսումներ չեն ներկայացվել այդ տարվա (տարիների) համար: (ii) C (կամ բարձր) միավորի պահանջները չեն բավարարվում:

D-2. Նախագծերի ու ծրագրերի շրջանակներում տրամադրվող օգնության բյուջետավորման և հաշվետվություններում արտացոլման համար դոնորների կողմից տրամադրվող ֆինանսական տեղեկատվություն

Նախագծերի և ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) համար դոնորների ֆինանսավորման ստացման կանխատեսելիությունը ազդում է բյուջեի կոնկրետ տողային հոդվածների իրականացման վրա: Ծրագրերի համար աջակցությունը կարող է մի շարք ձևերով տրամադրվել, միջոցների ծրագրման և կառավարման հարցում կառավարության ներգրավվածության տարբեր աստիճաններով: Կառավարության կողմից առավել փոքր ներգրավվածությունը բյուջեում միջոցների նախատեսման (այդ թվում օրենդիրի հաստատմանը ներկայացվող բյուջետային փաստաթղթերում արտացոլելու) և փաստացի ստացման և միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման հարցում խնդիրների է հանգեցնում (օգնությունը բնաիրային տեսքով տրամադրելու դեպքում դրա համար ամբողջովին դոնոր կազմակերպությունը պատասխանատու կլինի): Թեև կառավարությունը պետք է իր ծախսող միավորների միջոցով կարողանա բյուջեում նախատեսել և հաշվետվություն ներկայացնել կանխիկ դրամական միջոցներով փոխանցված օգնության մասին (հաճախ արտաբյուջետային ֆինանսավորման կամ առանձին բանկային հաշիվների միջոցով), կառավարությունը դոնորներից կախվածություն կունենա բյուջեի նախահաշիվների և բնաիրային տեսքով օգնության իրականացման գծով հաշվետվությունների հարցում: Կանխիկ միջոցների վճարման մասին դոնորների հաշվետվությունները կարևոր են նաև դոնորների վճարման տվյալները կառավարության ծրագրերի հաշիվների հետ համադրելու համար:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1).

(i) Դոնորների կողմից ծրագրերի օժանդակության համար բյուջետային նախահաշիվների ամբողջականությունն ու ժամանակին լինել:

(ii) Ծրագրերի ֆինանսավորման համար դոնորների կողմից տրամադրված

միջոցների փաստացի հոսքերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը և ընդգրկումը:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն M1)
A	(i) Բոլոր դոնորները (ոչ էական գումարներ տրամադրող փոքրաթիվ դոնորների հնարավոր բացառությամբ) բյուջետային գնահատականներ են ներկայացնում ծրագրի գծով օգնության վճարման մասին՝ բյուջետային օրացույցին համապատասխանող փուլերով և կառավարության բյուջետային դասակարգմանը համապատասխանող համամասնությամբ: (ii) Եռամսյակի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում դոնորները բոլոր վճարումների մասով եռամսյակային հաշվետվություններ են ներկայացնում, որ կատարվել են բյուջեի ծրագրերի նախահաշիվների արտաքին ֆինանսավորվող ծրագրերի առվազն 85%-ի համար՝ կառավարության բյուջետային դասակարգմանը համապատասխանող բացվածքով:
B	(i) Դոնոր կազմակերպությունների առնվազն կեսը (այդ թվում հինգ խոշորները) ամբողջական բյուջետային նախահաշիվներ են ներկայացնում ծրագրի գծով օգնության վճարման վերաբերյալ՝ կառավարության բյուջետային օրացույցին և բյուջետային դասակարգմանը համապատասխանող բացվածքով: (ii) Դոնոր կազմակերպությունները եռամսյակի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում եռամսյակային հաշվետվություններ են ներկայացնում բոլոր վճարումների վերաբերյալ, որոնք կատարվել են բյուջեի ծրագրերի նախահաշիվների արտաքին ֆինանսավորվող ծրագրերի առվազն 70%-ի համար՝ կառավարության բյուջետային դասակարգմանը համապատասխանող բացվածքով:
C	(i) Դոնոր կազմակերպությունների առնվազն կեսը (այդ թվում հինգ խոշորները) ամբողջական բյուջետային նախահաշիվներ են ներկայացնում ծրագրի գծով առաջիկա ֆիսկալ տարվա համար օգնության վճարման վերաբերյալ, տարվա սկզբից առնվազն երեք ամիս առաջ: Նախահաշիվներում կարող է կիրառվել դոնորների դասակարգումը և չհամապատասխանել բյուջետային դասակարգմանը: (ii) Դոնորները եռամսյակային հաշվետվություններ են ներկայացում եռամսյակի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում, բոլոր վճարումների վերաբերյալ, որոնք կատարվել են բյուջեի ծրագրերի նախահաշիվների արտաքին ֆինանսավորվող ծրագրերի առվազն 50%-ի համար: Պարտադիր չէ, որ տեղեկատվությունը ներկայացվի կառավարության բյուջետային դասակարգմանը համապատասխանող բացվածքով:
D	(i) Ոչ բոլոր խոշոր դոնորներն են տրամադրում ծրագրային օգնության վճարման վերաբերյալ բյուջետային նախահաշիվները առնվազն կառավարության առաջիկա ֆիսկալ տարվա համար և առնվազն դրա սկզբից երեք ամիս առաջ: (ii) Դոնոր կազմակերպությունները եռամսյակի ավարտից հետո երկու ամսվա ընթացքում հաշվետվություններ չեն ներկայացնում բյուջեի արտաքին ֆինանսավորմամբ ծրագրերի նախահաշիվների առնվազն 50%-ի գծով կատարված վճարումների վերաբերյալ:

D-3. Ազգային ընթացակարգերի կիրառմամբ կառավարվող օգնության մասնաբաժին

Միջոցների կառավարման ազգային համակարգերը սահմանվում են տվյալ երկրի ընդհանուր օրենսդրությամբ (և հարակից կանոնակարգերով) և իրականացվում կառավարության հիմնական գծային կառավարման գործառույթների միջոցով: Իշխանություններից պահանջելը, որ օգնության միջոցների կառավարման համար կիրառեն այլ ընթացակարգեր (դոնորների համար առանձնահատուկ) ազգային համակարգերի կառավարման կարողությունները շեղում է այլ ուղղությամբ: Դա ավելի է բարդանում, երբ տարբեր դոնոր կազմակերպություններ տարբեր պահանջներ են ներկայացնում: Ընդհակառակը, դոնորների կողմից ազգային համակարգերի կիրառումը կարող է օգնել ջանքերը կենտրոնացնել ազգային ընթացակարգերն հզորացնելու և նաև ներքին ֆինանսավորմամբ գործառնությունների համար դրանց համապատասխան գործելու վրա:

Ազգային ընթացակարգերի կիրառումը ենթադրում է, որ դոնորների միջոցների համար բանկային, լիազորման, գնումների, հաշվապահական հաշվառման, աուդիտի, վճարման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմները նույնն են, ինչպես նրանք, որ կիրառվում են պետական միջոցների նկատմամբ: Բյուջետային ողջ ուղղակի և ոչ նպատակային ֆինանսավորման համար (ընդհանուր կամ ոլորտային) բոլոր առումներով, ըստ սահմանման, կօգտագործվեն ազգային ընթացակարգերը: Դոնորների ֆինանսավորման մյուս տեսակները, ինչպես օրինակ՝ նպատակային բյուջետային օժանդակությունը, արժութային խմբերի միջոցները և առանձին ծրագրային ֆինանսավորումը կարող է օգտագործել ազգային ընթացակարգերի որոշ տարրեր կամ ընդհանրապես չօգտագործել:

Գնահատման ենթակա չափումներ (Գնահատման մեթոդ Մ1)
(i) Կենտրոնական կառավարությանը տրամադրված օգնության ընդհանուր միջոցների մասնաբաժինը, որոնք կառավարվում են ազգային ընթացակարգերի միջոցով:
Մասնաբաժինը պետք է ստացվի դոնորների միջոցների միջին մասնաբաժնի միջոցով, որոնք համապատասխանաբար օգտագործում են ազգային համակարգեր գնումների, վճարման/հաշվապահական հաշվառման, աուդիտի, և հաշվետվությունների ներկայացման յուրաքանչյուր չորս ոլորտների համար:

Միավոր	Նվազագույն պահանջներ (Գնահատման մեթոդաբանություն Մ1)
A	(i) Կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության միջոցների 90%-ը կամ ավելին կառավարվում է ազգային ընթացակարգերի միջոցով:
B	(i) Կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության միջոցների 75%-ը կամ ավելին կառավարվում է ազգային ընթացակարգերի միջոցով:
C	(i) Կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության միջոցների 50%-ը կամ ավելին կառավարվում է ազգային ընթացակարգերի միջոցով:
D	(i) Կենտրոնական կառավարությանն ուղղված օգնության միջոցների 50%-ից փոքր մասը կառավարվում է ազգային ընթացակարգերի միջոցով:

Հավելված 2

ՊՖԿ-ի կատարողականի հաշվետվություն

Հավելված 2

ՊՖԿ կատարողականի հաշվետվություն

Սույն փաստաթղթի նպատակն է օգնել Պետական ֆինանսական կառավարման կատարողականի հաշվետվության (ՊՖԿ-ԿՀ) պատրաստմանը՝ նկարագրելով հաշվետվության մեջ ներկայացված տեղեկությունները և թե ինչպես են այդ տեղեկությունները գրանցվում: Այն ՊՖԿ-ի բարձր մակարդակի կատարողականի ցուցանիշների խմբի վերաբերյալ փաստաթուղթն ամբողջական է դարձնում:

ՊՖԿ-ԿՀ-ի նպատակն է տվյալ երկրի ՊՖԿ-ի կատարողականի համակողմանի և միասնական գնահատականը տալ՝ հիմնված մասնավորապես ՊՖԿ-ի համակարգի առանցքային տարրերի ցուցանիշների վերլուծության արդյունքների վրա, և գնահատել, թե կառավարության ներսում առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները որքանով են օժանդակում ՊՖԿ բարեփոխումները ժամանակին ծրագրելուն և իրականացնելուն: Այն մինչև 35 էջ ծավալով համառոտ փաստաթուղթ է: Համապատասխան ողջ տեղեկատվությունը ներառվում է հաշվետվության հիմնական մասում, իսկ հավելվածները որպես կանոն չեն օգտագործվում հաշվետվության մանրամասն կողմերը կոնկրետացնելու համար:

Հաշվետվությունն ունի հետևյալ կառուցվածքը.

ՊՖԿ-ԿՀ –ի կառուցվածքը
Ամփոփ գնահատական 1. Ներածություն 2. Տվյալ երկրի վերաբերյալ ելակետային տեղեկություններ 2.1. Երկրի տնտեսական վիճակի նկարագրություն 2.2. Բյուջետային արդյունքների նկարագրություն 2.3. ՊՖԿ-ի իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի նկարագրություն 3. ՊՖԿ-ի համակարգերի, գործընթացների և հաստատությունների գնահատում 3.1. Բյուջեի հավաստիություն 3.2. Համապարփակություն և թափանցիկություն 3.3. Քաղաքականություն և բյուջետավորում 3.4. Կանխատեսելիություն և հսկողություն բյուջեի կատարման մեջ 3.5. Հաշվապահական հաշվառում, գրանցում և հաշվետվություններ 3.6. Արտաքին ուսումնասիրում և աուդիտ 3.7 Դոնորների փորձ 3.8. Երկրին բնորոշ հարցեր (անհրաժեշտության

դեպքում)

4. Կառավարության բարեփոխումների գործընթաց
4.1. Վերջին և ընթացիկ բարեփոխումների նկարագրություն
4.2. Բարեփոխումների ծրագրմանն ու իրականացմանն օժանդակող ինստիտուցիոնալ գործոններ

Հավելված 1. Կատարողական ցուցանիշների ամփոփում
Հավելված 2. Տեղեկատվության աղբյուրներ

Փաստաթղթի մնացած մասերում նշվում է, թե ինչ տեղեկություններ են ներկայացվում հաշվետվության մեջ և ինչպես է այդ մասին փաստաթղթում արձանագրվում: Այն հետևում է ՊՖԿ-ԿՀ-ի կառուցվածքին:

Ամփոփ գնահատական

Սույն բաժնի նպատակն է ներկայացնել ՊՖԿ-ի կատարողականի միասնական և ռազմավարական պատկերը, այդ թվում, թե որքանով է ՊՖԿ համակարգն ազդում ընդհանուր ֆիսկալ կարգապահության, ռեսուրսների ռազմավարական տեղաբաշխման և ծառայությունների արդյունավետ մատուցման արդյունքների ապահովման վրա:

Այս բաժնի կողմնորոշիչ չափը երեքից չորս էջ է:

Ամփոփ գնահատականում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

(i) ՊՖԿ-ի կատարողականի միասնական գնահատական

Ցուցանիշների վերլուծության վրա հիմնված մանրամասն գնահատումն ամփոփվում է ըստ ՊՖԿ կատարողականի վեց հիմնական չափումների, որոնք նշվում են Կատարողականի չափման ծրագրում.

1. **Բյուջեի հավաստիություն.** բյուջեն իրատեսական է և կատարվում է նախատեսվածի համաձայն:

2. **Համապարփակություն և թափանցիկություն.** բյուջետային և ֆիսկալ ռիսկի նկատմամբ հսկողությունը համապարփակ է, իսկ ֆիսկալ և բյուջետային տեղեկատվությունը հասանելի է հանրությանը:

3. **Քաղաքականություն և բյուջետավորում.** բյուջեն կազմվում է՝ պատշաճ կերպով հաշվի առնելով կառավարության վարած քաղաքանությունը:

4. **Կանխատեսելիություն և հսկողություն բյուջեի կատարման մեջ.** բյուջեն կատարվում է կարգավորված և կանխատեսելի ձևով, գործում են մեխանիզմներ հանրային միջոցների օգտագործումը կառավարելու և վերահսկելու համար:

5. **Հաշվապահական հաշվառում, գրանցում և հաշվետվություններ.** Որոշումների կայացման նկատմամբ հսկողության, կառավարման և հաշվետվական նպատակների համար կազմվում, վարվում և բացահայտվում են համարժեք գրանցումներ և տեղեկատվություն:

6. **Արտաքին ուսումնասիրում և աուդիտ.** գործում են գործադիր մարմնի կողմից պետական ֆինանսների ուսումնասիրման և վերահսկողության մեխանիզմներ:

ՊՖԿ-ի համակարգի կատարողականի սինթեզման ժամանակ վերլուծության նպատակն է ՊՖԿ-ի հիմնական թույլ կողմերի բացահայտումը և ոչ թե սոսկ բաժին 3-ում նշված թույլ կողմերի մանրամասն ցանկի կրկնողությունը: Վերլուծությունը մասնավորապես արտացոլում է տարբեր չափումների միջև փոխկախվածությունը, այսինքն՝ թե որքանով է հավանական, որ հիմնական չափումներից մեկի վատ կատարողականը կազդի ՊՖԿ համակարգի կատարողականի վրա՝ համեմատած մյուս չափումների հետ:

(ii) ՊՖԿ-ի թույլ կողմերի ազդեցության գնահատական

Սույն բաժնում վեր է լուծվում, թե ինչքանով է գնահատված ՊՖԿ-ի համակարգն ըստ ամենայնի օժանդակում կամ բացասաբար անդրադառնում բյուջետային արդյունքներն ընդհանուր առմամբ ապահովելու վրա՝ երեք մակարդակում, այսինքն՝ ընդհանուր ֆիսկալ կարգապահություն, ռեսուրսների ռազմավարական բաշխում կամ ծառայությունների արդյունավետ մատուցում: Այլ կերպ ասած, այն պատկերացում է տալիս այն մասին, թե ինչու են ՊՖԿ-ի կատարողականում բացահայտված թույլ կողմերը կարևորվում տվյալ երկրի համար: Գնահատմամբ չի ուսումնասիրվում, թե ինչ չափով են բյուջետային արդյունքները ձեռք բերվում (օրինակ՝ թե արդյոք բյուջեի միջոցով կրած ծախսերը իրենց ցանկալի ազդեցությունն են ունենում աղքատության կրճատման կամ քաղաքականության այլ նպատակների իրագործման վրա, այլ դրա փոխարեն ֆիսկալ և ծախսային քաղաքականության վերլուծությունից ստացված տեղեկությունները օգտագործում է (ինչպես արտացոլվում է հաշվետվության բաժին 2-ում)՝ գնահատելու, թե ինչքանով է ՊՖԿ-ի համակարգը հանդես գալիս որպես նախատեսված բյուջետային արդյունքների իրագործումը հնարավոր դարձնող գործոն:

Առդիր 1-ում զետեղված **աղյուսակը** (սույն փաստաթղթի վերջում) ներկայացվում է այս գնահատմանն օգնելու համար: Նրանում ուրվագծվում է, թե ինչպես ՊՖԿ-ի վատ կատարողականը կարող է ազդել ընդհանուր ֆիսկալ կարգապահության ապահովման, ռեսուրսների ռազմավարական տեղաբաշխման և ծառայությունների մատուցման վրա: Այն կառուցված է ըստ ՊՖԿ-ի կատարողական վեց հիմնական չափումների և բյուջետային արդյունքների երեք մակարդակների: Առդիր 1-ը ՊՖԿ համակարգի թույլ կողմերի և բյուջետային արդյունքների իրագործման երեք մակարդակների միջև մեխանիկական կապ չի նախանշում, այլ նպատակ է հետապնդում օժանդակել ՊՖԿ համակարգի թույլ կողմերի ազդեցության և երկրի համար դրանց կարևորության մասին մտածելուն:

(iii) Բարեփոխումների ծրագրման և իրականացման հեռանկարները

Այս մասում գնահատվում է, թե որքանով են կառավարության ներսում գործող ինստիտուցիոնալ մեխանիզմներն օժանդակում բարեփոխումների ժամանակին և բավարար ծրագրմանն ու իրականացմանը:
Բացի այդ, օգնությունից կախում ունեցող երկրների համար, ներառվում է տեղեկանք դոնորների առկա փորձի վերաբերյալ և այն մասին, թե որքանով է դա ազդում ՊՖԿ-ի կատարողականի վրա:

Բաժին 1. Ներածություն

Ներածական մասի նպատակն է հասկանալ այն համատեքստը և գործընթացը, որի միջոցով կազմվել է ՊՖԿ-ԿՀ–ը և ուրվագծել ՊՖԿ-ի գնահատման շրջանակը:

Սույն բաժնի կողմնորոշիչ չափը մեկ էջ է:

Ներածական մասը ներառում է հետևյալը.

ՊՖԿ-ԿՀ նպատակը, այդ թվում, թե ինչու է այն իրականացվել տվյալ ժամանակահատվածում և ինչպես է այն նպաստում երկրում ներկայումս ընթացող աշխատանքներին:

ՊՖԿ-ԿՀ հաշվետվության կազմման գործընթացը, այդ թվում՝ (i) հաշվետվության կազմման գործընկեր հանդիսացող դոնորները, նրանց դերի և մասնակցության նկարագրությամբ (առաջատար դոնոր, մասնակից դոնորներ, ֆինանսավորում, խորհրդակցություններ և այլն) և (ii) հաշվետվության պատրաստման գործում կառավարության ներգրավվածությունը:

Գնահատման շրջանակը, ինչպես նախատեսվում է ՊՖԿ-ԿՀ-ում. կենտրոնական կառավարության մակարդակում (այդ թվում՝ նախարարություններ, գերատեսչություններ, ինքնուրույն գործակալություններ և ապակենտրոնացված մարմիններ) պետական ֆինանսների կառավարումը կարող է երկրում կատարվող պետական ծախսերը ներառել սահմանափակ չափով՝ պայմանավորված տեղական կառավարման մարմիններին և պետական ձեռնարկություններին պատասխանատվության փոխանցման աստիճանով: Հետևաբար, հաշվետվության մեջ բացահայտվում է պետական ծախսերի այն մասը, որը կատարվում է կենտրոնական կառավարության կողմից: Սահմանվում է ինքնուրույն գործակալությունների կարևորությունը կենտրոնական կառավարության գործառնություններում, քանի որ նրանց գործառնությունները կենտրոնական կառավարության միավորի բյուջեի կառավարման և հաշվապահական հաշվառման համակարգում ընդգրկված չեն: Բացի այդ, հաշվետվությունը տեղեկություններ է տրամադրում այլ մարմինների կողմից կատարված պետական ծախսերի հարաբերական մասնաբաժինների վերաբերյալ:

Հաստատություններ	Մարմինների թիվը	Ընդհանուր պետական ծախսերի %
Կենտրոնական կառավարություն*		
Ինքնուրույն պետական գործակալություններ		
Տեղական կառավարման մարմիններ		

***** Ներառում է նախարարությունները, գերատեսչությունները և ապակենտրոնացված մարմինները:

Բաժին 2. Երկրի վերաբերյալ ելակետային տվյալներ

Սույն բաժնի նպատակն է տեղեկություններ տրամադրել այն երկրի վերաբերյալ, որի ՊՖԿ-ի համակարգը գնահատվում է, որպեսզի դա հնարավորություն տա բավարար չափով հասկանալ ՊՖԿ-ի բարեփոխումների առավել ընդգրկուն վիճակը, ինչպես նաև տվյալ երկրի ՊՖԿ-ի համակարգի առանցքային առանձնահատկությունները:

Այս բաժնի կողմնորոշիչ չափը չորսից հինգ էջ է:

Բաժինը կառուցված է հետևյալ ուղղությամբ և նրանում ներկայացվում են հետևյալ տեղեկությունները.

ԵՆԹԱԲԱԺԻՆ 2. ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երկրի վիճակը. այդ թվում՝ բնակչությունը, եկամտի մակարդակը, աղքատության գծից ներքև գտնվող բնակչության տոկոսը, աճի տոկոսը, գնաճը, տնտեսության կառուցվածքը և զարգացման հիմնական մարտահրավերները:
Կառավարության ընդհանուր բարեփոխումների ծրագիրը, ուշադրությունը կենտրոնացնելով հիմնական հարցերի վրա, որոնք հնարավոր է, որ ազդեցություն ունենան պետական ֆինանսների կառավարման վրա:
ՊՖԿ-ի բարեփոխումների հիմնավորումը կառավարության ընդհանուր բարեփոխումների ծրագրի շրջանակում:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 2.2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն ենթաբաժինների համար տեղեկությունները ստացվում են ֆիսկալ և ծախսային քաղաքականության վերլուծության առկա վերլուծությունից կամ այլ համապատասխան ուսումնասիրություններից:

- ***Ֆիսկալ կատարողական.*** հաշվետվությունը ներառում է վերջին երեք տարիների ընթացքում ֆիսկալ ընդհանուր կարգապահության հիմնական միտումների վերաբերյալ համառոտ մեկնաբանություն, որը հիմնված է հետևյալ աղյուսակում ներկայացած տեղեկությունների վրա: Նրանում նաև համախմբվում են այլ համապատասխան տեղեկություններ, օրինակ՝

ընդհանուր պարտքը:

Կենտրոնական կառավարության բյուջեն (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ)			
	ՖՏ1	ՖՏ2	ՖՏ3
Ընդամենը եկամուտ			
- Սեփական եկամուտ			
- Դրամաշնորհներ			
Ընդհանուր ծախսեր			
- Ոչ տոկոսային ծախսեր			
- Տոկոսային ծախսեր			
Ընդհանուր դեֆիցիտ (այդ թվում դրամաշնորհներ)			
Առաջնային դեֆիցիտ			
Զուտ ֆինանսավորում			
- արտաքին			
- ներքին			

Միջոցների բաշխում. Հաշվետվությունը տեղեկություններ է ներառում միջոցների ճյուղային և, հնարավորության դեպքում, տնտեսագիտական բաշխման միտումների վերաբերյալ: Նրանում նաև տեղեկանք է ներկայացվում ազգային ռազմավարության մեջ (օրինակ՝ ԱՀՌՕ-ու) մարմնավորված գերակայությունների վերաբերյալ և այն մասին, թե ինչպես են բյուջետային հատկացումներն արտացոլում կառավարության գերակայությունները:

Փաստացի բյուջետային հատկացումներն ըստ ոլորտների (տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում)			
	ՖՏ 1	ՖՏ 2	ՖՏ 3
Առողջապահություն			
Կրթություն			
Գյուղատնտեսություն			
և այլն			

Փաստացի բյուջետային հատկացումներն ըստ տնտեսակագիտական դասակարգման (տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում)			
	ՖՏ 1	ՖՏ 2	ՖՏ 3
Ընթացիկ ծախսեր			
- Աշխատողների և ծառայողների աշխատավարձ			
- Ապրանքներ և ծառայություններ			

- Տոկոսագումարների վճարումներ			
- Տրանսֆերտներ			
- Այլ			
Կապիտալ ծախսեր			

Լրացուցիչ տեղեկություններ. օրինակ՝ տեղական մակարդակում հատկացված միջոցների մասնաբաժնի կամ ծառայությունների մատուցման կամ գործառնական արդյունավետության վերաբերյալ տեղեկություններ կավելացվեն, առկայության դեպքում:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 2.3. ՊՖԿ-ի ԻՐԱՎԱԿԱՆ և ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴԱՇՏԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊՖԿ-ի իրավական դաշտը. հաշվետվությամբ նկարագրվում են օրենքների դրույթները, որոնց հիման վրա որոշվում են ՊՖԿ-ի համակարգն ուղղորդող հիմնական կանոնները: Այն կներառի իրավական դաշտում կատարված վերջին փոփոխությունների համառոտ նկարագրություն, եթե տեղին է:

ՊՖԿ-ի ինստիտուցիոնալ դաշտը. հաշվետվությամբ նկարագրվում է ՊՖԿ-ի համակարգում ընդգրկված հիմնական մարմինների պատասխանատվությունը, այդ թվում՝ կառավարման տարբեր մակարդակներում (կենտրոնական կառավարության և տեղական կառավարման մարմիններ), իշխանության տարբեր ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական), ինչպես նաև պետական ձեռնարկությունների կամ կառավարության ինքնուրույն գործակալությունների պատասխանատվությունը: Ողջունելի են ֆինանսների նախարարությունում և ֆինանսների նախարարության և ճյուղային նախարարությունների միջև պետական ֆինանսական կառավարման ընդհանուր պատասխանատվության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները: Կարելի է նշել պատասխանատվության վերջին փոփոխությունները, այդ թվում ծախսերի ապակենտրոնացմանն ուղղված միտումները:

ՊՖԿ-ի համակարգի առանցքային հատկանիշները. հաշվետվությամբ նկարագրվում են ՊՖԿ-ի համակարգի առանցքային հատկանիշները, այդ թվում՝ վճարային համակարգի կենտրոնացվածության աստիճանը կամ արտաքին աուդիտի մարմնի կողմից իրենց իրավասությունների շրջանակում իրականացվող հսկողության տեսակը:

Ներկայացվող տեղեկությունները նկարագրական են և նախատեսված չեն որպես տեղեկանք այն մասին, թե ինչպես են գործող կանոնների պահանջները կատարվում կամ օրենսդիր մարմինը և արտաքին աուդիտն արդյունավետ դեր կատարում: Այդ հարցերը ներառվում են ՊՖԿ-ի համակարգի մանրամասն գնահատականում (բաժին 3):

Բաժին 3. ՊՖԿ-ի համակագրերի, գործընթացների և հաստատությունների գնահատում

Սույն բաժնի նպատակն է ներկայացնել ՊՖԿ-ի համակարգի հիմնական տարրերի գնահատականը, ինչպես այն արտացոլվում է ցուցանիշներով և տեղեկացնել դրանց բարելավման ուղղությամբ արձանագրված առաջընթացի մասին:

Բաժինը հետևյալ կառուցվածքն ունի.

3.1. Բյուջեի հավաստիություն
3.2. Համապարփակություն և թափանցիկություն
3.3. Քաղաքականություն և բյուջետավորում
3.4. Կանխատեսելիություն և հսկողություն բյուջեի կատարման մեջ
3.5. Հաշվապահական հաշվառում, գրանցում և հաշվետվություններ
3.6. Արտաքին ուսումնասիրում և աուդիտ
3.7 Դոնորների փորձ
3.8. Երկրին բնորոշ հարցեր (անհրաժեշտության դեպքում)

Այս բաժնի կողմնորոշիչ չափը տասնութից քսան էջ է:

Ենթաբաժիններ 3.1-ից 3.7

Յուրաքանչյուր ենթաբաժնում քննարկվում են համապատասխան ցուցանիշները: Օրինակ՝ համապարփակության և թափանցիկության վերաբերյալ 3.2 ենթաբաժնում ներկայացվում են 5-10 ցուցանիշները: Հաշվետվության կազմվում է ըստ ցուցանիշների հերթականության:

Ցուցանիշներից յուրաքանչյուրի վերաբերյալ քննարկման մեջ **տարբերակվում է ներկա իրավիճակի գնահատականը (ցուցանիշների վերլուծության արդյունքների հիման վրա) և բացահայտված թույլ կողմերին անդրադառնալու համար ներդրվող բարեփոխման միջոցառումների նկարագրությունը:** Ցուցանիշի վրա հիմնված գնահատականը և առաջընթացի վերաբերյալ ներկայացվող տեղեկություններն առանձնացվում են երկու տարբեր պարբերություններում, որպեսզի ներկա իրավիճակի և բարեփոխումների ուղղությամբ իրականացվող քայլերի առումով շփոթություն չառաջանա:

Ցուցանիշների վերլուծության արդյունքների վերաբերյալ տեղեկացնելը

Ցուցանիշների վերլուծության արդյունքների վերաբերյալ տեղեկացվում է հետևյալ կերպ.

- Տեքստը հստակ պատկերացում է տալիս **ցուցանիշներում արտացոլվող ՊՖԿ-ի չափումներից յուրաքանչյուրի մասով փաստացի կատարողականի և** դրա գնահատականի հիմնավորման վերաբերյալ: Ցուցանիշի յուրաքանչյուր չափում քննարկվում է տեքստում և դրան անդրադարձ է կատարվում այնպես, որ հնարավորություն է տալիս հասկանալ չափման կոնկրետ մակարդակը (A, B, C կամ D):
- Հաշվետվությամբ ներկայացվում են փաստացի տվյալներ (այդ թվում՝ թվային), որոնք օգտագործվել են գնահատականի հիմնավորման համար: Հնարավոր դեպքերում տեղեկությունները կոնկրետ են (օրինակ՝ թվային տվյալների, ժամկետների և ժամանակահատվածների առումով):
- Նշվում են **տվյալների կամ փաստերի ժամկետայնությանը կամ հուսալիությանն** առնչվող ցանկացած խնդիրներ:
- Եթե ամբողջ ցուցանիշի կամ դրա չափումներից մեկի վերաբերյալ **տեղեկություններ չկան,** տեքստում պետք է այդ մասին հստակ նշվի: Եթե անգամ չափումներից մեկի վերաբերյալ տեղեկատվության բացակայության պայմաններում գնահատումն այնուհանդերձ հնարավոր է համարվում, ապա գնահատման հիմնավորումը պետք է հստակ կերպով նշվի:
- Յուրաքանչյուր ցուցանիշի վերաբերյալ քննարկման վերջում, **աղյուսակում** նշվում է գնահատումը՝ տալով դրա համառոտ բացատրությունը:

Որպես ցուցանիշի գնահատականի լրացում, ցուցանիշի թեմաներից յուրաքանչյուրի մասով ներկայացվում են առաջընթացի վերաբերյալ տեղեկություններ[13] (եթե տեղին է, այսինքն՝ եթե վերջերս իրականացվել են

[13]ՊՖԿ-ի համակարգի կատարողականի մակարդակը, ինչպես արտահայտվում է ցուցանիշների միջոցով, արտացոլում է պատմական, քաղաքական, ինստիտուցիոնալ և տնտեսական գործոններ և պատրաստիր չէ, որ ներկայացնի **կառավարության կողմից ՊՖԿ-ի կատարողականի բարելավմանն ուղղված վերջին կամ ներկա ջանքերը:** Ցուցանիշների գնահատականների բարելավման համար կարող է մի քանի տարի պահանջվել՝ հաշվի առնելով բարձր մակարդակի ցուցանիշների համար չորս աստիճանի սանդղակը: Դա է

կամ ներկայումս իրականացվում են բարեփոխումներին ուղղված միջոցառումներ): Նպատակն է արտացոլել երկրի բարեփոխումների դինամիկան՝ միևնույն ժամանակ պահպանելով ընթացող փոփոխությունների գնահատման բավարար ճշտությունը:

Առաջընթացի վերաբերյալ ներկայացվող տեղեկությունները հիմնված են **փաստացի տվյալների վրա և սևեռվում են՝**

(i) **ՊՖԿ-ի համակարգի կատարողականի փոքր բարելավումների վրա, որոնք ցուցանիշների միջոցով չեն արտացոլվում.**
Օրինակ՝

- Ցուցանիշ 4 (ծախսերի վճարման գծով ընդհանուր ապառքներ և մոնիտորինգ): Առաջին տարում որևէ երկիր այս ցուցանիշի գծով B է գնահատվել, մասամբ այն պատճառով, որ ընդհանուր ապառքները կազմել են 7 տոկոս, իսկ մասամբ էլ այն ջանքերի շնորհիվ, որ վերջերս իրականացվել են ընդհանուր պարտքերը կրճատելու ուղղությամբ: Երրորդ տարում, ընդհանուր պարտքի ցուցանիշը կազմում է 3 %: Ցուցանիշի գնահատականը մնում է B, սակայն հաշվետվության մեջ պետք է արձանագրվի ընդհանուր պատքի նվազեցման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը:

- Ցուցանիշ 12 (ֆիսկալ ծրագրման, ծախսերի քաղաքականության և բյուջետավորման բազմամյա հեռանկար). առաջին տարում տվյալ երկրի տասը ոլորտային ռազմավարություններից երկուսի ծախսերը լիարժեք գնահատված են: Երկու ոլորտները միասին ներկայացնում ընդհանուր առաջնային ծախսերի 35%-ը: Երրորդ տարում գնահատվում են ևս մեկ ոլորտի ռազմավարության ծախսերը: Ոլորտը ընդհանուր առաջնային ծախսերի 10%-ն է կազմում: Գրանցված առաջընթացը ցուցանիշի գնահատականի վրա չի ազդում, սակայն կատարողականի բարելավման ուղղությամբ արձանագրված առաջընթացի մասին հաշվետվության մեջ պետք է նշվի:

(ii) **Մինչ օրս ներկայացված բարեփոխումները, որոնք դեռևս ՊՖԿ-ի համակարգի կատարողականի վրա ազդեցություն չեն ունեցել կամ որոնց համար ՊՖԿ-ի համակարգի կատարողականի վրա դրանց ազդեցության մասին փաստեր չկան:**
Օրինակ՝

- Ցուցանիշ 21 (ներքին աուդիտի արդյունավետությունը). առաջին տարում տվյալ երկիրը այս ցուցանիշի գծով D է գնահատվել, քանի որ ներքին աուդիտի գործառույթը բացակայում էր: Երրորդ տարում ֆինանսների նախարարությունում ստեղծվում է ներքին աուդիտի վարչություն, սակայն այն դեռ շատ թույլ է: Բարեփոխումը՝ ներքին

պատճառը, որ ՊՖԿԿՀ-ն որոշ տեղեկություններ է ներկայացնում ՊՖԿ-ի կատարողականի բարելավման ուղղությամբ արձանագրված առաջընթացի վերաբերյալ, ինչպես արտացոլվում է ցուցանիշների միջոցով:

աուդիտի վարչության ստեղծումը, դեռևս ՊՖԿ-ի համակարգի կատարողականի վրա ազդեցություն չի ունեցել, սակայն դա պետք է նշվի հաշվետվության մեջ:

- Ցուցանիշ 19 (գնումներում մրցակցություն, արժեք դրամի դիմաց և հսկողություն): Մեկ տարի առաջ գնումների մասին նոր օրենք է ընդունվել, սակայն դրանից հետո դեռ վերլուծություն չի կատարվել, որպեսզի գնահատվի բաց մրցույթների անցկացման ազդեցությունը պայմանագրերի շնորհման և այլ գործընթացների վրա: Քանի որ նոր օրենսդրության ազդեցության վերաբերյալ փաստեր չկան, ցուցանիշի գնահատականը պետք է հիմնված լինի գնումների գործելակերպերի վերաբերյալ ամենավերջին փաստերի վրա, այսինքն՝ մինչև նոր օրենսդրության ընդունումը: Հաշվետվության մեջ պետք է նշվի գնումների մասին նոր օրենքի առկայության և դրա ազդեցությունը գնահատելու մասին հավաքագրված փաստերի բացակայության վերաբերյալ:

Կառավարության բարեփոխումների ծրագրերին անդրադարձը կամ միջազգային ֆինանսական հաստատությունների կամ դոնորների կողմից ընտրված նախապայմանները (այսինքն՝ բարեփոխումների միջոցառումները, որոնք դեռ պետք է իրականացվեն) առաջընթացը ցուցանող բավարար փաստ են համարվում:

Կարելի է միավորի կողքին **դեպի վեր ուղղված սլաք** դնել (օրինակ՝ **D▲)** առաջընթացը ցույց տալու համար, սակայն դրա կիրառումը սահմանափակվում է միայն վերոնշյալ առաջին և երկրորդ կետերում նկարագրված դեպքերով՝ (i) ՊՖԿ-ի կատարողականի փոքր բարելավումներ, որոնք ցուցանիշների միջոցով չեն արտացոլվում և (ii) մինչ օրս ներկայացված բարեփոխումներ, որոնք դեռևս ՊՖԿ-ի համակարգի կատարողականի վրա ազդեցություն չեն ունեցել կամ որոնց ՊՖԿ-ի համակարգի կատարողականի վրա ունեցած ազդեցության մասին վկայող փաստեր չկան:

Ենթաբաժին 3.8

ՊՖԿ ԿՀ-ն տեղեկություններ է ներկայացնում **երկրներին բնորոշ խնդիրների վերաբերյալ,** որոնք անհրաժեշտ են ՊՖԿ կատարողականի համակարողման պատկերը ստանալու համար և որոնք ցուցանիշների միջոցով ամբողջովին չեն արտացոլվում: Այս ենթաբաժինը հիմնված է առկա տեղեկությունների վրա: Ստորև ներկայացվում են երկրների բնորոշ նման հարցերի օրինակներ.

1) Տեղական կառավարման մարմիններ

Կատարողական ցուցանիշներն արտացոլում են տեղական կառավարման մարմինների խնդիրները՝ միջ-կառավարական ֆիսկալ հարաբերությունների հստակության (PI-8), ֆիսկալ ռիսկերի վերահսկողության համակողմանիության (PI-9) առումով և թե որքանով են

ծախսող նախարարությունները և նրանց գերատեսչությունները ի վիճակի ծրագրել և ծախսեր ստանձնել բյուջեների և աշխատանքային ծրագրի համապատասխան (PI-16): Երկրներում, որտեղ ծախսերի զգալի մասը կատարվում է տեղական կառավարման մակարդակում և եթե առկա են տեղեկություններ, ՊՖԿ-ԿՀ-ն որոշ տեղեկություններ է ներկայացնում տեղական մակարդակում ՊՖԿ-ի կատարողականի մասին: Սակայն այս բաժնում տեղական մակարդակում կատարված որևէ գնահատման փոխարինելու փորձ չի արվում:

2) Պետական ձեռնարկություններ

Կատարողական ցուցանիշներն արտացոլում են պետական ձեռնարկություններին առնչվող հարցեր՝ ընդհանուր ֆիսկալ ռիսկի վերահսկողության համակողմանիության (PI-9) առումով: Այս կազմակերպությունների կարևորությամբ պայմանավորված՝ ՊՖԿ-ի համակարգի համակողմանի նկարագրի համար կարող է պահանջվել կենտրոնական կառավարության և այդ կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների նկարագրությունը կամ ՊՖԿ-ի տեսանկյունից այդ կազմակերպությունների կատարողականը, որքանով, որ առկա են տեղեկություններ:

3) Բնական ռեսուրսներով հարուստ երկրներում եկամուտների կառավարումը

Բնական ռեսուրսներից ստացվող եկամուտները կարող են եկամտի կարևոր աղբյուր հանդիսանալ որոշ երկրների համար և կարող են ենթակա լինել որոշակի ֆինանսական կառավարման մեխանիզմների: Նման դեպքերում այս բաժնում պետք է ներկայացվի նման մեխանիզմների կատարողականի նկարագրությունը:

4) ՊՖԿ-ի կատարողականի համակողմանի պատկերը ստանալու համար անհրաժեշտ ցանկացած այլ հարցեր

Բաժին 4. Կառավարության բարեփոխումների գործընթացը

Սույն բաժնի նպատակն է նկարագրել կառավարության կողմից ՊՖԿ-ի կատարողականի բարելավման ուղղությամբ արձանագրած առաջընթացը և ապագային միտված որոշ տեսակետներ ներկայացնել այն գործոնների վերաբերյալ, որոնք հնարավոր է, որ ազդեցություն ունենան հետագա բարեփոխումների ծրագրման, իրականացման և մոնիտորինգի վրա:

Այս բաժնի կողմնորոշիչ չափը մոտավորապես երկուսից երեք էջ է:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 4.1. ՎԵՐՋԻՆ ԵՎ ԸՆԹԱՑՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենակարևոր վերջին և ընթացող բարեփոխումները համառոտ ձևով ամփոփվում են (քանի որ այդ գործոնների մանրամասն նկարագրությունը կատարվում է բաժին 3-ում)՝ ՊՖԿ-ի համակարգի հզորացման ուղղությամբ կառավարության արձանագրած հիմնական առաջընթացի ուղղությունը ներակայացնելու համար:

ԵՆԹԱԲԱԺԻՆ 4.2. ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐԱԳՐՄԱՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Հաշվետվության այս մասում ներկայացվում են ապագային միտված տեսակետներ այն մասին, թե ինչքանով է հավանական, որ **ինստիտուցիոնալ գործոններն** օժանդակեն բարեփոխումների ծրագրման և իրականացման գործընթացին:

Հետևյալ հատվածում նշվում են որոշ գործոններ, որոնք հավանական է, որ շատ երկրների դեպքում բարեփոխումների արդյունավետ գործընթացին օժանադակելու հարցում տեղին լինեն: Յուրաքանչյուր դեպքում ՊՖԿ-ԿՀ հաշվի է առնում բարեփոխումների վերջին և ներկա փորձը և բացահայտում, ըստ անհրաժեշտության, երկրների բնորոշ լրացուցիչ գործոններ, ինչպես առաջարկում է ստորև:

- **Կառավարության ղեկավարումն ու պատասխանատվությունը** հավանական է, որ նպաստեն ՊՖԿ բարեփոխումների առավել արդյունավետ գործընթացի ապահովմանը՝ սահմանելով բարեփոխումների նպատակները, ուղղությունը և ընթացքը, հստակեցնելով բարեփոխումների գործընթացի մասով կազմակերպական պատասխանատվությունը և ցանկացած փոփոխության նկատմամբ դիմադրությանը ժամանակին արձագանքելով: Կարելի է դիտարկել բարեփոխումների գործընթացում քաղաքական ներգրավվածության մակարդակը և բնույթը, թե ինչ չափով է կառավարությունը ՊՖԿ-ի բարեփոխումների վերաբերյալ համոզիչ փաստարկներ ներկայացնում, պետական փաստաթղթերում կառավարության տեսլականի ներկայացումը (ԱՀՌՕ-ներ, կոնկրետ ՊՖԿ ռազմավարություն կամ գործողությունների ծրագրերի և այլն) և կառավարության կողմից ՊՖԿ բարեփոխումներին ուղղվող միջոցների չափը: Կարող են ներառվել խաչաձև հղումներն այն հարցին, թե արդյոք բարեփոխումների գործընթացն առաջ է ընթանում ըստ կառավարության ծրագրերի, եթե տեղին համարվի:

- **Համակարգումը կառավարությունում** հնարավոր է, որ նպաստի ըստ առաջնահերթության և հաջորդականության դասակարգված բարեփոխումների առավել լավ ծրագրի կազմմանը, քանի որ տարբեր մարմիններում և կառավարության օղակներում առկա կարողությունները հաշվի են առնվում բարեփոխումների ծրագրման և իրականացման ժամանակ: Համակարգման մեխանիզմների առկայությունը գնահատելիս՝ պետք է դիտարկել, թե որքանով են համապատասխան մարմինները,

հատկապես ճյուղային նախարարությունները, բարեփոխումների վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգրավվում, այնպիսի մեխանիզմների առկայությունը, որոնք ապահովում են ժամանակին որոշումների ընդունումը, հատկապես կոմպլեքսային բարեփոխումների մասով, բարեփոխումների իրականացման հարցում դերերի և պատասխանատվության հստակությունը և կառավարությունում ՊՖԿ-ի բարեփոխումների համակարգման համար պատասխանատու օղակի առկայությունը: ՊՖԿ-ի բարեփոխումների գործընթացում խորհրդարանի և արտաքին աուդիտի համագործակցությունը ևս կարող է դիտարկվել, երբ տեղին լինի:

- ՊՖԿ-ի բարեփոխումների ազդեցությունը հավանական է, որ պայմանավորված լինի նրանով, թե որքանով են գործող մեխանիզմներն օժանդակում **բարեփոխումների կայուն գործընթացի:** Այս համատեքստում կարող է դիտարկվել, թե որքանով է բարեփոխումների գործընթացը թելադրվում կառավարության փորձագետների և տեխնիկական աջակցության կողմից, արդյոք բարեփոխումներին կից իրականացվում են կարողությունների ստեղծման համակողմանի ծրագրեր և դիտարկվում է վերապատրաստված կադրերին պահելու հարցը: Ընթացիկ ծախսերի ֆինանսավորման վերաբերյալ ցանկացած տեղեկություններ, որոնք ի հայտ են գալիս բարեփոխումների իրականացման արդյունքում, կարող են ևս ներառվել, եթե տեղին են:

Այդ ինստիտուցիոնալ գործոնների գնահատումը հնարավորին չափ հիմնավորված է փաստերով և կառավարության ծրագրերի կամ պարտավորությունների վրա չի հիմնվում: **Հաշվետվության մեջ առաջարկություններ չեն կատարվում** կառավարության բարեփոխումների ծրագրի վերաբերյալ և չի ներառվում դատողություն այն մասին, թե արդյոք կառավարության բարեփոխումների ծրագրում ՊՖԿ-ի թույլ կողմերին ճիշտ անդրադարձ է կատարվում կամ արդյոք առաջարկվող բարեփոխումների միջոցառումները բավարար են:

ՊՖԿ-ԿՀ Հավելված 1

Սույն հավելվածում ներկայացվում է կատարողական ցուցանիշների ամփոփ աղյուսակը: Աղյուսակում նշվում ցուցանիշներից յուրաքանչյուրի համար նշանակված գնահատականը, գնահատականի համար հակիրճ բացատրությամբ:

Ցուցանիշ	Գնահատական	Համառոտ բացատրություն և օգտագործված հիմնական տվյալներ
Օրինակ		
1. Ընդհանուր փաստացի ծախսային արդյունքների համեմատությունը հաստատված սկզբնական բյուջեի հետ	B	Փաստացի առաջնային ծախսերը (առանց դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի) 2003թ.-ին սկզբում բյուջեով նախատեսված ծախսերից 8 տոկոսով ցածր էր, իսկ 2002թ. և 2004թ. ծախսերը բյուջեով նախատեսվածից ցածր էին համապատասխանաբար 4% և 3%-ով:
2.		

ՊՖԿ-ԿՀ Հավելված 2

Հավելվածում նշվում են առկա ողջ վերլուծական նյութերը, որ օգտագործվել են ՊՖԿ-ի կատարողական հաշվետվությունը մշակելու համար: Օրինակների թվում կարող են ներառվել կառավարության հաշվետվությունները, երկրի ֆինանսական հաշվետվողականության գնահատումները, պետական ծախսերի ուսումնասիրությունները, երկրի գնումների գնահատման հաշվետվությունները, աուդիտի հաշվետվությունները և այլն:

Առդիր 1. Բաց և կանոնավոր ՊՖԿ համակարգի վեց չափումների բյուջետային արդյունքների երեք մակարդակների միջև կապերը

(աղյուսակն օգտագործելու համար տե՛ս էջ 83-ը)

	Ընդհանուր ֆիսկալ կարգապահություն	**Ռեսուրսների ռազմավարական տեղաբաշխում**	**Ծառայությունների արդյունավետ մատուցում**
Բյուջեի հավաստիություն	*Որպեսզի բյուջեն ծառայի որպես քաղաքականության իրականացման գործիք, անհրաժեշտ է, որ այն լինի իրատեսական և իրականացվի այնպես, ինչպես ընդունվել է:*		
Բյուջեն իրատեսական է և իրականացվում է ըստ նախատեսվածի	Հավաստիության պակասն ավելացնում է **դեֆիցիտի ծրագրային ցուցանիշը չապահովելու կամ ապառքների մակարդակի բարձրացման** հավանականությունը: Սա կարող է առաջանալ եկամուտների չափազանց լավատեսական կանխատեսումների և ոչ հայեցողական ծախսերը (կոմունալ ծախսեր, աշխատավարձեր, փոխհատուցման վճարումներ) բյուջեում թերի նախատեսելու հետևանքով: Դա կարող է առաջանալ նաև բյուջեի կատարման հարցում անհամապատասխանության հետևանքով (օրինակ՝ եկամուտների արտահոսք կամ բյուջեում չնախատեսված ծախսեր):	Բյուջեի հավաստիության բացակայության հետևանքով կարող է նաև **առաջնահերթ ծախսերի համար ֆինանսական միջոցների պակաս առաջանալ**: Դա կարող է առաջանալ ոչ բավարար եկամուտների հետևանքով ծախսերի առավելագույն սահմանը կրճատելու, քաղաքականության գերակայությունների կամ միջոցների օգտագործման հարցում անհամապատասխանության հետևանքով:	Ճշգրտումները կարող են անհամամասնորեն բաշխվել **ոչ աշխատավարձային ընթացիկ ծախսերի** վրա, որոնք հավանական է, որ էական ազդեցություն ունենան ծառայությունների մատուցման մակարդակում օգտագործված միջոցների արդյունավետության վրա: Բյուջեի հետ անհամապատասխանությունը կարող է **ծախսերի կատեգորիաներում փոփոխություն** առաջացնել՝ ծառայությունների մատուցման արդյունավետության փոխարեն արտացոլելով անհատական նախասիրություններ:
Համապարփակություն և թափանցիկություն	*Բյուջեի համապարփակությունն անհրաժեշտ է ապահովելու համար, որ կառավարության բոլոր աշխատանքները և գործառնությունները իրականացվեն կառավարության ֆիսկալ քաղաքականության շրջանակներում և դրանց նկատմամբ կիրառվեն բյուջետային կառավարման և հաշվետվությունների*		

	ներակայացման համարժեք մեխանիզմներ: Թափանցիկությունը կարևոր ինստիտուտ է, որը հնարավորություն է տալիս իրականացնել կառավարության քաղաքականության և ծրագրերի և նախագծերի և դրանց իրականացման արտաքին ուսումնասիրում:		
Բյուջետային և ֆիսկալ ռիսկի վերահսկողությունը համապարփակ է, իսկ ֆիսկալ և բյուջետային տեղեկատվությունը հասանելի է հանրությանը	Միջոցառումները, որոնք **համարժեք բյուջետային գործընթացների միջոցով** չեն կառավարվում կամ չեն զեկուցվում, քիչ հավանական է , որ ենթարկվեն նույն ուսումնասիրմանն ու հսկողությանը, ինչպես բյուջեում ընդգրկված գործառնությունները: Դա ավելացնում է այն ռիսկը, որ այդ միջոցառումներն իրականացում են առանց անդրադառնալու կառավարության կողմից որոշված **ֆիսկալ ծրագրային ցուցանիշներին** և որ այդ դրանց առնչվող հավանական ռիսկերը հաշվի չեն առնվում՝ դրանով իսկ ավելացնելով դեֆիցիտը գերազանցելու և կառավարության համար ոչ կայուն պարտավորությունների ձևավորման վտանգը: Թափանցիկության բացակայությունը սահմանափակում է ֆիսկալ կարգապահության պահպանման և ֆիսկալ ռիսկերի կառավարման գծով կառավարության կատարողականի	Ռազմավարական բաշխումն ամրապնդվում է, եթե բյուջեի նախապատրաստման ընթացքում **բոլոր պահանջները միմյանց հետ մրցակցում են** թափանցիկ ձևով: Արտաբյուջետային միջոցները և մասնավորապես որոշակի նպատակային ծրագրերի համար միջոցների նախատեսումը հավանական է, որ ազդեն՝ կառավարության գերակայությունների համապատասխան ռազմավարական ծրագրման արդյունավետության վրա: Թափանցիկության բացակայությունը սահմանափակում է կառավարության հրապարակած գերակայություններին համապատասխան միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը: Դա սահմանափակում է **օրենսդիրի, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների** կարողությունները՝ գնահատելու, թե որքանով է կառավարությունն իրականացնում իր	Համապարփակության բացակայությունը հավանական է, որ ավելացնի **միջոցների վատնումը և նվազեցնի ծառայությունների մատուցումը:** Այն սահմանափակում է տարբեր ծրագրերի և նրանց ուղղվող միջոցների արդյունավետության և օպերատիվության ուսումնասիրության հարցում մրցակցությունը: Այն կարող է նաև նպաստել հովանավորչության կամ կոռումպացված գործելակերպերի ձևավորմանը՝ սահմանափակելով գործառնությունների, ծախսերի և գնումների գործընթացների ուսումնասիրությունը, որոնք ինտեգրված չեն բյուջետային կառավարման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներում: Թափանցիկության բացակայությունը սահմանափակում է ծառայություններ մատուցող

	վերաբերյալ տեղեկությունների մատչելիությունը: Օրինակ՝ ոչ ամբողջական կամ անժամանակ ֆինանսական հաշվետվությունների հետևանքով **ֆինանսական շուկաների կողմից** ուսումնասիրումը սահմանափակ է լինում:	քաղաքականության գերակա խնդիրները:	միավորների համար մատչելի միջոցների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը: Սա թուլացնում է **տեղական համայնքների** կարողությունները՝ ծառայություններ մատուցող միավորներին հատկացված և օգտագործված միջոցների որևէ ուսումնասիրություն կատարելու հարցում:
Քաղաքականության և բյուջետավորում **Բյուջեն կազմվում է պատշաճ կերպով հաշվի առնելով կառավարության քաղաքականությունը**	*Քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման գործընթացը կառավարությանը հնարավորություն է տալիս միջոցների օգտագործումը ծրագրել իր ֆիսկալ քաղաքականության և ազգային ռազմավարությանը համապատասխան:*		
	Ծրագրման թույլ գործընթացը կարող է հանգեցնել այնպիսի բյուջեի, որը կառավարության սահմանած ֆիսկալ և մակրոտնտեսական շրջանակից շեղվում է: Մասնավորապես կառավարության կողմից սահմանափակ մասնակցությունը կարող է բյուջեի վերջնական քննարկումներում նվազեցնել ֆիսկալ ծրագրային ցուցանիշների կշիռը: **Ֆիսկալ որոշումների միջնաժամկետ հետևանքերի** սահմանափակ ինտեգրումը (ծախսերի և եկամուտների որոշումները, երաշխիքների և փոխհատուցման ծրագրերի	**Ելուզային նախարարությունների կողմից մասնակցության պակասը, կառավարության սահմանափակ ներգրավվածությունը կամ քաոսային բյուջետային գործընթացը** հավանական է, որ սահմանափակի ընդհանուր միջոցները տեղաբաշխումը կառավարության գերակայությունների համապատասխան և ավելացնի ժամանակավոր որոշումների ընդունման հավանականությունը: **Միջնաժամկետ հեռանկարների բացակայությունը** կարող է խաթարել միջոցների տեղաբաշխման վերաբերյալ որոշումները, քանի որ տարեկան բյուջեի ընդգրկած	Բյուջետային թերի գործընթացը թույլ չի տալիս **քննարկումներ ունենալ միջոցների օգտագործման արդյունավետության վերաբերյալ:** Մասնավորապես այն թույլ չի տալիս իրականացնել գործող քաղաքականության և քաղաքականության նոր նախաձեռնությունների կանոնավոր ուսումնասիրություն: **Մեկից ավելի տարիների կտրվածքով հեռանկարի բացակայությունը** կարող է նպաստել ներդրումային որոշումների ընթացիկ ծախսերի և մեկից ավելի տարիների կտրվածքով գնումների համար

	հաստատումը և այլն) տարեկան բյուջեի գործընթացում կարող են հանգեցնել ոչ կայուն քաղաքականության:	ժամանակահատվածը չափազանց կարճ է ծախսային հատկացումներում էական փոփոխությունների կատարման համար, ուստի նոր քաղաքականության նախաձեռնության ծախսերը կարող են սիստեմատիկաբար թերագնահատվել:	ֆինանսավորման ոչ բավարար ծրագրմանը:
Կանխատեսելիություն և վերահսկողություն բյուջեի կատարման մեջ **Բյուջեն իրականացվում է կարգավորված և կանխատեսելի ձևով և առկա են պետական միջոցների օգտագործման նկատմամբ հսկողության իրականացման և կառավարման մեխանիզմներ**	*Կանխատեսելի և վերահսկելի ձևով բյուջեի կատարումն անհրաժեշտ է քաղաքականության և ծրագրերի իրականացման արդյունավետ կառավարումն իրականացնելու համար:*		
	Բյուջեի կատարման հարցում կարգավորված մոտեցման բացակայությունը, ինչպես օրինակ կանխիկ միջոցների ներհոսքերի, իրացվելիության և արտահոսքերի վատ համապատասխանեցումը կարող է **խաթարել ֆիսկալ կառավարումը,** օրինակ՝ հանգեցնելով անհարկի տոկոսների գանձման կամ մատակարարների գների բարձրացման: Բյուջեի ոչ կարգավորված իրականացումը դժվարացնում է բյուջեի ընդհանուր ցուցանիշներում տարվա ընթացքում **համապատասխան ճշգրտման կատարումը՝** ֆիսկալ շրջանակին համապատասխան, քանի որ հավանական է, որ	Բյուջեի ոչ կարգավորված կատարումը կարող է հանգեցնել **չնախատեսված վերաբաշխումների,** քանի որ դրա հետևանքով միջոցները կարող են ուղղվել պակաս առաջնահերթ հոդվածների և գերակա խնդիրների համար մատչելի միջոցները կնվազեն: Հսկողության թույլ մեխանիզմները կարող են **չլիազորված ծախսերի և կեղծ վճարումների** հնարավորություն տալ և դրա հետևանքով հանգեցնել միջոցների այնպիսի օգտագործման, որը զգալի տարբերվում է սկզբնական հատկացումներից:	Միջոցների հոսքերի հարցում կանխատեսելիության բացակայությունը խաթարում է հաճախորդներին ծառայություններ մատուցողների կողմից **սահմանված ժամկետում և արդյունավետ կերպով միջոցները ծրագրելու և օգտագործելու հնարավորությունը:** Դա կարող է նաև նպաստել այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ հսկողության շրջանցումը սովորույթ է դարձել: Ապրանքների և ծառայությունների համար գնումների **մրցակցային մրցութային գործընթացի գործելակերպեր չպահպանելը** հնարավոր է, որ սահմանափակի գործող ծրագրերի

	տեղեկությունները անբավարար լինեն, իսկ որոշումների իրականացումն առավել դժվար: Հսկողության թերի մեխանիզմները կարող են թույլ տալ բյուջեն **գերազանցող ծախսեր (այդ թվում աշխատավարձի ֆոնդ) կամ եկամտի արտահոսք,** որի հետևանքով դեֆիցիտը, պարտքի մակարդակը կամ ապառքները կավելանան:		արդյունավետությունը՝ ապրանքների գնման ծախսերն ավելացնելու կամ ոչ բավարար որակի ապրանքների մատակարման հանգեցնելու միջոցով: Աշխատավարձերի վճարացուցակների, գնումների և ծախսերի ընթացակարգերի ոչ համարժեք հսկողության հետևանքով **կոռումպացված գործելակերպերի, արտահոսքերի և հովանավորչության հնարավորություններ կստեղծվեն:**
Հաշվապահական հաշվառում, գրանցումների վարում և հաշվետվություններ **Պատրաստվում, պահվում և տրամադրվում են բավարար գրանցումներ և տեղեկություններ՝ որոշումների կայացման գծով հսկողության, կառավարման և հաշվետվությունների ներկայացման նպատակներով**	*Բոլոր ֆիսկալ և բյուջեի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներին օժանդակելու համար պահանջվում են ժամանակին, տեղին և հուսալի ֆինանսական տեղեկություններ:*		
	Եկամուտների կանխատեսման և հավաքագրումների, իրացվելիության առկա մակարդակների և ծախսային հոսքերի վերաբերյալ ժամանակին և բավարար տեղեկությունների բացակայությունը **սահմանափակում է բյուջեի ընդհանուր ցուցանիշները որոշելու և հսկելու կառավարության կարողությունները:** Անհրաժեշտ են նաև	Ծրագրերի ծախսերի և միջոցների օգտագործման վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը **կխաթարի միջոցները** կառավարության գերակայություններին **ուղղելու** կարողությունը: Բյուջեի կատարման վերաբերյալ կանոնավոր տեղեկությունները հնարավորություն են տալիս միջոցների օգտագործման նկատմամբ մոնիտորինգ իրականացնել, սակայն նաև խթանում է խոչընդոտների և խնդիրների բացահայտումը, որոնք կարող են կատարված	Տեղեկությունների բացակայությունն այն մասին, թե ինչպես են ծառայությունների մատուցման համար միջոցները տրամադրվել և օգտագործվել հավանական է, որ **խաթարի ծառայությունների ծրագրումն ու կառավարումը:** Ոչ բավարար տեղեկությունների ու գրանցումների պատճառով կպակասեն այն փաստերը, որոնք անհրաժեշտ են **միջոցների օգտագործման նկատմամբ արդյունավետ**

	տեղեկություններ պարտքի մակարդակների, երաշխիքների, պայմանական պարտավորությունների և ներդրումային նախնական ծախսերի վերաբերյալ, որպեսզի դրանք հնարավորություն տան կառավարում իրականացնել երկարաժամկետ հատվածում ֆիսկալ կայունության և քաղաքականության մատչելիության ապահովման համար:	բյուջեում էական փոփոխությունների հանգեցնել:	**աուդիտի և վերահսկողության համար** և կարող են արտահոսքի, գնումների կոռումպացված գործելակերպերի կամ միջոցները չնախատեսված ձևով օգտագործելու հնարավորություն տալ:
Արդյունավետ արտաքին ուսումնասիրում և աուդիտ **Գործում են պետական ֆինանսների ուսումնասիրման և գործադիրի կողմից դրա արդյունքները վերահսկելու մեխանիզմներ:**	*Օրենսդիրի կողմից և արտաքին աուդիտի միջոցով արդյունավետ ուսումնասիրումն այն գործոնն է, որը հնարավորություն է ստեղծում կառավարության հաշվետու լինել իր ֆիսկալ և ծախսային քաղաքականության և դրանց իրականացման համար:*		
	Կառավարության մակրոտնտեսական քաղաքականության և դրա իրականացման **սահմանափակ ուսումնասիրումը** կարող է երկարաժամկետ ֆիսկալ կայունության հարցերը դիտարկելու և իր ծրագրային ցուցանիշները պահպանելու առումով կառավարության վրա ճնշումը թեթևացնել:	**Սահմանափակ ուսումնասիրումը** հավանական է, որ կթեթևացնի կառավարության վրա ճնշումն իր հռչակած քաղաքականությանը համապատասխան բյուջետային հատակացումներ կատարելու և բյուջեն կատարելու համար:	**Սահմանափակ ուսումնասիրումը** կարող է միջոցներն արդյունավետ և ըստ կանոնների կառավարելու համար կառավարության պատասխանատվության չափը կրճատել, առանց որի ծառայությունների արժեքը հավանական է, որ փոքրանա: Բացի այդ, անբավարար աուդիտը ենթադրում է, որ հաշվապական հաշվառումն ու միջոցների օգտագործումը մանրամասն ուսումնասիրության և ստուգման չեն ենթարկվում:

(աղյուսակն օգտագործելու համար տե՛ս էջ 83-ը)